ԹԱՄԱՐԱ ԹՈՎՄԱՍՅԱՆ

7 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մեթոդական ուղեցույց

Թամարա Թովմասյան

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

7

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
հրատարակչություն

Երևան 2023

Նախաբան

Սիրելի՛ ուսուցիչ

Կրթական բարեփոխումների արդյունքում հաստատվել են Հանրակրթության պետական չափորոշիչը և նոր ծրագրերը: Չափորոշչի և գրականության ծրագրի պահանջներին համապատասխան՝ մեր կողմից (Թ. Թովմասյան և ուրիշներ) կազմվել է «Գրականություն 7» դասագիրքը, որն ավանդականից որոշակիորեն տարբերվող կառուցվածք ունի:

Մեթոդական ուղեցույցի նպատակն է՝ 7-րդ դասարանի գրականության ուսուցիչներին ուղղորդել ճիշտ աշխատելու դասագրքով:

Ծրագրին համապատասխան՝ դասագիրքը բաղկացած է երեք թեմատիկ բաժիններից՝ «Բանաստեղծություն», «Պատմվածք», «Ինքնակենսագրական վեպ»: Յուրաքանչյուր բաժնում ընդգրկված են հայ դասական և ժամանակակից գրողների լավագույն գործերը: Բացի հիմնական ուսումնական նյութերից, դասագրքում ներառված են ծրագրով նախատեսված հայ և արտասահմանյան գրողների այլ բնագրեր՝ լրացուցիչ նյութեր:

Դասագրքի լրացուցիչ նյութերը զետեղված են QR ծածկագրի տակ, որտեղ առկա են գրողների ստեղծագործություններ «Իմ գրադարանը» մատենաշարով, թեմային համապատասխան ֆիլմեր և այլն:

Դասգրքի 2-րդ էջում նույնպես QR ծածկագրերի տակ զետեղված են «Ինքնակենսագրական վեպ» բաժնի՝ ծրագրով նախատեսված լրացուցիչ նյութերը, որոնք վերաբերում են Մ. Գալշոյանի, Ու. Սարոյանի, Զ. Եսայանի, Գ. Մահարու կյանքին, ստեղծագործությանը, ինչպես նաև տեղադրված են համապատասխան բնագրերի հատվածները, դրանց համար կազմված վարժությունները, առաջադրանքները, գրականագիտական նյութերը և այլն:

Մեթոդական ուղեցույցի նպատակը ուսուցչին ոչ միայն մեթոդական օգնություն ցուցաբերելն ու ուսուցումը առավել մատչելի և հետաքրքիր դարձնելն է, այլև ուսուցման ժամանակակից մեթոդներն ավելի հասկանալի և նպատակային գործածելու կարողությունները զարգացնելը:

Ծրագրային նյութի համար մեր կողմից կազմվել է օրինակելի թեմատիկ պլանավորում՝ շաբաթական 3 ժամի համար, որը կօգնի ուսուցչին դասերի պլանավորման և վերջնարդյունքների կիրառման հարցում: Որքան էլ

անթերի լինեն ծրագիրն ու դասագիրքը, բոլոր դեպքերում՝ ուսուցման մեջ վճռորոշը ուսուցչի դերն է: Յուրաքանչյուր ուսուցիչ ունի թեման ստեղծագործաբար ներկայացնելու իր մոտեցումներն ու հնարավորությունները, և այս ուղեցույցում առկա դասի պլանները զերծ են պարտադրանքից. դրանք ունեն միայն ուղղորդող բնույթ:

7-րդ դասարանում գրականության ուսուցումը նպատակ ունի զարգացնելու տարբեր բնույթի բանավոր և գրավոր շարադրանք ստեղծելու կարողություններ, ձևավորելու արժեհամակարգ և սեփական դիրքորոշում ունեցող քաղաքացի:

Դասագրքում ներառված են ծրագրով նախատեսված հայ հեղինակների բանաստեղծություններ, պատմվածքներ, ինքնակենսագրական վեպերից հատվածներ:

Հեղինակների սեղմ կենսագրությունները, ստեղծագործական կյանքի հիմնական փաստերը, բնագրերը բխում են չափորոշչային ուսումնական նպատակներից: Բաժինների նպատակն ու վերջնարդյունքները զետեղված են դասագրքի յուրաքանչյուր թեմատիկ բաժնի սկզբում և վերջում:

Ծրագրային բոլոր նյութերն ուղեկցվում են առանձին ուղղորդող մեկնաբանություններով, հարցերով ու առաջադրանքներով, ուսուցիչ-աշակերտ երկխոսություններով, գունագեղ թեմատիկ նկարներով, ամեն թեմայի նորաձանոթ բառերի բացատրական բառարանով:

Ուղեցույցը կօգնի ուսուցչին գրականության դասավանդումը առավել հետաքրքիր ու մատչելի դարձնել՝ ժամանակի գիտամեթոդական պահանջներին համապատասխան: Կարևոր է, որ աշակերտի հետ աշխատելիս ուսուցիչը հասնի նրան, որ սովորողը կարողանա ոչ միայն տիրապետել տեղեկությունների ու փաստերի, այլև հանգամանորեն յուրացնի գրական երկը՝ որպես արվեստի ստեղծագործություն, ինքնուրույն կամ ընկերների հետ մասնակցի գրական երկերի մեկնաբանական, վերլուծական, բացատրական աշխատանքներին, արտահայտի կարծիք, դիրքորոշում: Հասնի նրան, որ աշակերտն ինքնուրույնաբար ընկալի նյութը՝ իր ընդունակություններին ու կարիքներին համապատասխան:

Յուրաքանչյուր հեղինակին հատկացվող ժամաքանակը հնարավորություն է տալիս ուսումնասիրել գրողին ու նրա գրական երկը ավելի հանգիստ ընթացքով: Մեթոդական ուղեցույցը կոչված է մեթոդապես ու մասնագիտորեն օգնելու ուսուցչին և նպաստելու դպրոցում գրականության ուսուցման բացթողումների շտկմանը, ինչպես նաև սովորողի ժամանակակից

պահանջների բավարարմանը և ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

Յուրաքանչյուր բաժնից մենք ընտրել ենք մեկ կամ մի քանի թեմա և հանգամանորեն վերածել դասի պլանի, որը միանշանակ կօգնի ուսուցչին վերակառուցել իր դասավանդումը՝ չափորոշչահեն կրթություն ապահովելով:

Բացի սովորողների վերարտադրողական կարողությունների զարգացումից, մշակված դասի պլաններով աշխատելիս կզարգանա սովորողների ստեղծագործական մտածողությունը, դիտողականությունը, երևակայությունը, համեմատելու, ընդհանրացնելու, դասակարգելու, վերլուծելու կարողությունները:

Յուրացման համար կազմվել են այնպիսի առաջադրանքներ, որոնք հնարավորինս կապահովեն սովորողի անհրաժեշտ գիտելիքների գործնական իրացումը՝ նրանց ընկալողական կարողունակություններին համապատասխան:

Վարժություններն իրենց բովանդակային ծավալով, տարաբնույթ առաջադրանքներով միտված են սովորողի և՛ ուսումնական պատրաստվածությունը, և՛ ինքնուրույն մտածելու, տրամաբանելու ունակությունը ստուգելուն ու բացահայտելուն:

Սովորողների կողմից թեմայի յուրացումն ապահովելու նպատակով ներառվել են տեքստեր, որոնց ընտրության ժամանակ հաշվի է առնվել ոչ միայն դրանց ուսուցողական, այլև գեղարվեստական, դաստիարակչական նշանակությունը:

Դասագրքի առաջադրանքներն այնպես են կազմված, որ սովորողին մղում են ոչ թե մեխանիկական աշխատանք կատարելու, այլ խթանում ու հարստացնում են նրանց գիտելիքները գործնականորեն կիրառելու կարողությունը: Վարժությունները կարող են կիրառվել ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր ուսուցման նպատակով:

Միաժամանակ ուղեցույցում զետեղվել է գնահատման նոր համակարգի վերաբերյալ նյութ, որը կօգնի կատարել ճիշտ գնահատում՝ միավորային և ուսուցանող կամ բնութագրական:

Ձեր բարեկամ՝

Թամարա Թովմասյան

Ա. Թեմատիկ պլան

Գրականություն

Դասարան՝ 7-րդ

Տարեկան ժամաքանակ՝ 102

Դասագրքի հեղինակներ՝ *Թ. Թովմասյան, Վ. Բաղմանյան, Դ. Սամվելյան, Ն. Աբասյան*
Հեղինակ՝ Թամարա Թովմասյան (փորձագետ)

Թեմա	Ժամ	Թեմա	Վերջնարդյունք
ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ			
1.	**6/1**	Ե. Չարենց: Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը Գաղափար բանաստեղծության մասին	*Ներկայացնի* Չարենցի կենսագրության հիմնական դրվագները: *Իմանա* բանաստեղծության ժանրային առանձնահատկությունները:
	6/2	«Ես իմ անուշ Հայաստանի...» բանաստեղծությունը	*Տիրապետի* թեմայում առկա նոր հասկացություններին, նոր բառերին և արտահայտություններին: *Մեկնաբանի՝* ինչ պատկերներով է հեղինակը ներկայացնում հայրենի երկիրը: *Իմանա* իր ազգային պատկանելության, հայրենի երկրի կարևորության մասին:

	6/3	«Ես իմ անուշ Հայաստանի…» բանաստեղծության կառուցվածքը	*Ներկայացնի* բանաստեղծության կառուցվածքը: *Պարզաբանի* Հայաստանի կերպարը՝ ըստ բանաստեղծության: *Ուսումնասիրի և մեկնաբանի* գրողի օգտագործած բառապաշարը և պատկերավորման միջոցները և դրանք *գործածի* խոսքում:
	6/4	«Ես իմ անուշ Հայաստանի…» բանաստեղծության բովանդակությունը	*Ներկայացնի* բանաստեղծության բովանդակությունը: Բանաստեղծությունից սովորած նոր բառերով *կազմի* նախադասություններ կամ գրավոր կապակցված խոսք: *Մեկնաբանի* բանաստեղծության տրված հատվածը:
	6/5	«Ես իմ անուշ Հայաստանի…» բանաստեղծության գաղափարը	*Ներկայացնի* բանաստեղծության գաղափարը: *Պատմելիս* օգտագործի հեղինակային բառապաշարը, *անվանի* տեքստի գեղագիտական արժեքավոր հատվածները: Համատեքստային բառերը, սովորած պատկերավորման միջոցները *կիրառի* խոսքում: *Գնահատի* բնագրի բառապաշարը և *հարստացնի* սեփական բառապաշարը:

	6/6	«Ես իմ անուշ Հայաստանի...» բանաստեղծության վերլուծությունը	*Ներկայացնի* բանաստեղծի ապրումները՝ վերլուծելով: *Դուրս գրի* համատեքստային բառեր ու դրանք կիրառի խոսքում: *Մեկնաբանի* բանաստեղծության վերնագրի ու բովանդակության կապը: *Վեր հանի* պատկերավորման միջոցների արտահայտչականությունը բանաստեղծությունում:
2.	**4/1**	Նաիրի Զարյան: Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը	*Ներկայացնի* հեղինակի կենսագրության հիմնական փաստերը և ապրած ժամանակաշրջանը: *Մեկնաբանի* հեղինակի հույզերն ու ապրումները և դրանց ազդեցությունը նրա ստեղծագործության վրա: *Թվարկի* հեղինակի ստեղծագործություններից մի քանիսը:
	4/2	«Հայրենի տուն» բանաստեղծության կառուցվածքը	*Ներկայացնի* բանաստեղծության կառուցվածքը: Բանաստեղծությունը *ներկայացնի* արձակ շարադրանքով: Արտահայտիչ *կարդա* կամ *արտասանի* բանաստեղծությունը: Բանաստեղծության մի տունը *վերարտադրի* նկարի միջոցով: *Նկարագրի* իրենց տունը՝ համեմատելով հեղինակի նկարագրության հետ:

	4/3	«Հայրենի տուն» բանաստեղծության գաղափարը	*Ներկայացնի* բանաստեղծության գլխավոր գաղափարը, ասելիքը: *Արփահայտի* իր մտահոգությունը մայրենին անաղարտ պահելու վերաբերյալ՝ համեմատելով հեղինակի նկարագրության հետ: *Մեկնաբանի* մակդիրների ու համեմատությունների կիրառման արժեքը բնագրում: *Գտնի* օրինաչափություններ «Ես իմ անուշ Հայաստանի...» բանաստեղծության հետ, *նշի* տարբերությունները: Բանաստեղծության և կյանքի միջև կապ *տեսնի:*
	4/4	«Հայրենի տուն» բանաստեղծության վերլուծությունը և արժևորումը	*Վերլուծի* հեղինակի կերպարը: *Ներկայացնի* քնարական հերոսի խոհը, ապրումները: *Մեկնաբանի* իր զգացողությունները բանաստեղծությունը կարդալուց հետո: Նորածանոթ բառերը *գործածի* խոսքում: *Ներկայացնի* բանաստեղծության դաստիարակչական նշանակությունը:
	2	Արտադասարանական ընթերցանության քննարկում	

	1/1	**Թեմատիկ գրավոր աշխատանք-1**	
3.	**5/1**	Հովհաննես Շիրազ: Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը	*Ներկայացնի* Հ. Շիրազի կենսագրության հիմնական փաստերը, *կապի* դրանք նրա ստեղծագործությունների հետ: *Գնահատի* Հ. Շիրազի կյանքն ու ստեղծագործությունը՝ նրա ապրած ժամանակաշրջանի համատեքստում: *Արտահայտի* սեփական կարծիք գրողի կյանքի մասին և նրա կյանքի պատմությունը կապի իրականության և ժամանակաշրջանի անցուդարձի հետ:
	5/2	«Թագադրում» բանաստեղծության կառուցվածքը	*Բացատրի* բանաստեղծության ռիթմը և կառուցվածքը: *Ներկայացնի* բանաստեղծության բովանդակությունն արձակ շարադրանքով: *Ներկայացնի* բանաստեղծի անձնական ապրումներն ու բնության պատկերների զուգակցումը բանաստեղծության մեջ: *Համեմատի* բանաստեղծությունն իրեն ծանոթ այլ ստեղծագործության հետ՝ ներկայացնելով իր դիրքորոշումը: *Մեկնաբանի* բանաստեղծությունը՝ զուգահեռներ անցկացնելով բովանդակության, հեղինակի կենսագրության ու ապրած ժամանակաշրջանի միջև: Առոգանությամբ *կարդա* (անգիր) և դատողություններ *անի* բանաստեղծության վերաբերյալ:

	5/3	«Թագադրում» բանաստեղծության բովանդակությունը	Բանաստեղծությունից ելնելով՝ *արտահայտի* սեփական դիրքորոշումը, *դրսևորի* սեր և հարգանք իր հայրենիքի, հայրենի բնության, հեղինակի ապրումի և հույզի, երազանքների վերաբերյալ: *Բացատրի և հիմնավորի* բնագրի սեփական մեկնաբանությունը: Արձակ շարադրանքով *ներկայացնի* բնագիրը՝ նրանից վերցրած հենակետային բառերի միջոցով: *Գտնի* ու *տարբերի* բնագրի մակդիրներն ու համեմատությունները՝ դրանք ստեղծագործաբար կիրառելով գրավոր կամ բանավոր խոսքում:
	5/4	«Թագադրում» բանաստեղծության գաղափարը	Մեկ նախադասությամբ *ձևակերպի* բանաստեղծության գաղափարը: *Գտնի* բանաստեղծությունը գրելու ժամանակն ու ժանրային առանձնահատկությունը: *Մեկնաբանի* հեղինակի անձնական ապրումներն ու հայրենասիրական մղումները զուգակցումը բանաստեղծությայն մեջ: *Մեկնաբանի* գործողությունների գարգացման ընթացքը և *ներկայացնի* իր դիրքորոշումը: Ստեղծագործաբար *վերաշարադրի* բանաստեղծության բովանդակությունը՝ կիրառելով բնագրից սովորած նոր բառեր և պատկերավոր արտահայտություններ: *Արժևորի* բանաստեղծությունում պատ-

			կերված արթնացող բնությունը, մարդկային ապրումը և հույզը, *համեմատի* իր զգացածի հետ:
	5/5	«Թագադրում» բանաստեղծության վերլուծությունը և արժևորումը	*Վերլուծի* բանաստեղծությունը սեփական ընկալմամբ: *Ներկայացնի* բանաստեղծության քնարական հերոսի ապրումները: Համեմատելով *վերլուծի* տարբեր բանաստեղծությունների տեքստեր և հիմնավորի: *Կատարի* մաթեմատիկական համապատասխան հաշվարկներ՝ ըստ բանաստեղծության տեքստի՝ տուն, հանգ, բառ: *Մեկնաբանի* բանաստեղծության դաստիարակչական նշանակությունը:
	2	Բաց դասեր թանգարաններում	
	1/1	Թեմատիկ գրավոր աշխատանք 2	
	5	Նախագծային աշխատանք	
4.	**6/1**	Համո Սահյան: Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը	*Ներկայացնի* Համո Սահյանի կենսագրության հիմնական փաստերը, *կապի* դրանք հեղինակի ստեղծագործությունների հետ:

	6/2	«Անտառում» բանաստեղծության կառուցվածքը, բովանդակությունը	Բանաստեղծության բովանդակությունը *շարադրի* արձակ ձևով: *Համեմատի* այս բանաստեղծությունը սովորած որևէ բանաստեղծության հետ՝ գտնելով ընդհանրություններ և տարբերություններ: *Գտնի* խորհրդանիշ բառը և դրանով կազմի աքրոստիկոս՝ թեմային համապատասխան:
	6/3	«Անտառում» բանաստեղծության գաղափարը	*Ներկայացնի* բանաստեղծության հիմնական գաղափարը, ասելիքը: *Կապի* բանաստեղծության իմաստը անձնական փորձի հետ: Բանաստեղծությունը *շարադրի* արձակ՝ հավատարիմ մնալով հեղինակի բառապաշարին: *Գնահատի* բանաստեղծության բառապաշարը, *հիմնավորի* լեզվի պարզությունը:
	6/4	«Անտառում» բանաստեղծության բովանդակության վերլուծությունը և արժևորումը	*Վերլուծի* բանաստեղծությունը: *Արժևորի* բանաստեղծության մեջ արծարծված հույզերն ու ապրումները: Բանաստեղծությունը *վերաարտահայտի* նկարով:
	6/5	«Մասրենի» բանաստեղծության կառուցվածքը, բովանդակությունն ու գաղափարը	*Ուսումնասիրի և ցույց տա* բանաստեղծության կառուցվածքը, տունը, ռիթմը, տողերի քանակը, վանկերի քանակն ամեն տողում:

			Վերարտադրի բանաստեղծության բովանդակությունը արձակ շարադրանքով: *Մեկնաբանի* արտահայտած իմաստը սեփական ընկալմամբ:
	6/6	«Մասրենի» բանաստեղծության վերլուծությունը և արժևորումը	*Գտնի* գլխավոր կերպարն ու վերլուծի: *Գտնի* նմանություններ հայ ժողովրդի և մասրենու միջև: *Գտնի, դուրս գրի* մակդիրները, համեմատությունները, *բացատրի* դրանց նշանակությունը բանաստեղծության մեջ: *Ներկայացնի* հեղինակի կենսագրության հիմնական փաստերը, *կապի* դրանք հեղինակի ստեղծագործությունների հետ: Բանաստեղծությունը *շարադրի* արձակ՝ հավատարիմ մնալով հեղինակի բառապաշարին: Իր մեջ *ամրապնդի* պատկերացումը բանաստեղծությունում պատկերված հայրենիքի, հայրենի եզերքի, մարդկային ապրումի և հույզի, գեղեցիկի մասին: *Գնահատի* բանաստեղծության բառապաշարը, *հիմնավորի* լեզվի պարզությունը:
5.	**4/1**	Սիլվա Կապուտիկյան: Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը	*Վերարտադրի* գրողի կենսագրությունը, ներկայացնի ապրած ժամանակաշրջանը: *Մեկնաբանի* հեղինակի մանկության և պատանեկության այն դրվագները, որոնք ազդեցություն են թողել Կապուտիկյանի ստեղծագործության վրա:

	4/2	«Քելե՛, լաո» բանաստեղծության կառուցվածքը և բովանդակությունը	*Ուսումնասիրի և ցույց տա* բանաստեղծության, կառուցվածքը, տունը, ռիթմը, տողերի քանակը, վանկերի քանակն ամեն տողում: *Բացահայտի* գլխավոր գաղափարը, ասելիքը: *Նկարի* բանաստեղծությունն իրեն հատուկ զգացողությամբ: *Գնահատի* բնագրի բառապաշարը և հարստացնի սեփական բառապաշարը: *Համեմատի* բանաստեղծությունն իրեն ծանոթ այլ ստեղծագործության հետ, *գտնի* նմանությունները, տարբերությունները, ընդհանրությունները:
	4/3	«Քելե՛, լաո» բանաստեղծության գաղափարը	Կ*արդա* բանաստեղծությունը և արտահայտի զգացմունքները, տպավորությունները: *Ներկայացնի* տեքստի գլխավոր գաղափարը, ասելիքը: *Կատարի* չափածո խոսքի լեզվաոճական վերլուծություն: *Պարզի* բանաստեղծության արտահայտած տրամադրությունը, հույզը: *Մասնակցի* բանաստեղծության շուրջ ծավալված բանավեճին, *արտահայտի* վերաբերմունք: *Արժևորի* իր ազգային պատկանելության, հայրենիքի անփոխարինելիության, պահանջատիրության, կարոտի ու արարման խորհուրդը: *Անվանի* տեքստի տարբեր տեսակետներից իրեն հետաքրքիր տողերը:

	4/4	«Քելե՛, լաո» բանաստեղծության վերլուծությունը և արժևորումը	*Նկարագրի* տեքստում պատկերված ժամանակաշրջանը, միջավայրը: *Ցույց տա* քնարական հերոսին, նրան բնորոշ հատկանիշները: *Ցույց տա* գրական սեռերի և ժանրերի տարբերությունը (ընդհանրական պատկերացում): Մեկնաբանի քնարական հերոսի ապրումները: *Ստեղծի* բնագրի բովանդակությանը համապատասխան շարադրանք կամ բանաստեղծության որևէ դրվագին համապատասխան նկար:
6.	**4/1**	Պարույր Սևակ: Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը	*Ներկայացնի* Պարույր Սևակի կենսագրության հիմնական փաստերը, *կապի* դրանք հեղինակի ստեղծագործությունների հետ: *Թվարկի* Սևակի ստեղծագործությունները:
	4/2	«Հայաստան» բանաստեղծության կառուցվածքը և բովանդակությունը	*Մատնանշի* բանաստեղծության կառուցվածքը: *Մեկնաբանի* բանաստեղծության բովանդակությունը: *Ուսումնասիրի և ցույց տա* բանաստեղծության կառուցվածքը, տունը, ռիթմը, տողերի քանակը, վանկերի քանակն ամեն տողում: Բանաստեղծության յուրաքանչյուր տուն *վերնագրի* նրա բովանդակությանը համապատասխան և մեկ նախադասությամբ *ձևակերպի* արտահայտած իմաստը: *Ներկայացնի* բանաստեղծության հիմնա-

			կան դրվագները՝ ելնելով հեղինակային բնութագրումներից: *Գիպակցի* իր ազգային պատկանելությունը, հայրենիքի անփոխարինելիությունը, հայրենաճանաչությունը:
	4/3	«Հայաստան» բանաստեղծության գաղափարը	*Ներկայացնի* բանաստեղծության բովանդակությունը և արտահայտած հիմնական գաղափարը: *Բացահայտի* բանաստեղծության գլխավոր գաղափարը, ասելիքը: *Գիպակցի* հայրենիքի անփոխարինելիությունը, հայրենաճանաչությունը: Բնաստեղծությունից ելնելով՝ *կազմի* պլան և *վերարտադրի* արձակ շարադրանքով: *Հաղորդի* բանաստեղծության բովանդակությունը ինչպես սեփական բառերով, այնպես էլ նոր սովորած բառային միավորների օգտագործմամբ: *Արտահայտի* իր կարծիքը բանաստեղծության գաղափարական բովանդակության վերաբերյալ: *Վերլուծի* բանաստեղծությունը, *ներկայացնի* հիմնական գաղափարը:

	4/4	«Հայաստան» բանաստեղծության վերլուծությունը և արժևորումը	Ըստ «Հայաստան» բանաստեղծության *ներկայացնի՝* որ հատկանիշներն են բնորոշ հայ ժողովրդին: *Գնահատի* բնագրի բառապաշարը՝ հարստացնելով սեփականը, *օգտագործի* հեղինակային բառապաշարը՝ բանաստեղծությունը վերլուծելիս: Բնագրից ելնելով՝ *ներկայացնի* ժամանակակից մարդու ներաշխարհը, նրա հույզերը: *Գտնի, դուրս գրի* մակդիրները, համեմատությունները, բացատրի դրանց նշանակությունը բանաստեղծության մեջ:
	1/1	**Թեմատիկ գրավոր աշխատանք-3**	
8.	**6/1**	Դերենիկ Դեմիրճյան: Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը: Գաղափար պատմվածքի մասին	*Ներկայացնի* հեղինակի կենսագրության հիմնական փաստերը, *կապի* դրանք հեղինակի ստեղծագործությունների հետ: *Ներկայացնի* հեղինակի կենսագրության և ապրած ժամանակաշրջանի ազդեցությունը իր ստեղծագործությունների վրա: *Ներկայացնի* պատմվածքի ժանրային առանձնահատկությունները: *Ճանաչի* ստեղծագործության ժանրը: *Ցույց տա* գրական սեռերի և ժանրերի տարբերությունը (ընդհանրական պատկերացում): *Բացատրի՝* ինչ կերպ է արտահայտվում տեքստում պատկերված ժամանակաշրջանը հեղինակի ստեղծագործության վրա:

	6/2	Դ. Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքի դիպաշարը և կառուցվածքը	*Բացատրի* պատմվածքի կառուցվածքի առանձնահատկությունները: *Մեկնաբանի* «Ավելորդը» պատմվածքի դեպքերի կատարման ժամանակաշրջանը, պատմական վայրը: *Ներկայացնի* պատմվածքի բովանդակությունը: Սեփական բառերով *վերարտահայտի* գործողությունների զարգացման ընթացքը:
	6/3	«Ավելորդը» պատմվածքի գաղափարական բովանդակությունը	*Մեկնաբանի* «Ավելորդը» պատմվածքի գաղափարական բովանդակությունը: *Իմանա* պատմվածքում ծավալվող դեպքերի և գործողությունների զարգացման ընթացքը: *Նկարագրի* գլխավոր հերոսի արտաքինը: *Ընդհանրացնի* և հակիրճ *ձևակերպի* ստեղծագործության հիմնական գաղափարը: Վերնագիրը *կապի* պատմվածքի բովանդակության հետ: *Մեկնաբանի* հերոսների արարքների դրդապատճառները: *Ներկայացնի* եղբայրների համեմատական բնութագիրը:
	6/4	«Ավելորդը» պատմվածքի կերպարները: Հաճի աղա	*Թվարկի* հերոսների անունները, *բնութագրի* նրանց *և առանձնացրի* գլխավոր և երկրորդական հերոսներին: *Բնութագրի* գլխավոր հերոսին՝ մեկնաբանելով նրա արարքները:

			Գնահատի Հաճի աղայի արարքը գործողությունների սկզբում և տունդարձից հետո:
	6/5	«Ավելորդը» պատմվածքի մյուս կերպարները	*Ներկայացնի* գործող անձանց փոխհարաբերությունները (ով ում է օգնում, խաբում, սիրում, ատում...) և *մեկնաբանի* նրանց արարքների դրդապատճառները: *Բնութագրի* դուր եկած հերոսին (ներին)՝ պատճառաբանելով:
	6/6	Արժեքների և վերաբերմունքի ձևավորումը «Ավելորդը» պատմվածքի միջոցով	*Անվանի* ստեղծագործության հերոսների գործողությունների դրդապատճառները (ինչո՞ւ վարվեց այսպես) և *գնահատի* նրանց վարքագիծը: Իր մեջ *արմատավորի* մարդուն սիրելու, օգնելու, խնամելու և խնայելու կարողություններ: *Համեմատի* հերոսների արարքները, առանձնացնի լավն ու վատը, մերժելին և ընդունելին:
	2	Կազմել որևէ ստեղծագործության բեմագիր և ներկայացնել դերախաղով	
	1/1	Գործնական աշխատանք 1	
	1	Կիսամյակային կրկնություն	

ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿ			
9.	**6/1**	Ակսել Բակունց: Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը	*Ներկայացնի* հեղինակի կենսագրության հիմնական փաստերը, *կապի* դրանք հեղինակի ստեղծագործությունների հետ: *Թվարկի* հեղինակի ստեղծագործությունները:
	6/2	«Սպիտակ ձին» պատմվածքի դիպաշարը և կառուցվածքը	*Ցույց տա* ստեղծագործության կառուցվածքային տարրերը: *Մեկնաբանի* գրական կոնֆլիկտը (բախումը) և նրա ազդեցությունը միջանձնային հարաբերությունների վրա: *Ներկայացնի* պատմվածքի կառուցվածքը և բաղադրիչ մասերը: *Բացատրի* ՝ ինչու է պատմվածքը վերնագրվել «Սպիտակ ձին»: *Վերլուծի* կերպարները՝ մեկնաբանելով նրանց արարքների շարժառիթները, հույզերն ու ապրումները: Ստացած տեղեկությունը *մշակի,* տվյալները *վերլուծի* և եզրահանգումներ *անի:* *Բացատրի,* թե պատմվածքում ժամանակաշրջանը, միջավայրը ինչ կերպ են ազդում հերոսների հոգեբանության վրա:
	6/3	«Սպիտակ ձին» պատմվածքի գաղափարական բովանդակությունը	*Թվարկի* պատմվածքի հերոսներին, համեմատի, ընդհանրություններ և տարբերություններ *գտնի*: *Բացահայտի* տեքստի գլխավոր գաղափարը, ասելիքը: *Ցույց տա* դեպքերի հաջորդական ընթացքը:

			Վերարտահայտի ստեղծագործությունը սեփական բառերով: *Գնահատի* տեքստի ոճը, բառապաշարը, կառուցվածքային առանձնահատկություններ, կերպարներին և նրանց գործողությունները: *Կանխատեսի* դիպաշարի զարգացումը՝ հիմնվելով առկա փաստերի վրա: Ստեղծագործաբար *վերաշարադրի* երկի բովանդակությունը: *Համեմատի* հերոսների արարքները, *արտահայտի* սեփական վերաբերմունքը նրանց արարքների նկատմամբ: *Գտնի* այն բառերն ու արտահայտությունները, որոնք ստեղծագործության մեջ տրամադրվածություն են ստեղծում:
	6/4	«Սպիտակ ձին» պատմվածքի կերպարները: Սիմոնի կերպարը	*Գնահատի* Սիմոնի վարքագիծը և *արտահայտի* իր վերաբերմունքը: *Մասնակցի* ստեղծագործության շուրջ ծավալված մտքերի փոխանակմանը: Հերոսների վերաբերյալ *արտահայտի* իր զգացմունքները/ապրումները, *փորձի* բացատրել դրանք (զարմացա, որովհետև…, զայրացա, քանի որ …): *Մատնանշի* պատկերավորման այն միջոցները, որոնք ընթերցողին հույզ և զգացմունք են փոխանցում: Բացատրի՝ ինչ կերպ է արտահայտվում տեքստում պատկերված ժամանակաշրջանը:

	6/5	«Սպիտակ ձին» պատմվածքի մյուս կերպարները	*Որոշի* պատմվածքի գործող անձանց խոսքի առանձնահատկությունները, *հակադրի* տարբեր անձանց արարքները, նրանց վերաբերմունքը շրջապատի նկատմամբ: *Մատնանշի* հասարակության սահմանած օրենքների և կարծրատիպերի կործանարար ազդեցությունը անհատի հոգեբանության և ճակատագրի վրա: *Մեկնաբանի* հերոսների արարքների դրդապատճառները, *դրսևորի* իր վերաբերմունքը նրանց նկատմամբ կամ *գնահատի*: *Կողմնորոշվի* տեքստի իմաստային բովանդակության մեջ և *կարողանա* պատասխանել տրված հարցերին: *Տարբերակի* պատմվածքում հեղինակի և գործող անձանց խոսքերը, երկխոսությունը և մենախոսությունը:
	6/6	«Սպիտակ ձին» պատմվածքի վերլուծությունը և արժևորումը	*Հաղորդի* պատմվածքի բովանդակությունն ինչպես սեփական բառերով, այնպես էլ նոր սովորած բառային միավորների օգտագործմամբ: Գործող անձի գործունեությունը *կապի* իր անհատական կենսափորձի հետ և *հիշի* նման իրավիճակներ: *Բնութագրի* գլխավոր հերոսին՝ մեկնաբանելով նրա արարքները: *Գնահատի* Սիմոնի արարքը՝ սեփական վերաբերմունք դրսևորելով:

			Մեկնաբանի գրական-գեղարվեստական կերպարի դերը տեքստում և ազդեցությունը ընթերցողի վրա: *Ընդլայնի* սեփական ուսումնառության հնարավորությունները՝ ձգտելով շարունակական ինքնազարգացման և ինքնակրթության, *զարգացնի* արդարամտություն, լայնախոհություն, համարձակություն, տոկունություն, հավասարակշռվածություն:
	1	**Թեմատիկ գրավոր աշխատանք 4**	
10	**6/1**	Հրանտ Մաթևոսյան: Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը	*Վերարտահայտի* գրողի կենսագրությունը, *ներկայացնի* ապրած ժամանակաշրջանը: *Ներկայացնի* գրողի ստեղծագործությունները: Թվարկի:
	6/3	«Կանաչ դաշտը» պատմվածքի դիպաշարը և կառուցվածքը	*Ցույց կա* ստեղծագործության կառուցվածքային տարրերը: Մեկնաբանի գրական կոնֆլիկտը (բախումը) և նրա ազդեցությունը միջանձնային հարաբերությունների վրա: *Ներկայացնի* պատմվածքի կառուցվածքը և բաղադրիչ մասերը: *Բացատրի* ՝ ինչու է պատմվածքը վերնագրվել «Կանաչ դաշտը»: *Վերլուծի* կերպարները՝ մեկնաբանելով նրանց արարքների շարժառիթները, հույզերն ու ապրումները: Ստացած տեղեկությունը *մշակի,* տվյալները *վերլուծի* և եզրահանգումներ *անի:*

			Բացատրի՝ հովիտը կերպա՞ր է, թե՞ ոչ: *Ներկայացնի՝* ինչ ընդհանրություններ ունեն ձին և գայլը: *Գտնի* բնագրի ժողովրդախոսակցական դրվագները:
	6/4	«Կանաչ դաշտ» պատմվածքի գաղափարական բովանդակությունը	*Ներկայացնի* գրական երկի գաղափարը, հեղինակի ասելիքը, դրա նշանակությունը ժամանակի և տարածության համատեքստում: *Մեկնաբանի* տեքստի գլխավոր գաղափարը, ասելիքը: *Բացատրի՝* ինչ կերպ է արտահայտվում տեքստում պատկերված ժամանակաշրջանը, միջավայրը հերոսի հոգեբանության վրա: *Բացատրի՝* ինչ կերպ է արտահայտվում տեքստում հույզը, զգացմունքը, ապրումը: *Ուսումնասիրի* գրողի կենսագրության և ստեղծագործության միջև առկա կապերը: *Արժևորի* գրող-անհատին և քաղաքացուն:
	6/5	«Կանաչ դաշտը» պատմվածքի կերպարները	*Բացատրի* կերպար ստեղծելու սկզբունքները՝ ելնելով գրական ուղղություններից: *Մեկնաբանի* ձիու մաքառումը քուռակին փրկելու համար: *Բացատրի* գրական կերպարի հոգեբանական զարգացումը, ներքին և արտաքին կոնֆլիկտները, կոնֆլիկտի լուծումը: *Գրի* պատմվածքի համար նոր վերջաբան: *Նկարագրի* հովիտը խաղաղ ժամանակ:

			Ներկայացնի ժայռի և կաղնու մտերմությունը. կաղնու երախտագիտությունը: Պատմվածքի շրջանակում *կազմի* բովանդակային, գաղափարական և բանավիճային հարցեր*:* *Նկարագրի* հեռավոր լանջը, որտեղ հովիվներն ու շներն էին:
	6/6	«Կանաչ դաշտը» պատմվածքի վերլուծությունը և արժևորումը	*Վերլուծի* կերպարները՝ ներկայացնելով նրանց արարքների դրդապատճառները: Պատմվածքում *առանձնացնի* այն պարբերությունները, որոնցում առկա է եզրահանգում: *Բնութագրի* կերպարներին՝ հատվածից դուրս բերելով նրանց բնութագրող տողերը: *Գնահատի* պատմվածքը՝ որպես սեփական անձի ձևավորման և ինքնաճանաչման, ազգային մշակութային արժեքների գնահատման կարևոր պայման:
15.	**6/1**	Վահան Թոթովենց: Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը Գաղափար ինքնակենսագրական վեպի մասին	*Ներկայացնի* Թոթովենցի կյանքից հետաքրքիր դրվագներ, ապրած ժամանակաշրջանը: *Ներկայացնի* գրողի կենսագրությունը և գործունեությունը՝ ըստ փաստերի ու հուշագրության: *Ներկայացնի* ինքնակենսագրական վեպի ժանրային առանձնահատկությունները: *Թվարկի* հեղինակի երկերի վերնագրերը՝ նշելով գրելու ժամանակաշրջանը:

	6/2	«Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» ինքնակենսագրական վեպի (հատված) կառուցվածքն ու դիպաշարը	*Ներկայացնի* «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» ինքնակենսագրական վեպի կառուցվածքն ու դիպաշարը: Ստեղծագործաբար *վերաշարադրի* վեպի բովանդակությունը՝ կիրառելով սովորած բառերը և պատկերավոր արտահայտությունները: *Ներկայացնի* վերնագրի և բնագրի իմաստային փոխադարձ կապը: *Անվանի* վերնագրի այլընտրանքային տարբերակներ: Գործող անձի գործունեությունը *կապի* իր անհատական կենսափորձի հետ և *հիշի* նման իրավիճակներ:
	6/3	«Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» ինքնակենսագրական վեպի (հատված) գաղափարական բովանդակությունը	*Բացատրի* վեպի գլխավոր գաղափարը՝ ըստ հատվածի: *Ընդգծի վեպի* գլխավոր գաղափարն արտահայտող բանալի բառերը, նախադասությունները՝ ըստ հատվածի: *Մասնակցի* գեղարվեստական ստեղծագործության շուրջ ծավալված մտքերի փոխանակմանը: *Մասնակցի* թեմայի քննարկմանը: *Արտահայտի* իր զգացմունքները/ապրումները և *փորձի* բացատրել դրանք:

	6/4	«Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» ինքնակենսագրական վեպի (հատված) գլխավոր կերպարները	*Թվարկի* հերոսներին՝ ներկայացնելով նրանց փոխհարաբերությունները: *Բնութագրի կերպարներին*՝ հատվածից դուրս բերելով նրանց բնութագրող տողերը: *Բնութագրի* իր հարազատներին՝ մայր, հայր, քույր, եղբայր: Համեմատի՛ր տեքստի հետ: *Բացատրի*՝ ինչ կերպ է արտահայտվում տեքստում պատկերված ժամանակաշրջանը: *Վերարտադրի* ստեղծագործությունը իր բառերով: *Պատմի* իրկյանքից նմանատիպ հետաքրքիր դեպքեր:
	6/5	«Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» ինքնակենսագրական վեպի (հատված) մյուս կերպարները	Հատվածից *առանձնացնի* հերոսներին բնութագրող դեպքերը, բնության պատկերները նկարագրող բառերն ու արտահայտությունները: *Ընկալի* բառերի արժեքը Վ. Թոթովենցի ստեղծագործության մեջ: *Գնահատի* հերոսների վարքագիծը և *արտահայտի* իր վերաբերմունքը*:* *Անվանի* կարդացած վեպի թեման, դիրքորոշում *ունենա* այդ թեմայի մասին:
	6/6	«Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» ինքնակենսագրական վեպի (հատված) վերլուծությունը և արժևորումը	*Ներկայացնի կամ թվարկի* հատվածում կիրառված գեղարվեստական խոսքի պատկերավորման միջոցները: *Որոշի* վեպի գործող անձանց խոսքի առանձնահատկությունները, *հակադրի* տարբեր անձանց արարքները, նրանց վերաբերմունքը շրջապատի նկատմամբ:

	1	**Թեմատիկ գրավոր աշխատանք-5**	
16. 5	**6/1**	Ստեփան Զորյան: Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը	*Ներկայացնի* Ստեփան Զորյանի կյանքից հետաքրքիր դրվագներ, ապրած ժամանակաշրջանը: *Կազմի սահիկաշար*՝ ներառելով գրողի կենսագրության ուշագրավ փաստերը: *Կողմնորոշվի* տեքստի իմաստային բովանդակության մեջ և *կարողանա* պատասխանել դասագրքում զետեղված հարցերին:
	6/2	«Մի կյանքի պատմություն» ինքնակենսագրական վեպի (հատված) կառուցվածքն ու դիպաշարը	*Ներկայացնի* «Մի կյանքի պատմություն» ինքնակենսագրական վեպի կառուցվածքն ու դիպաշարը: Ստեղծագործաբար *վերաշարադրի* վեպի բովանդակությունը՝ կիրառելով սովորած բառերը և պատկերավոր արտահայտությունները: *Տարբերակի* վեպում հեղինակի և գործող անձանց խոսքերը, երկխոսությունը և մենախոսությունը: *Նկարագրի* «Մի կյանքի պատմություն» վեպում ներկայացված դեպքերը: *Ստեղծագործաբար վերաշարադրի* վեպի բովանդակությունը՝ կիրառելով սովորած բառերը և պատկերավոր արտահայտությունները:
	6/3	«Մի կյանքի պատմություն» ինքնակենսագրա-	*Մեկնաբանի* վեպի գլխավոր գաղափարը՝ ըստ հատվածի:

		կան վեպի (հատված) գաղափարական բովանդակությունը	*Ընդգծի* վեպի գլխավոր գաղափարն արտահայտող բանալի բառերն ու նախադասությունները՝ ըստ հատվածի:
	6/4	«Մի կյանքի պատմություն» ինքնակենսագրական վեպի (հատվածի) գլխավոր կերպարները	*Բնութագրի* կերպարներին՝ ըստ հատվածի: *Պատմի* իր մանկության տարիներից հետաքրքիր պատմություններ, *զուգորդի* վեպի հերոսի հետ: *Որոշի* հերոսների արարքների դրդապատճառները, *դրսևորի* իր վերաբերմունքը նրանց նկատմամբ կամ *գնահատի*:
	6/5	«Մի կյանքի պատմություն» ինքնակենսագրական վեպի (հատվածի) մյուս կերպարները	*Պատմի* ստեղծագործության մեջ պատկերված պատմությունը՝ հերոսներից մեկի բերանով: Բնագիրը ավելի լավ ընկալելու նպատակով հարցեր *առաջադրի* կարդացածի հետ կապված: Պատմելիս *օգտվի* հեղինակի ստեղծած գեղարվեստական պատկերներից: Հատվածում ինքնուրույն *գտնի* բառեր և արտահայտություններ, որոնք հեղինակը կիրառում է գործող անձանց, փաստերն ու իրադարձությունները նկարագրելու համար:
	6/6	«Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» ինքնակենսագրական վեպի (հատված) վերլուծությունը և արժևորումը	Գեղարվեստորեն *ներկայացնի* իր կյանքից մի դրվագ: *Գնահատի* հեղինակի վարքագիծը և արտահայտի սեփական վերաբերմունք: *Հարստացնի* սեփական բառապաշարը՝ օգտվելով բնագրի բառապաշարից:

	5	Դաս էքսկուրսիա	
	1/1	**Գործնական աշխա-տանք 2**	
	1	**Թեմատիկ գրավոր աշ-խատանք-6**	
	6	Կիսամյակային կրկնութ-յուն	
	6	Տարեվերջյան կրկնութ-յուն	
	2	Նախագծի ներկայացում և քննարկում	
	4	Արտադասարանային ընթերցանության քննարկումներ	

Հասարակության զարգացման բոլոր փուլերում էլ ուսուցիչը մշտապես սովորելու և, ժամանակի պահանջներին համապատասխան, կատարելագործվելու խնդիր ունի: Այսօրվա ուսուցիչը պետք է լինի անընդհատ սովորելու անհրաժեշտությունը գիտակցող, ժամանակակից մեթոդների իմացությամբ զինված, իր կազմակերպչական, հաղորդակցական, գիտելիքների համակարգման ու ընդհանրացման կարողություններով և որոշում կայացնելու, ստեղծագործաբար աշխատելու, աշակերտների ճանաչողական ու հոգևոր զարգացումը խթանելու և ուսումնառությանը աջակցելու հմտություններով օժտված անձ:

Ուսուցչին օգնելու նպատակով դասագրքի յուրաքանչյուր բաժնից մեկական ենթաթեմա ներկայացնում ենք օրինակելի դասի պլանով:

Բ. Դասի անցկացման ժամանակակից մոտեցումներ: Դասի պլանների նմուշօրինակներ

Հասարակության զարգացման բոլոր փուլերում էլ ուսուցիչը մշտապես սովորելու և ժամանակի պահանջներին համապատասխան կատարելագործվելու խնդիր ունի: Այսօրվա ուսուցիչը պետք է լինի անընդհատ սովորելու անհրաժեշտությունը գիտակցող, ժամանակակից մեթոդների իմացությամբ զինված, իր կազմակերպչական, հաղորդակցական, գիտելիքների համակարգման ու ընդհանրացման կարողություններով և որոշում կայացնելու, ստեղծագործաբար աշխատելու, աշակերտների ճանաչողական ու հոգևոր զարգացումը խթանելու և ուսումնառությանը աջակցելու հմտություններով օժտված անձ:

Ուսուցչին օգնելու նպատակով դասագրքի յուրաքանչյուր բաժնից մի քանի ենթաթեմա ներկայացնում ենք օրինակելի դասի պլանով:

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

ԴԱՍ 2-3

ԹԵՄԱՆ՝ Ե. Չարենցի «Տաղարան» շարքի ընդհանուր բնութագիրը, բանաստեղծական շարք. «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը (2 ժամ):

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 90 րոպե

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ՝ Ծանոթացնել «Տաղարան» շարքին և «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության բովանդակությանն ու գաղափարին:

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Կիմանա՝

- բանաստեղծության բովանդակությունը և գաղափարը,
- ի՞նչ է բանաստեղծական շարքը,

- Ե. Չարենցի բանաստեղծական շարքերի և հիմնական գրքերի վերնագրերը,
- «Տաղարան» շարքում ընդգրկված ստեղծագործությունների ընդհանուր բնութագիրը:

Կկարողանա՝

- ընթերցել բանաստեղծությունը առոգանությամբ (ինքնուրույն կամ ուսուցչի ուղղորդմամբ),
- ներկայացնել «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության բովանդակությունը,
- արտահայտել կարծիք կարդացածի վերաբերյալ,
- հարցեր առաջադրել ընկալման ճշգրտման նպատակով,
- դուրս գրել բանաստեղծությունից բարդ բառերը,
- կազմել նոր սովորած բառերով նախադասություններ,
- թեմայի միջոցով մշակել ու զարգացնել սեփական արժեհամակարգը,
- գիտակցել իր ազգային պատկանելության, մայրենի լեզվի անհրաժեշտության և առաջնայնության մասին:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ՝ «Կարճ զրույց», «Կարճ դասախոսություն», «Խթանող հարցեր», «Ձնագնդի», «5-րոպեանոց շարադրանք»:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ՝ դասագիրք, քարտեր, գծապատկերներ, նշագրիչներ, թուղթ:

ԴԱՍԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: Գիտելիքների, կարողությունների և հմտությունների ամրապնդման և զարգացման դաս:

Գիտելիքների, կարողությունների և հմտությունների ամրապնդման և զարգացման դասի ժամանակ ուսուցիչը պետք է կարողանա բացահայտել նախատեսված աշխատանքի նպատակը, վերարտադրել առաջադրված խնդիրների կատարման համար անհրաժեշտ գիտելիքները, կարողությունները և հմտությունները, կատարել տարբեր վարժություններ և առաջադրանքներ, ստուգել կատարված աշխատանքները, քննարկել և ուղղել սխալ-

ները, անհրաժեշտության դեպքում՝ հանձնարարել տնային առաջադրանք, ծանոթացնել նոր կարողությունների հետ, կատարել նոր կարողությունների ամրապնդմանը միտված վարժություններ, ստեղծարար բնույթի վարժանքներ, ամփոփել դասը:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ: Ստուգում ենք տնային առաջադրանքները (եթե հանձնարարված ե,ն) հին դասի հարցում կատարում և անցնում նոր նյութի ուսուցմանը:

ԽԹԱՆՈՒՄ: Այս փուլում ուսուցիչը «Կարճ դասախոսության» միջոցով ներկայացնում է, որ Եղիշե Չարենցի «Տաղարան» շարքը, որը հեղինակն ավարտել է 1921 թվականին, դարձավ հեղինակի այդ շրջանի գեղարվեստական ինքնատիպ ստեղծագործություններից մեկը, տպագրվեց 1922 թվականին՝ տեղ գտնելով մոսկովյան հրատարակության երկհատորյակի առաջին հատորում:

Ապա ավելացնում ենք, որ «Տաղարան» շարքը հեղինակը ձոնել է իր սիրելի կնոջը՝ Արփենիկին, որին Չարենցը սիրել է յուրահատուկ սիրով: Բնավորությամբ նա եղել է մեղմ ու սրտակից ընկեր, տխուր պահերին երգել է Չարենցի համար: Եվ որ ամենակարևորն է՝ հասկացել բանաստեղծին, ներել նրա մոլորությունները, սիրային պատմությունները, կենցաղային և գրական վեճերը: Արփիկը հոգեկան նեցուկ է եղել Չարենցին և սատար կանգնել նրան մշտապես: Արփիկի մահը Չարենցը շատ ծանր է տարել:

Այդ սերը հետագայում շատ է ներշնչել բանաստեղծին: «Էպիքական լուսաբացը»՝ «Նվիրում եմ գիրքս հիշատակին կնոջս, ընկերոջս, հերոսական բարեկամիս՝ Արփենիկ Չարենցին» ընծայագրով, ձոնել է նրան: Ապա հավելում ենք, որ գրքում Արփենիկի հիշատակին նվիրված է նաև երկու սոնետ՝ «Իմ բարեկա՛մ, իմ սե՛ր, հերոսական ընկեր», «Մենք ապրեցինք քեզ հետ մի վիթխարի դարում»: Սրանից հետո ներկայացնում ենք, որ «Տաղարանն» սկսվում է այսպես.

Արփիկին՝
Հիդրս խոսի՛, մի՛ կենա խըռովի պես,
Տալղա տըվիր, գեմիս տարար ծովի պես.
Կու մեռնիմ – չիս տեսնի Սայաթ-Նովի պես…

(տալղա – ալիք, հորձանք, գեմի – նավակ):

Սայաթ–Նովա

Բառերի բացատրությունը տալուց հետո ավելացնում ենք, որ շարքի համար նախամուտք են հետևյալ երկու քառատողերը.

Ինչքա՜ն որ հուր կա իմ սրտում — բոլորը քեզ.
Ինչքա՜ն կրակ ու վառ խնդում — բոլորը քեզ.—
Բոլո՜րը տամ ու նվիրեմ, ինձ ո՛չ մի հուր թող չմնա՝
Դո՜ւ չմրսես ձմռան ցրտում.— բոլո՜րը քեզ…

Ամռան անուշ, հուրհրատող տո՛թ ես, ջան,—
Նախշուն նռան ու նարնջի հո՛տ ես, ջան,
Երբ խստադեմ ի՛նձ ես նայում դու հանկարծ —
Ասես սրտիս մահվան դաժան բո՛թ ես, ջան…

Ապա հարցեր ենք առաջադրում սովորողներին, ու նրանք էլ պատասխանում են՝

- Ո՞րն էր Չարենցի այս աշուղության, աշուղ դառնալու ներքին տրամաբանությունը: Ինչո՞ւ է Չարենցն իր «ապոլլոնյան քնարը» փոխարինում «աշուղի սազով»: Մի՞թե նոր ոճավորմամբ էր տարվել կամ ստեղծագործական նմանագրության նորարարություն էր:

Անշուշտ՝ ոչ:

Չարենցի ստեղծագործության այս նոր անակնկալը՝ «Տաղարանը», կյանքի ու աշխարհի նկատմամբ ժողովրդական հայացքի ամրապնդումն էր, որովհետև ժողովուրդն է, որ, իր դարավոր փորձից ելնելով, հաստատում է հավիտենական արժեքները: Դառնալով տաղասաց-աշուղ՝ Չարենցն իրեն ստիպում է մտնել ժողովրդի բնական պարզության աշխարհը, այնտեղ որոնել կեցության պարզ հիմքերն ու աշխարհահիացման, մարդկային հարաբերությունների ու կյանքի մասին իմաստությունների ամբողջությունը:

Ապա տալիս ենք բացատրությունն այն հարցի, թե ինչու է հեղինակը դիմել հենց Սայաթ-Նովային, այն Սայաթ-Նովային, որը, Պարույր Սևակի բնորոշմամբ, հայ գրականության «մեծ գանգատավորն էր ու բեզարածը»:

Այն Սայաթ-Նովան, որ հիանալով բեզարեց և ի վերջո կանգնեց փակուղու առաջ ու դատապարտվելով՝ հագավ կրոնավորի սքեմը:

Սրանք հարցեր են, ավելացնում ենք մենք, որոնց պատասխանը տալիս է «Տաղարանը»: Այստեղ Չարենցը ոչ թե նմանագրել է Սայաթ-Նովային, ոչ թե դիմել է գրչական ոճագրության, այլ ընդհակառակը՝ «սայաթնովյան երանգներով» շատ դեպքերում վիճում է միջնադարի երգչի հետ՝ նրա դառնությանը դեմ դնելով իր հոգու խենթ ազատությունն ու զվարթությունը, նրա բեզարածությանը դեմ է դնում վայելումի քաղցրությունը, իսկ հուսահատությանը՝ իր երբեք չմարող լավատեսությունը:

Քանի որ Չարենցը ոչ միայն ժամանակի մեծ բանաստեղծներից էր, այլև գրականության զարգացման ընթացքին էր հետևում, հասկացավ, որ թարմություն է պետք տիրող ճգնաժամը հաղթահարելու համար, համենայնդեպս Չարենցն այդպես էր կարծում: Սայաթ-Նովային դիմելն ուներ նաև մի այլ խորհուրդ. Սայաթ-Նովան հայ ժողովրդի հպարտությունն է, միջնադարյան պոեզիայի վերջին ձայնը, նոր պոեզիայի մեծ ու արքայական սկիզբը:

Սայաթ-Նովայի երգերը նրա հետնորդներին պարտավորեցրել են գետնին չթողնել հայկական բառը, աչքի լույսի պես պահպանել հայկական խոսվածքը, կյանքում միշտ բարձր դասել բարին, գեղեցիկն ու ազնիվը, գնահատել սիրո և բարեկամության մեծ ուժը:

Եվ ահա Չարենցն իր առաջ խնդիր է դնում՝ սիրել Սայաթ-Նովայի պես, ներել ու հավատալ, վիճել ու խոնարհվել, պաշտել ու փառաբանել նրա բառամթերքով: Սայաթ-Նովան ոչ թե նմանակվում, այլ վերամարմնավորվում է Չարենցի մեջ՝ մնալով Չարենցին հարազատ:

Ապա ամփոփելով մեր խոսքը՝ ասում ենք, որ «Տաղարանը» մի ամբողջական սյուժե է՝ սկզբով, ընթացքով, ավարտով, սյուժե, որտեղ գլխավոր հերոսը՝ Տաղասացը, պարզում է ընդհանրապես իր հարաբերություններն աշխարհի և այդ մեծության առանձին արժեքների հետ: Այն դառնում է մի համահավաք ամբողջություն, մի յուրահատուկ սիրավեպ աշխարհի հետ: Սիրո, երազի, կարոտի, դառնության, գանգատի, բաժանման հակադիր զգացմունքներով ողողված այս շարքն իսկական հարստություն է հայ գրականության համար, անկրկնելի ու յուրահատուկ մի կոթող՝ Սայաթ-Նովայի

խոսքով, Չարենցի ոգեղենությամբ ու հոգով՝ նվիրված իր միակ ու անկրկնելի սիրուն՝ Արփենիկին:

Հարցերով ամրապնդում ենք և անցնում դասի շարունակությանը:

«Խթանող հարցեր» մեթոդի կիրառմամբ երկրորդ խթանումն ենք կատարում: Մեթոդի էությունն այն է, որ ուսուցիչը նախապես պատրաստում է դասի նյութի հետ անմիջականորեն առնչվող հարցեր, որոնց պատասխանները զետեղված են դասի տեքստի մեջ: Այս մեթոդը կարող է կիրառվել համարյա բոլոր թեմաների ուսուցման ընթացքում: Սրանով վեր ենք հանում սովորողների նախնական գիտելիքները ուսուցանվող թեմայից: Ավարտելուց հետո անցնում ենք թեմայի ուսուցմանը:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ: Մինչև բուն դասի յուրացմանն անցնելը, հավելում ենք, որ «Տաղարանը» ներառում է 20 բանաստեղծություն և ավարտվում է **«Ես իմ անուշ Հայաստանի»** բանաստեղծությամբ:

Ուսուցիչը պետք է հստակեցնի դասի բովանդակային նպատակները: Դասի ընթացքում ի՞նչ գիտելիքներ ենք ուզում հաղորդել սովորողներին: Անհրաժեշտ է իմանալ, որ բովանդակային նպատակը աշակերտների գիտելիքի ձեռքբերումն է, ակադեմիկական գիտելիքների հաղորդումը (ճանաչողական և զարգացնող), ուսուցման դաստիարակչական բնույթը:

Ակադեմիական նպատակները կախված են առաջադրանքի կազմակերպման ձևից, թե որքանով է այն ենթադրում փոխօգնության, համագործակցության անհրաժեշտություն: Սոցիալական հմտությունների ձևավորման, զարգացման նպատակը աշակերտների՝ մյուսներին օգնելու և խմբի անդամներին խրախուսելու, արդյունավետ շփվելու, համագործակցելով խնդիրներ լուծելու հմտությունների ձեռքբերումն է:

Ուսուցիչը մեկ դասի համար կարող է ընտրել մեկ կամ երկու հմտություն, որոնց ձևավորումը առավել հրատապ է համարում: Երբ արդեն հստակեցված են դասի ակադեմիական և սոցիալական նպատակները, անցնում ենք նոր նյութի ուսուցմանը՝ աշակերտակենտրոն ուսուցում կազմակերպելով: Դասի այս փուլում կիրառում ենք ***«Ձնագնդի»*** մեթոդը:

Մեթոդի կիրառման նպատակը միմյանց հետ շփվելը, կարծիքներ փոխանակելը, խմբովի ընտրություն կատարելը, տեղեկույթ հավաքելը և խմբի գաղափարները, կարծիքները միասին արտահայտելն է:

Ուսուցիչը դասարանը բաժանում է 4-հոգանոց խմբերի: Ապա կարդում է **«Ես իմ անուշ Հայաստանի»** բանաստեղծությունը:

Սկզբում հանձնարարվում է անհատական աշխատանք. յուրաքանչյուրն ինքնուրույն կարդում է բանաստեղծությունը՝ պատասխանելով հետևյալ հարցերին. «Ի՞նչ միտք ծագեց ընթերցելիս: Գրե՛ք ձեր գաղափարների (կարծիքների) ցանկը այս պատմության վերաբերյալ» (4 րոպե):

Այնուհետև հանձնարարում ենք զույգեր կազմել և միմյանց ներկայացնել իրենց անձնական կարծիքները թեմայի վերաբերյալ: Ապա զույգով ձևակերպում են երկուսի համար ընդհանուր 3-5 կարծիք, որոնք վերցվում են իրենց անհատական կարծիքների ցանկից: Պետք է դրանք գրել թղթին կամ թղթապաստառին (6 րոպե):

Ապա կազմում ենք 4-հոգանոց խմբեր: Երկուական 2-հոգանոց խմբերը միանում են և կազմում 4-հոգանոց մեծ խմբեր: Խմբերը ներկայացնում են իրենց կարծիքները, պարզում նմանությունները և տարբերությունները (ընթացքում նրանք կարող են ավելացնել նաև նոր կարծիքներ): 4-հոգանոց խմբերի ներսում զույգերով ներկայացնում են իրենց գրած կարծիքները և խմբավորելով՝ ներկայացնում են նոր ձևակերպած 4 ընդհանուր կարծիք ամբողջ խմբի համար: Խումբը գրում է դրանք առանձին թղթի վրա (8 րոպե): Այստեղ շատ կարևոր է, թե արդյոք բոլո՞ր մասնակցեցին քննարկմանը 4-հոգանոց խմբով աշխատելիս:

Հնարը յուրաքանչյուր մասնակցին խմբում ներգրավելու միջոց է: Յուրաքանչյուր անհատ հաշվետու է ստեղծելու, ձևափոխելու, համեմատելու, լսելու և ներկայացնելու համար: Միևնույն ժամանակ պետք է հետևենք խմբերի դեմ առ դեմ փոխազդեցությանը և անհրաժեշտության դեպքում մասնակիցների ուշադրությունը հրավիրենք դրա վրա՝ հատկապես 4-հոգանոց խմբերում: Հանձնարարում ենք թղթապաստառները փակցնել դասարանի տեսանելի պատին. տեղի է ունենում գաղափարների ներկայացում:

Առաջին խումբը ներկայացնում է, որ բանաստեղծությունը նվիրված է Հայաստանին, հայ ժողովրդին, մեր հայրենիքին, որտեղ երևում է Չարենցի հայրենասեր, ձգտող ու հպարտ ոգին:

Եղիշե Չարենցը սիրում է մեր երկինքը մուգ, սիրում ու պաշտում է նրա ողբանվագ լարը, նաիրյան աղջիկների հեզաճկուն պարը, բուքը, խրճիթները.... ամեն, ամեն ինչ:

Մյուս խումբը ներկայացնում է, որ իրենք սիրում են այս բանաստեղծությունը ոչ միայն գեղեցիկ բառերի ու արտահայտությունների համար, այլև Չարենցի մտքի, այսքան շատ սիրո, մարդկանց մեջ պայքարելու ցանկություն ստեղծելու համար, մեր բնության գովերգության համար: «Ես իմ անուշ...» բանաստեղծության մեջ հայրենի բնության կողքին փառաբանված են նաև հայոց լեզուն, երաժշտությունը և գրականությունը՝ հանձինս Քուչակի և Նարեկացու:

Երրորդ խումբը, այնուամենայնիվ, «Ես իմ անուշ...»-ը ընկալում և մեկնաբանում է որպես գովք Հայաստանի: Բանաստեղծության առաջին երեք տներում ծփացող դառնանուշ խոհերը աստիճանական կուտակումով վերջին տան մեջ փոխարկվում են ոգևորության հորձանքի, որն իր գագաթնակետին է հասնում վերջին տողում՝ «Որպես անհաս փառքի ճամփա՛, ես իմ Մասիս սա՛րն եմ սիրում»: Ահա հենց այս ոգևորությունն է, որ տարածվում և իր տիրական շնչով վարակում է ամբողջ բանաստեղծությունը՝ վեհացնելով ու վսեմացնելով նախորդ տողերի և առանձին բառերի մեջ խտացված տառապանքն ու վիշտը:

Խմբերից մյուսն էլ ներկայացնում է, թե ինչ է ասել Վիլյամ Սարոյանն այս բանաստեղծության մասին. «Չարե՜նցը, Չարե՜նցը... «Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում...»: Անոր չհանդիպած՝ գիտեի արդեն իր այս քերթվածը: Սկսած էի արտասանել Ամերիկայի մեջ: Ամեն մեկ բառ բացատրել տված էի ու գրեթե գոց սորված: Զայն մինչև այսօր կնկատեմ մեր երկրին, մեր հողին, մեր պատմության նվիրված ամենեն գեղեցիկ երգը, գովաբանական աղոթքը: «Հայր մեր»-ին նմանվող աղոթք մը»:

Մյուս խումբն էլ եզրափակում է թեման՝ ասելով, որ ինչպես արդեն ասվել է՝ Չարենցի շարքը բաղկացած է 20 տաղից: Տաղը միջնադարյան բանաստեղծության ընդհանուր բնորոշումն է, որ այստեղ ստացել է Սայաթ-Նովային բնորոշ աշուղական ձև:

Շարքի 1-18-րդ տաղերն ունեն սիրային բովանդակություն: Չարենցը երգում է գոզալի կերպարանքով հարություն առած իր բարձր սերը, որն այդպես էլ մնում է անհասանելի: Վերջին երկու տաղերն ունեն հայրենասիրական բովանդակություն: Կնոջ անմատչելի սիրուց նա հասնում է հայրենիքի անփոխարինելի ու բացառիկ սիրո գովերգությանը, որի ամփոփումն է դառնում «Ես իմ անուշ Հայաստանի...» բանաստեղծությունը:

ԿՇՌԱԴԱՏՈՒՄ: Բանաստեղծության բովանդակությունը ներկայացնելուց հետո հանձնարարում ենք բնագրից դուրս գրել դրական և բացասական իմաստ արտահայտող մակդիրները:

Հանձնարարվում է այս փուլի աշխատանքը:

• Ինչո՞վ է արտահայտվում բանաստեղծության գեղագիտական ճաշակը: Ներկայացնել դրական ու բացասական իմաստով գործածված մակդիրները:

Դասարանը բաժանվում է երկու մեծ խմբերի. մի խմբին հանձնարարվում է բնագրից դուրս գրել բացասական իմաստ արտահայտող մակդիրները, մյուս խմբին՝ դրական:

Ժամանակը լրանալուց հետո խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքները:

Խմբերից մեկը ներկայացնում է իրենց առաջադրանքը: Որպես առաջին հարցի պատասխան՝ բավական է առանձնացնել բանաստեղծության մակդիրները, որոնք հիմնական դեր են կատարում ընդհանուր կառուցվածքի մեջ: Դրանք կարելի է բաժանել երկու՝ դրական և բացասական լիցքերով հակադիր խմբերի:

Դրական իմաստ ունեցող մակդիրներն են՝ ***արևահամ, վառման, հեզաճկուն, մուգ, ջինջ, լուսե, վսեմ, հազարամյա, աղոթք դարձած, լուսապսակ, ճերմակ, անհաս փառքի ճամփա:***

Ապա ավելացնում են, որ թվով 24 մակդիրներից 12-ը, ինչպես տեսնում ենք, կարելի է համարել դրական, իսկ 12-ը՝ բացասական: Այսպիսով՝ զարմանալիորեն հավասարակշռությունը պահված է:

Մյուս խումբը ներկայացնում է, որ թվով 12 բացասական նշանակությամբ մակդիրներ կան բնագրում: Դրանք են՝ ***ողբանվագ, լացակումած, արնանման, վիշապաձայն, մթում կորած, անհյուրընկալ, սև, ողբաձայն, արյունաքամ, որբ, արնավառ:*** Բայց հարկավոր է տեսնել և զգալ, որ այստեղ որոշիչը ոչ այնքան քանակական հավասարությունն է, որքան օգտագործված մակդիրների լիցքային բեռնվածությունը, որը զգալիորեն ծանր է կշռում բացասական կողմի վրա:

Այստեղ միջամտում է ուսուցիչը՝ ասելով, որ հարկավոր է կատարել նաև մի երկրորդ բաժանում՝ ըստ բնութագրվող առարկաների: Այս առումով

էլ այստեղ մակդիրները բաժանվում են երկու խմբի՝ բնության մակդիրներ և պատմամշակութային մակդիրներ:

Սովորողներն ուսուցչի օգնությամբ դասդասում են՝

ա) Բնության մակդիրներ, թվով՝ 8 (6 դրական, 2 բացասական),

բ) Պատմամշակութային մակդիրներ, թվով՝ 16 (6 դրական, 10 բացասական):

Ապա ուսուցիչը պարզաբանում է, որ այս վերջին 10 ուժեղ մակդիրներն էլ ոչ միայն թույլ չեն տալիս, որ «Ես իմ անուշ…»-ը Հայաստանի գովքը համարվի, այլև բանաստեղծությունը ավելի շուտ մոտեցնում են ողբերգի: ***Մթում կորած խրճիթները, ողբաձայն երգերը և արյունաքամ վերքերը*** կարելի է սիրել, բայց փառաբանել՝ ո՛չ: Ավելի ճիշտ, սա ազգի ողբերգական պատմությունն է ներկայացնում…

Գրական տեսակետից պետք է հիշել, որ յուրաքանչյուր տեքստ ո՛չ թե առանձին միավորների, տվյալ դեպքում՝ բառերի շարան է, այլ մի հյուսվածք, որտեղ մասնիկներն իրենց իմաստը կամ բազմաթիվ իմաստներից մի մասը փոխանցում են մյուս մասնիկներին ու ամբողջին, և փոխադարձաբար մյուս մասնիկներից և ամբողջից ստանում նրանց իմաստի ամբողջությունը կամ մի մասը: Ապա բերում ենք մի օրինակ:

Երբ բանաստեղծն ասում է՝ «Արնանման ծաղիկների ու վարդերի բույրը վառման», ծաղիկն ու վարդը արյունից վերցնում են միայն նրա գույնը, վառման բառի ազդեցությամբ նաև ջերմությունն ու եռքը և, ընդհակառակը, հետ են մղում այդ բառի մեջ առկա ոճիր ու նախճիր իմաստը, ակնարկն այն մասին, որ այդ ծաղիկները ողողված են հայ ժողովրդի անմեղ արյամբ: Մյուս կողմից՝ արյուն բառն ասես կորցնում է իր հոտը (արյան հոտ) և օժտվում վարդերի վառման բույրով:

Այս ամենից հետո ամփոփում ենք դասը՝ ասելով, որ «Տաղարանը» ավելի շատ դժվարություն է ներկայացնում իր տեսակով, ուստի ուշադրության կենտրոնում պետք է պահել այն:

Ուսուցիչն իր ամփոփիչ խոսքում ներկայացնում է, որ «Տաղարան» շարքը յուրահատուկ տեղ է գրավում Չարենցի ստեղծագործության մեջ, քանի որ այստեղ նա կիրառել է գեղարվեստական մի այնպիսի հնարանք, ինչպիսին ոճավորումն է: Ոճավորման ակունքը Սայաթ-Նովայի խաղերն են: Չարենցը նախ կենդանացնում է Սայաթ-Նովայի կերպարը, որը հայտն-

վում է նրա երազում, ապա՝ գոզալի կերպարը: Միջնադարի մթնոլորտ ստեղծելու նպատակով ընտրում է Սայաթ-Նովայի խաղերին համապատասխան ձևը (մուխամազ, գազել), համապատասխան լեզու, համապատասխան միջավայր, որը Թիֆլիսն է, Հավլաբարի հայաբնակ թաղը:

Աշակերտը նաև պետք է հստակ իմանա, որ «Տաղարան» շարքն ունի որոշակի դիպաշար. սիրահարը պատրաստ է ամեն ինչի, միայն թե արժանանա գոզալի սիրուն, բայց՝ ապարդյուն: Ահա հոգեբանական զարգացման այս գագաթնակետին ծնվում է «Էլի գարուն կգա, կբացվի վարդը» տաղը, որը Չարենցի խոհն է կյանքի անցողիկության մասին: Այս տաղն ինչպես հարկն է իմաստավորելու և Սայաթ-Նովայի հետ առնչությունները ցույց տալու նպատակով ցանկալի է դասարանում կարդալ Սայաթ-Նովայի «Մե խոսք ունիմ իլթիմազով» խաղը և ցույց տալ պատկերային այն ընդհանրությունը, որ կա երկու գործերի միջև:

Աշխարհից նեղացած, գոզալի անտարբերությունից խռոված և շրջապատի կողմից չհասկացված ցաված հոգու երգն են ներկայացնում երկու հեղինակները:

Այստեղ ուսուցիչը պետք է առավել մեծ ուշադրություն դարձնի «Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում» տաղի բացատրության վրա: Կարդալուց հետո ցանկալի է ներկայացնել կարծիքներ այդ տաղի մասին (Մ. Սարյան, Վ. Սարոյան, Ա. Իսահակյան):

Անհրաժեշտ է, որ աշակերտը գիտակցի՝ գոզալի սիրո մերժումն ստանալուց հետո, ինչն անցավոր սեր է, Չարենցն անցնում է հայրենիքի անանց ու հավերժական սիրուն: Ահա դրանց արտահայտությունն են շարքի 19-րդ («Հայաստանին») և 20-րդ («Ես իմ անուշ Հայաստանի...») տաղերը: Այստեղ Չարենցը կենդանացնում է ամբողջ Հայոց աշխարհը՝ իր լեզվով, բնապատկերով, պատմությամբ ու Արարատի խորհրդանիշով:

Աշակերտը պետք է գիտակցի *«արևահամ բառ»-ի* իմաստը: Դրա համար նրան անհրաժեշտ է ներկայացնել Հովհաննեսի Ավետարանի առաջին տողերը. *«Ի սկզբանե էր Բանն, և Բանն էր առ Աստված, և Աստված էր Բանն»:* Նշանակում է՝ «Սկզբում Խոսքն էր, և Խոսքը Աստծունն էր, և Աստված Խոսք էր»: Աստված խոսք էր: Ահա Չարենցն էլ իր տաղն սկսում է, ինչպես Հովհաննես ավետարանիչը: Պետք է *«բառ»* լիներ, որպեսզի գեղար-

վեստական պատկերը ներքուստ զարգանալով հասներ ողբաձայն երգի, երկաթագիր գրքի, Նարեկացու ու Քուչակի:

Չարենցի *«արևահամ բառ»*-ը թյուրիմացաբար երբեմն տպագրվում է *«բար»* սխալ ձևով:

Այս կապակցությամբ պետք է իմանալ հետևյալը:

Չարենցի այս տաղը 1922-ին տպագրվել է նրա մոսկովյան երկհատորյակի մեջ *«արևահամ բառ»*-ը ձևով: Նույն թվականին տեղ է գտել Հարություն Սուրխաթյանի կազմած «Գրական գոհարներ»-ի մեջ: 1927 թ. գրականագետ Սիմեոն Հակոբյանն այն զետեղել է իր կազմած «Կարմիր արև» դասագրքում, որտեղ տպագրվել է *«բար»* ձևով: Սա կամ ակնհայտ վրիպակ է, կամ դասագիրք կազմողը գիտակցված ցանկացել է Չարենցին փրկել նրան հասցեագրվող ազգայնամոլի պիտակից:

Համոզվելու համար, որ *«բար»* ձևը սխալ է, պետք է նշել, որ 1928 թ. այդ տաղը թարգմանաբար տպագրվել է ռուս քննադատ Վ. Սուտիրինի «Անդրկովկասի գրականության ակնարկներ» գրքում *«արևահամ բառ»* ձևով: *«Արևահամ բառ»*-ը առկա է նաև 1936 թ. գերմաներեն թարգմանության մեջ (թարգմանիչ՝ Վաչե Աբեղյան): Անտեղի չէ նշել նաև այն փաստը, որ 1942 թ. Հակոբ Օշականը «բառ» ձևով այդ բանաստեղծությունը ներգրավել է իր կազմած «Հայ գրականություն» դասագրքում (Դ. Գասպարյան):

Չարենցի այս տաղը կարելի է զուգադրել Վահան Թեքեյանի «Տաղ հայերեն լեզուին» (1913) բանաստեղծության հետ և կատարել բառապատկերային, կառուցվածքային վերլուծություն՝ ցույց տալու, որ Թեքեյանն ասում էր. *«Մրգաստանի մը նման կը սիրեմ քեզ, Հայ լեզու»,* իսկ Չարենցը՝ *«Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում»:*

Համեմատության համար պետք է ներկայացնել Վահան Թեքեյանի «Տաղ հայերեն լեզուին» գործը՝ նմանությունները գտնելու համար:

Վերստին պետք է ասել ու ամրապնդել ասածը՝ Չարենցը գրում է *«արևահամ բառ»*՝ դրանով ակնարկելով Հովհաննեսի Ավետարանը, որը բացվում է այդ տողերով: Այսինքն՝ ամեն ինչի սկիզբը բառն է, խոսքն է, որ իր մեջ հոգի է կրում:

Պիտի բառ լիներ, որ Չարենցը հասներ ողբաձայն երգերի, երկաթագիր գրքերի, Նարեկացու ու Քուչակի նման լուսավոր անունների, հակառակ

դեպքում Նարեկացուն ու Քուչակին կփոխարինեին մրգի՝ բարի (պտուղի) տեսակները՝ դեղձ, խաղող, սալոր, տանձ ու խնձոր:

Բանաստեղծությունն անհրաժեշտ է ենթարկել նաև տաղաչափական ու պատկերային վերլուծությունների:

Պետք է բացատրել, որ այն գրված է արաբական միջնադարյան պոեզիային բնորոշ մուխամազի ձևով: Մուխամազ եզրույթը արաբերենից թարգմանաբար նշանակում է հնգապատկված: Սայաթ-Նովայի կիրառած հիմնական ձևն է, աչքի է ընկնում տների հանգավորման, կիսատողերի կամ բառերի կրկնությունների, ներքին հանգի առկայության յուրահատկություններով՝ լեզվական ճոխությամբ:

Ուսուցիչը պետք է բացատրի, որ Չարենցի տաղն ունի *«եմ սիրում»* տողավերջյան կրկնությունը, ինչը հանդիպում է առաջին տան 1-ին, 2-րդ, 4-րդ և մնացած տների 4-րդ տողերում:

Դրան նախորդում են հարուստ հնչեղություն ունեցող հանգեր:

Հնչեղ հանգերով կրկնվող բառեր կան նաև այլ տներում. «երգերը մեր», «գրքերը մեր», «վերքերը մեր» *և* «հեքիաթ չկա», «ճակատ չկա», «գագաթ չկա»:

Անհրաժեշտ է առանձնացնել մակդիրները, համեմատությունները, որոնք լեզվական ճոխություն են հաղորդում տաղին՝ *«արևահամ բառ» և այլն:*

Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում» տաղը գեղարվեստական մտածողության թե՛ ամբողջական համակարգով, թե՛ առանձին մանրամասներով մխրճված է հայ ժողովրդի պատմամշակութային գոյաբանության մեջ: Այն համապարփակ ու ընդգրկուն երկ է, որ ի մի է բերում հայ ժողովրդի ծագումնաբանական-ժառանգորդական տոհմիկ հատկանիշները և ստեղծում ազգային տեսակի միասնական անաղարտ պատկերը: Դա և՛ ազգային հոգեբանություն է, և՛ ազգային նկարագիր, և՛ հայրենի բնաշխարհ, որոնք գեղարվեստական խոսքի մեջ օղակում են առասպելաբանությունն ու պարզ իրատեսությունը:

Չարենցի տաղի բառապատկերային ատաղձն ունի և՛ հնագույն վիպական դյուցազներգական շերտեր, և՛ նորագույն: Հնագույնը տանում է դեպի դարերի խորքը՝ հայոց մատենագրություն, հայոց բնաշխարհին համապատասխանող հայոց բառարվեստ, պատմականորեն ձևավորված ազգա-

յին հոգեբանություն: Նորագույնն առնչվում է Չարենցի ժամանակակից հայ պոեզիայի երկու Վահաններին՝ Տերյանին ու Թեքեյանին:

Չարենցը թեև 24 տարեկան էր, բայց արդեն ժամանակի պոեզիայի գլխավոր դեմքն էր, այս գլուխգործոցի հեղինակը, ինչը հետագայում Վիլյամ Սարոյանը պիտի բնորոշեր որպես մեր ազգային տերունական աղոթքը՝ «Հայ մեր»-ը, իսկ Մարտիրոս Սարյանը համարեր *«բոլոր մասշտաբներից դուրս պաննո՝ հասցված ժողովրդական էպոսի աստիճանի»:*

Ամփոփելով՝ պետք է ասել, որ «Տաղարան» շարքի նախորդ գործերում մերժվելով գոզալի սիրուց՝ Չարենցը հասնում է հայրենիքի սիրուն: Դա բարձրագույն ու անանց, անդավաճան ու միակ սերն է և, ինչպես ամեն մի սեր, պահանջում է զոհողություն, հարկ եղած դեպքում՝ անձնազոհություն, որին Չարենցը մշտապես պատրաստ է եղել:

«Ես իմ անուշ Հայաստանի...-ն» աշխարհն ի մի բերող ուժն է, ամեն ինչից անսահման վեր միակ պատգամը, որ ժողովրդի պատմության արշալույսից, սերունդների մաքառումների ու արյան գնով շնորհված է մարդուն: Բանաստեղծի սիրո խոստովանությունը վերածվում է հայրենիքի փառաբանության: Ամբողջ տաղը Հայաստանի ոգեղեն պատմության գեղարվեստական խտացումն է, որ, սկսվելով *«արևահամ բառից»,* հասնում է մինչև *«երկաթագիր գրքերը»* և այդ բառի ու գրքի բարձրագույն աստիճանը՝ Նարեկացի ու Քուչակ: Դրան հաջորդում է Արարատը՝ որպես ազգային բացարձակ արժեք, որ վաղուց վերածվել է Հայաստանի խորհրդանշանի. *«Աշխա՛րհ անցիր, Արարատի նման ճերմակ գագաթ չկա, // Ինչպես անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սարն եմ սիրում»:*

Սրբազան լեռը Չարենցը հիշում է կրկնակի անուններով՝ Արարատ և Մասիս, փառաբանում նրա գագաթի ճերմակությունը, որ նշանակում է թե՛ բարձրություն, թե՛ անարատ մաքրություն: Այդ հատկանիշներն ազգային ոգու խտացվածք լինելու հետ մեկտեղ այն դարձնում են անհասանելի: Իսկ քանի որ բանաստեղծի համար անհասանելիության չափանիշը գրական մնայուն փառքն է, ուստի այստեղ Արարատը դառնում է անհաս փառքի ճամփա:

«Անհաս» մակդիրը կարող է իմաստավորվել նաև կրկնակի բովանդակությամբ: *«Անհաս»* նաև այն պատճառաբանությամբ, ըստ որի՝ Արարատը, թանկ ու բաղձալի լինելով հանդերձ, գերված է, ինչպես ինքը կասեր,

«դարավոր ոսոխի կողմից»: Եվ ինչքան էլ ցանկանաս հասնել նրան, իրականում չես կարող: Կարող ես միայն մտովի:

Աշակերտի համար պետք է բացահայտել Արարատի խորհուրդը, որով ավարտվում է բանաստեղծությունը:

Հարցերով ամփոփում ենք դասը և հանձնարարում տնային աշխատանք՝ անգիր սովորել բանաստեղծությունը:

ԱՆԴՐԱԴԱՐՁ: (3 րոպե)

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ
(4 ժամ)

ԴԱՍ 2

ԹԵՄԱՆ՝ «Հայ ժողովրդի երգը» բանաստեղծությունը: (1 ժամ)

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 45 րոպե

ՆՊԱՏԱԿԸ՝ Ծանոթացնել «Հայ ժողովրդի երգը» բանաստեղծությանը: Նպաստել հասկանալու բանաստեղծության գաղափարը:

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Կիմանա՝

- բանաստեղծության բովանդակությունը և արտահայտած գաղափարը,
- հոգու աշխարհի ու բնաշխարհի միավորումը բանաստեղծության մեջ,
- անձնական ապրումների ու բնության պատկերների զուգակցումը բանաստեղծության մեջ,
- բանաստեղծության կառուցվածքը և տաղաչափական պատկերը:

Կկարողանա՝

- ճիշտ առոգանությամբ արտասանել բանաստեղծությունը,
- ներկայացնել քնարական հերոսին ու նրա արտահայտած հույզերը,
- մեկնաբանել բանաստեղծությունը,

- վերարտադրել գործողությունների գարգացման ընթացքը,
- համեմատել իր կարդացած, լսած ստեղծագործությունն իրեն ծանոթ այլ ստեղծագործության հետ,
- խմբի անդամների հետ մասնակցել հարցի քննարկմանը,
- կենտրոնանալ հիմնական ասելիքի վրա,
- մեկնաբանել բանաստեղծությունը, զուգահեռներ անցկացնել երկի բովանդակության, հեղինակի կենսագրության ու ապրած ժամանակաշրջանի միջև,
- առոգանությամբ կարդալ (անգիր) և դատողություններ *անել* բանաստեղծության վերաբերյալ,
- բանաստեղծությունից ելնելով՝ *արտահայտել* սեփական դիրքորոշումը, դրսևորել սեր և հարգանք իր հայրենիքի, հայրենի բնության, հեղինակի ապրումի և հույզի, երազանքների վերաբերյալ,
- բացատրել և հիմնավորել բնագրի սեփական մեկնաբանությունը,
- արձակ շարադրանքով ներկայացնել բնագիրը՝ նրանից վերցրած հենակետային բառերի միջոցով,
- գտնել ու տարբերել բնագրի մակդիրներն ու համեմատությունները՝ դրանք ստեղծագործաբար կիրառելով գրավոր կամ բանավոր խոսքում:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ՝ «Նախնական կազմակերպիչ», «Չորս բանալի, մեկ կողպեք», «Կարճ դասախոսություն», «Հարցերի քարտարան»:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ՝ դասագիրք, քարտեր, նշագրիչներ, գծակարգ, թուղթ:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ: Հանգամանորեն ստուգում ենք տնային հանձնարարությունները, կազմակերպում հին դասի հարցում՝ հարցերի միջոցով, և անցում ենք նոր ուսումնական նյութի ուսուցմանը:

ԽԹԱՆՈՒՄ: «Նախնական կազմակերպիչ» մեթոդը շատ արդյունավետ է խթանման փուլում սովորողների հետաքրքրությունը շարժելու համար: Մեթոդի էությունը սովորողների ուշադրությունը կենտրոնացնելն ու հետաքրքրություն առաջացնելն է: Օրինակ՝ գրողների կենսագրության ուսուցման ընթացքում խթանման փուլը կարելի է սկսել տվյալ հեղինակի կյանքից որևէ հայտնի ու հետաքրքիր պատմության ընթերցմամբ կամ նկարների (կամ տեսաֆիլմի) դիտումով, որից հետո կազմակերպել փոքրիկ քննարկում:

Իսկ եթե, օրինակ, դասի թեման է «Հայ ժողովրդի երգը» բանաստեղծությունը, ապա կարելի է գրատախտակին գրել բանաստեղծության հետևյալ տողերը և սովորողներին հարցնել, թե ինչ են հասկանում այս տողերը կարդալիս. ***«Բախտս աստղերն են վեր պահել: //Չեմ նկատում քարեր ճամփիս: //Շանթն է բեկվում ճակտիս վրա: //Ինձ ելնելու քարեր կան դեռ»:*** Անընդհատ հարցեր ենք ուղղում դասարանին՝ նրանցից դուրս կորզելու պատասխանները՝ բացահայտելով նրանց տրամաբանական մտածողությունը: Երբ սովորողները ակտիվանում են, ապա անցնում ենք նոր նյութի ուսուցմանը:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ: Դասի այս փուլը սկսում ենք «Չորս բանալի և մեկ կողպեք» մեթոդի կիրառմամբ: Այս աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով: Մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում (ինչպես արձակ, այնպես էլ չափածո նյութերի ուսուցման ժամանակ), երբ թեմայում առկա են նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ: Այս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ ձևավորվում է ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, ինչպես նաև համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողություն:

Դասարանը բաժանում ենք խմբերի և հանձնարարում ենք «Հայ ժողովրդի երգը» բանաստեղծության յուրաքանչյուր տնից ընտրել մեկական առանցքային բանալի բառ կամ բառակապակցություն և գրել բանալիների վրա:

Ավարտելուց հետո յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր գրած բանալի բառերը և ձևակերպում եզրակացությունը՝ կողպեքը:

Այն մոտավորապես այս տեսքը կունենա.

Կողպեքը ձևավորում են բանաստեղծության արտահայտած գաղափարով, որը կարելի է ներկայացնել հետևյալ ձևով և գրել կողպեքի տակ. «Հեղինակը հայ ժողովրդին ներշնչում է նոր խիզախումների, իսկ դրա համար պետք է անկոտրում պահել հայի ոգին, հաղթահարել բոլոր դժվարությունները՝ քարերն ու սարերը, ահերն ու մահերը, դարերն ու գահերը, և երբեք չտրվել պարտվողական հոգեբանության»:

Ներկայացնելիս կատարվում է մտքերի փոխանակություն և քննարկում. Յուրաքանչյուրը պաշտպանում է իր տեսակետը, կատարվում են լրացումներ խմբերի կողմից: Ապա ուսուցիչը միավորային գնահատում է կատարում՝ հիմնավորելով այն:

Ուսուցիչն ամփոփում է թեման՝ ասելով, որ մեր պատմության ու ժամանակների քառուղիներով անցած հայ ժողովրդին սթափեցնելու նպատակով Շիրազը ոչ միայն անընդհատ թարմացնում էր մեր ազգային հիշողությունը,

այլև, անցյալի մաքառումների տոկունությամբ, ոգեպնդում է նրան: Այս տեսակետից անկրկնելի է «Հայ ժողովրդի երգը» բանաստեղծությունը, որն ունի «Վերելք» ենթավերնագիրը: Հեղինակը «Վերելք» ենթավերնագիրն է տվել՝ նկատի ունենալով, որ միայն պարտություններով ու կորուստներով չի կարելի դաստիարակել ժողովրդին: Մեր ազգային հոգեբանությունը ամրապնդելու համար անհրաժեշտ է վերականգնել նաև նաիրյան հինավուրց ցեղի պատմական արժանապատվությունը, որպեսզի արդի ժամանակներում նա երևա որպես կենսագոյության ծրագիր ու նպատակ ունեցող՝ որքան անցյալի, նույնքան էլ ապագայի ժողովուրդ:

Բանաստեղծությունը սկսվում է գարնանամուտի կենսախինդ տրամադրությամբ, և հեղինակը ուրվագծում է վերելքի մի ճանապարհ, որով ընթերցողը հաղթահարում է ոչ միայն իր ուղին խոչընդոտող քարերն ու սարերը, այլև դարերը: Նրա բախտը վեր են պահում աստղերը, այսինքն՝ այն ամենը, ինչը տանում է դեպի բարձունք:

Այս ոգեղեն թռիչքի պահին ջահել ու կայտառ են թե՛ ինքը, թե՛ ընթերցողը, թե՛ իր ձին: Արհամարհելով ամեն մի վտանգ ու խոչընդոտ՝ բանաստեղծության քնարական հերոսը գնում է նպատակների կատարման ճանապարհով.

Շանթն է բեկվում ճակտիս վրա,
Աչքերիս մեջ գարնան օրեր,
Ճամփես դեպի աստղերն անմեռ՝
Ինձ ելնելու քարեր կան դեռ,
Ինձ ելնելու սարեր կան դեռ,
Քարեր, սարեր, դարեր կան դեռ...
Մահ՝ չգիտեմ՝ կա՞, թե՞ չկա,
Ելնում եմ ես ահերն ի վեր,
Ելնում եմ ես մահերն ի վեր,
Ահեր, մահեր, ջահերն ի վեր:

Այսպիսով՝ «Հայ ժողովրդի երգը»-ը Շիրազը բնորոշել է որպես «Վերելք»-ի երգ: Ամբողջ բանաստեղծությունը լի է ուժով, երիտասարդական ավյունով: Իսկապես վերելքի խրոխտ քայլերգ կարելի է համարել այս բանաստեղծությունը:

ԿՇՌԱԴԱՏՈՒՄ: Այս փուլում, նյութի յուրացման աստիճանը ստուգելու նպատակով, հանձնարարում ենք կատարել խմբային աշխատանք: Դասարանը բաժանում ենք 5 խմբի, և յուրաքանչյուրին, քարտերի վրա գրած, տալիս ենք հետևյալ առաջադրանքները.

Խումբ I

- Մեկնաբանել դուր եկած տունը և պատճառաբանել՝ ինչու:

Խումբ II

- Նկարագրել բանաստեղծության քնարական հերոսին:

Խումբ III

- Բացատրել նոր սովորած բառերի իմաստը և դրանցով կազմել նախադասություններ:

Խումբ IV

- Դուրս գրել համեմատություններն ու մակդիրները:

Խումբ V

- Ընթերցումից հետո կատարել բառային և բառարանային աշխատանքներ, բառերի բացատրություն, կազմել առկա հոմանիշների շարքեր:

Ավարտից հետո աշխատանքները կարդում են, կատարվում է գնահատում, ապա՝ անդրադարձ:

Հանձնարարում ենք տնային աշխատանք՝ բնագրից դուրս գրել գեղարվեստական պատկերավորման միջոցները և գործածել շարադրանքում:

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ
(6 ժամ)

ԴԱՍ 1

ԹԵՄԱՆ՝ Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր բնութագիրը (1 ժամ):

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 45 րոպե

ՆՊԱՏԱԿԸ՝

- ծանոթացնել Սահյանի կենսագրությանը:
- նպաստել զարգացնելու Սահյանի ստեղծագործությունների մասին ունեցած տեղեկությունը:

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Կիմանա՝

- ❖ արտահայտել սեփական կարծիք գրողի կյանքի մասին և նրա կյանքի պատմությունը կապել իրականության ու ժամանակաշրջանի անցուդարձի հետ,
- ❖ ներկայացնել Համո Սահյանի կենսագրության հիմնական փաստերը՝ կապելով դրանք հեղինակի ստեղծագործությունների հետ:
- ❖ պարզաբանել Համո Սահյանի կենսագրության հիմնական դրվագները (կարդալ բանաստեղծություններ, հուշեր),
- ❖ տալ Համո Սահյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը,
- ❖ թվարկել Համո Սահյանի ժողովածուների և բանաստեղծական շարքերի վերնագրերը,
- ❖ մեկնաբանել՝ ի՞նչ ազդեցություն է ունեցել Սահյանի մանկությունը նրա ստեղծագործության վրա:

Կկարողանա՝

- ներկայացնել Հ. Սահյանի կյանքն ու ստեղծագործությունը՝ նրա ապրած ժամանակաշրջանի համատեքստում,
- Կազմել ցուցակ/սահիկաշար՝ ներառելով գրողի կենսագրության, ապրած դարաշրջանի ուշագրավ փաստերը:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ՝ «Մտագրոհ», «Մանրապատում», «Կարճ զրույց», «Երևակայական էքսկուրս», «ՓԳՆՀԳԿՄ»:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ՝ դասագիրք, քարտեր, գծապատկերներ, նշագրիչներ, թուղթ:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ: Ստուգում ենք տնային հանձնարարությունները, կատարում ենք հին դասի կարճ հարցում, գնահատում ենք ոմանց և անցնում նոր նյութի ուսուցմանը:

ԽԹԱՆՈՒՄ: Դասը սկսում ենք մտագրոհով: «Մտագրոհ» մեթոդը անհատական, նաև խմբային աշխատանքի պարզագույն ձև է: Յուրաքանչյուր աշակերտ արտահայտում է սեփական տեսակետը, իր կարծիքը, հակադրվում կամ համաձայնում է մյուսների տեսակետին: Արտահայտված ոչ մի միտք չի մեկնաբանվում. պարզապես գրանցվում է թղթապաստառին կամ գրատախտակին:

Ուսուցիչը ընդգծում է, որ մտագրոհից հետո բոլոր մասնակիցները հնարավորություն կունենան արտահայտելու իրենց տեսակետները ցանկացած մտքի վերաբերյալ:



Բոլորի ասած բառերը գրում ենք ճառագայթների վրա՝ առանց մեկնաբանության: Երբ ավարտում ենք, խնդրում ենք, որ յուրաքանչյուրը մեկ նախադասություն կազմի, որ սկսվի հիմնաբառով (գործածում են միայն ձվածիրի շրջակայքի բառերը):

Համո Սահյանի կենսագրությունը ցանկալի է ներկայացնել՝ հղում կատարելով նրա բանաստեղծություններին, մանկության մասին հուշերին: Կարելի է կարդալ «Թե հնար լիներ», «Ընկերներ», «Տարիներս», «Հրաշք լիներ» և այլն (ուսուցիչը կարող է ընտրել ուրիշ բանաստեղծություններ):

Կարելի է երևակայության ճամփաներով գնալ Լոր՝ գծելով հետևյալ քարտեզը՝ Երևան-ԽորՎիրապ–Ձանգակատուն (Պարույր Սևակի տուն-թանգարան), Շաքիի ջրվեժ, Լոր-Գորիս (Բակունցի տուն-թանգարան) – Երևան:

Այնուհետև կարճ զրույցով ներկայացնում ենք, որ Սահյանի պոեզիայում ոչ թե մարդն է ներկայացնում բնությունը, այլ բնությունը՝ մարդուն, և բանաստեղծն ինքն էլ դառնում է բնության շրշյունը, հևքը, շնչառությունը:

Քարափն ինքը Սահյանն է, որ յուրաքնչյուրին «իրեն արժանի պատիվն է տալիս»:

Սահյանի կենսագրության և ստեղծագործության ընդհանուր պատկերը տալուց հետո անցում է կատարվում դասի հաջորդ փուլին:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ: Այս փուլում սովորողները ինքնուրույն սովորում են Համո Սահյանի կենսագրությունը, նրա բանաստեղծություններից դուրս են գրում կենսագրական փաստեր («Ինչո՞ւ հիշեցրի», «Նստել եմ մեր տան պատի տակ», «Թե հնար լիներ» և այլն), ի մի են բերում ստեղծագործության ընդհանուր պատկերը՝ նոր տեղեկությունների և փաստերի ուսումնասիրության միջոցով:

Հանձնարարվում է ինքնուրույն կարդալ դասագրքի համապատասխան նյութը և կարդալիս տետրում կամ գրքի վրա մատիտով նշում կատարել՝ փոխգործուն գրառումներ՝ հետևյալ նշաններով.

V – գիտեմ

- - իմ իմացածին հակասում է

+ - նոր տեղեկություն է

? – անհասկանալի է, շփոթեցնող

! – հետաքրքիր է, կարելի է քննարկել

Բնավ կարիք չկա բոլոր տեղերում նշումներ անելու, քանի որ այդ նշումները արտացոլում են տեքստի հետ սովորողի հարաբերությունները: Յուրաքանչյուր աշակերտ, ընթերցումից ստացած տեղեկությունը դասակարգելու համար, կազմում է իր անհատական աղյուսակը հետևյալ ձևով՝

V	-	+	?	!

Դասի յուրացումն ավարտելուց հետո պետք է պարզաբանվեն «անհասկանալի է, շփոթեցնող, կամ հետաքրքիր է, կարելի է քննարկել» նշումները:

Սա կենսագրական և ակնարկային թեմաներն ուսուցանելու համար, լավագույն մեթոդն է, քանի որ հնարավորություն է տալիս հենց դասարանում յուրացնելու նոր նյութը:

ԿՇՌԱԴԱՏՈՒՄ: Թեմայի յուրացումից հետո հանձնարարվում է գրել «5-րոպեանոց շարադրություն»՝ «Զրույց Սահյանի հետ» թեմայով: Աշխատանքի ավարտից հետո աշակերտները կարդում են հենց շարադրությունները, ապա գրատախտակին գրում են Սահյանի կենսագրությանն առնչվող աշխարհագրական և բուսական անունները:

Այնուհետև հանձնարարում ենք, որ աշակերտները, օգտագործելով գրված անուններն ու տեղանունները, բանաստեղծություն գրեն: Իմ գրածը հետևյալն է.

Լորիս կողքով Լորագետն է վազում,
Գյազբելս ուրախ ձեռքով է անում,
Իր լանջից մի առու է արձակում և
Ուրախ խառնում մեծ Լորագետին:
Մասրենին գլուխը հակել,
Ուզում է գրկել Լորագետը,
Աղմուկ-շառաչով թափվել Որոտան
Ու հնչեցնել երգը Սյունյաց Սահյանի…

Վերջում ուսուցիչը ամփոփում է թեման՝ լրացուցիչ տեղեկություններ հաղորդելով Սահյանի կյանքի և գրական գործունեության մասին: Ներկայացնում է Սահյանի ընտանիքը, խոսում նրա բանաստեղծուհի կնոջ՝ Մարիա Հակոբյանի նուրբ պոեզիայի մասին, կարդում Սահյանի մի գրությունը Մարիա Հակոբյանին՝ չկայացած ժամադրության արդյունքում:

Խոսվում է Սահյանի բանաստեղծական, բայց տխուր մանկության մասին, նրա որբության մասին, նրա հուշերում միշտ կենդանի Ալեքսանդր վարժապետի (Ակսել Բակունցի) կերպարի և հոգևոր ուսուցիչ լինելու մասին: Պատմում ենք նրա՝ Բաքվում ստացած ուսումնառության, այնուհետև Մեծ հայրենականում ծովայինի համազգեստով զինվոր լինելու մասին, «Նաիրյան դալար բարդու» ազատության համար պայքարող մարտիկի կարոտի և հավատի մասին: Մեծ հայրենականից վերադարձի և առաջին ժողովածուի՝ «Որոտանի եզերքին» նրբահյուս բանաստեղծությունների մասին:

Սահյանը միանգամից չնվաճեց ընթերցողին. նա իր Խաչիպապի նման հերկեց, ցանեց և ապա հավաքեց լիառատ հունձքը հետագա ժողովածուներում՝ «Մայրամուտից առաջ», «Քարափների երգը», «Սեզա՛մ, բացվի՛ր», «Իրիկնահաց» , «Կանչե՛, կռունկ», «Դաղձի ծաղիկ», և հետմահու հրատարակված՝ «Ինձ բացակա չդնե՛ք»: Իհարկե, Սահյանին անհնար է բացակա դնել, որովհետև մեր անխոնջ երթում նա միշտ կա:

Կարելի է զուգահեռ անցկացնել Շիրազի «Հին մանկություն» և Սահյանի «Ինչո՞ւ հիշեցրի» բանաստեղծությունների միջև:

Երկուսն էլ ապրել են «Մենք դարդի մեջ, չգիտեինք՝ դարդն ինչ է» տխրուրախ առօրյայով: Սահյանն իր գրական անունը ստացել է հոր՝ Սահակի առաջին վանկի և -յան- հայկական ազգանվան մեկտեղումով:

Սահյանը նաև հրաշալի թարգմանիչ է: Ռուս գրողներից նրան ավելի հոգեհարազատ է Եսենինը: «Իմ բանաստեղծական աշխարհի ճանապարհը ցույց է տվել Թումանյանը, իսկ բանալին տվել է Եսենինը»: Չափազանց մտերիմ են Թումանյանի Լոռու ձորը և Սահյանի քարափները: Ասես անվերջ է Լոռու ձորում «վա՜շ - վի՜շ» անող Դեբեդի և Լորագետի զրույցը, և մենք լսում ենք նրանց օրհներգը՝ ձոնված իրենց իմաստուն զավակներին:

Այնուհետև խոսում են ժողովածուների մասին. սովորողներն արդեն գիտեն՝ ինչ են բանաստեղծական շարքերը և ժողովածուները, ուստի արագ թվարկում են ժողովածուները, բացատրում վերնագրերը:

«Որոտանի եզերքին» - 1944 թ. այս ժողովածուի առաջաբանը գրում է Ստեփան Զորյանը՝ այսպես բնութագրելով Սահյանին. «Սյունյաց պատմական ձորերում հոսող Որոտանի եզերքին ծնվել է տաղանդավոր մի բանաստեղծ, որին վիճակված է երջանիկ ապագա»:

Նա գրում է մի շարք ժողովածուներ. «Առագաստ»-1947 թ., «Սլացքի մեջ»-1950 թ., «Ծիածանը տափաստանում»-1953 թ., Բարձունքի վրա»-1955 թ., «Նաիրյան դալար բարդի»-1958 թ., «Հայաստանը երգերի մեջ»-1962 թ., «Մայրամուտից առաջ»-1964 թ., «Քարափների երգը»-1968 թ., «Սեզա՛մ, բացվի՛ր» -1972 թ., «Կանչե՛, կռունկ» -1973 թ., «Իրիկնահաց» -1977 թ., «Տոհմի կանչը»-1981 թ., «Դաղձի ծաղիկ» -1986 թ. և այլն:

«Սեզա՛մ, բացվի՛ր» ժողովածուի համար նա արժանանում է ՀԽՍՀ պետական մրցանակի:

Ռուսերեն լույս է տեսնում Համո Սահյանի «Տարիներս» ժողովածուն, որի առիթով ռուս բանաստեղծ Լև Օզերովը գրել է. «Կարդալով Ձեզ՝ ուրախացա, որ տաղանդներով աներևակայելիորեն հարուստ Հայաստանում կա այնպիսի բանաստեղծ, ինչպիսին Դուք եք: Կարդալով Ձեր գիրքը, ես շատ անգամներ թաքուն մտածել եմ՝ Ձեզ հաջողվել է գրել այն, ինչ ես կուզենայի գրել: Իմ մտադրությունը իրագործել եք Դուք: Դա ծնում է ուրախություն և, իհարկե, շնորհակալության զգացում»:

Սահյանի ստեղծագործությունների գլխավոր կերպարը Հայաստան աշխարհն է՝ իր անցյալով ու ներկայով: Նրա երգերում կյանք են առնում Հայոց աշխարհի գետերը, քարափները, ձորերը, ծաղիկներն ու դաշտերը, ջրվեժներն ու ծիածանները: Այնտեղ «Ժայռից մասուր է կաթում», «վառվում են ամպերի փետուրները», «առուն ուշաթափվում է», «Ծաղկունքը հեղեղ է փրփրում», «Կարոտած ականջ է փնտրում ջրվեժի ճերմակ մի շառաչ», «Այծյամը կածանն է կտրում», «Հավքերը զույգեր են փնտրում»: Այսպես կարելի է երկար շարունակել: Սահյանի երգերում ամեն բառ հույզ է, զգացմունք, պատկեր, արցունք ու ժպիտ: Սահյանը ամեն վայրկյան բարձրանում է իր մանկության արահետներով՝ հայտարարելով. «Ես գրում եմ իմ մասին: Եվ այդ՝ իմ մասին գրած բանաստեղծություններում ուրիշները ճանաչում են իրենց»:

Ուսուցիչն ամփոփում է դասը՝ ասելով՝ մենք էլ մեզ ճանաչենք Սահյանի երգերում և մնանք մեզ հավատարիմ, բնությանը հավատարիմ, մարդուն հավատարիմ:

Կատարում ենք գնահատում, ապա՝ անդրադարձ:

Հանձնարարում ենք տնային աշխատանք:

ԴԱՍ 2, 3

ԹԵՄԱՆ՝ «Անտառում» բանաստեղծության բովանդակությունը և գաղափարը:

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 90 րոպե:

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Կիմանա՝

- բանաստեղծության արտահայտած հիմնական գաղափարը,
- որ ժողովածուում է զետեղված բանաստեղծութունը,
- պատկերել Հայաստանի բնությունը, պատմությունը, ծառերի ճակատագիրը՝ ըստ բանաստեղծության:
- անտառը՝ որպես Հայաստանի խորհրդանշի ընկալում:

Կկարողանա՝

- արտահայտիչ ընթերցել բանաստեղծությունը, մի հատված արտասանել,
- ներկայացնել բանաստեղծությունը արձակ շարադրանքով (պատմել),
- բնութագրել բանաստեղծության քնարական հերոսին,
- նկարագրել Հայաստանի բնությունը՝ ըստ բանաստեղծության,
- կապել բանաստեղծության իմաստը անձնական փորձի հետ,
- ներկայացնել բանաստեղծության հիմնական գաղափարը, ասելիքը.
- համեմատել այս բանաստեղծությունը սովորած որևէ այլ բանաստեղծության հետ՝ գտնելով ընդհանրություններ ու տարբերություններ,
- գտնել խորհրդանիշ բառը և դրանով կազմել աքրոստիկոս՝ թեմային համապատասխան.
- օգտագործել հեղինակային բառապաշարը՝ բանաստեղծությունը մեկնաբանելիս, վերլուծելիս,
- դուրս գրել գեղարվեստական պատկերավորման միջոցները, հիշել որևէ մեղեդի՝ բանաստեղծության հետ կապված,

- ❖ արժևորել բանաստեղծության մեջ արծարծված հույզերն ու ապրումները:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ՝ «Մտագրոհ», «Խթանող հարցեր», «Մանրապատում», «Վենի դիագրամ», «Համեմատական հնարանք»:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ՝ դասագիրք, քարտեր, բացիկներ, նշագրիչներ, A4 չափսի թուղթ:

ԴԱՍԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: Նոր նյութի յուրացման դաս:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ:

ԽԹԱՆՈՒՄ: Տնային հանձնարարությունների ստուգումից և սովորողներից ոմանց գնահատելուց հետո կարդում ենք հուշեր Սահյանի մասին (Դ. Գասպարյան «Համո Սահյան», Ս. Յուզբաշյան «Անցողիկն ու հավիտենականը», Շ. Դավթյան «Սահյանի հետ» գրքերից): Պատմում են կենսագրությունը՝ Սահյանի բանաստեղծություններով, հղում կատարում նրա ժամանակակիցներին՝ Սևակ, Դավթյան, Խանզադյան և այլք: Ապա ուսուցիչը կարդում կամ պատմում է հաղորդվող դասին համահունչ որևէ հուշ:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ: Կիրառվում է «Մանրապատում» մեթոդը. աշակերտներին առաջարկվում է իրենց կյանքից հիշել դեպք, որը մոտ կլինի «Անտառում» բանաստեղծության բովանդակությանը: Սովորողները ընթերցում են բանաստեղծությունը, առաջարկվում է կատարել քարտային աշխատանք՝ պատասխանելով հարցերին՝ ըստ հետևյալ հաջորդականության.

- ❖ Մեկ նախադասությամբ գրել բանաստեղծության բովանդակությունը:
- ❖ Տեքստից դուրս գրել մեկ հղում, որը բնութագրում է բանաստեղծությունը:

- Տեքստից ընտրել մեկ բառ, որը բնութագրում է բանաստեղծությունը:
- Նկարել էսքիզ կամ որևէ խորհրդանիշ, որն արտահայտի բանաստեղծության գաղափարը:
- Ի՞նչ գույն ունի բանաստեղծությունը, արդյո՞ք մեկ գույն կարող եք նշել, եթե՝ ոչ՛, ինչո՞ւ , եթե՝ այո՛, ինչո՞ւ:
- Կարո՞ղ ես ընտրել որևէ մեղեդի, որն արտացոլի բանաստեղծության բովանդակությունը:
- Քո իմացած ո՞ր բանաստեղծությունների հետ ընդհանրություն ունի այս բանաստեղծությունը:
- Հարցերի պատասխանները կարդալուց և ընդհանուր եզրակացության գալուց հետո անցնում ենք տեքստի գեղարվեստական և բառային վերլուծությանը:

ԿՇՌԱԴԱՏՈՒՄ: Ուսուցիչը նախապես դուրս է գրում բանաստեղծության հետ առնչություն ունեցող բառակապակցությունները. *ամպի ծվեններ, կապույտ մշուշներ, օրոր ասել անտառին, վայրի նշենի, բացատում հանգստացող հողմ, եղնիկի հորթ, մամուռ դունչ, թաց խոտեր, հեգքեր որոնող որսկան, փայտահատի սղոց, տապալված կաղնի, կանաչ եղևնի, խորին խորհուրդներ, չքնող անտառ*:

Այնուհետև սովորողներին առաջարկվում է մտածել, թե ինչ է կատարվելու այս բառերի հետ, ինչպես կապակցել դրանք, որպեսզի ստացվի բանաստեղծական պատկեր: Ամբողջ բանաստեղծությունը հարուստ է մակդիրներով, ուստի կարող ենք օգտագործել դրանք գրավոր խոսքում: Աշակերտների ակտիվ մասնակցությամբ բացատրում ենք յուրաքանչյուր մակդիրի իմաստը: Անտառի աշնանային պատկերը ներկայացնում են՝ գործածելով հեղինակային մակդիրները: Այստեղ Սահյանի ստեղծագործության հիմնական թեման Հայաստան է՝ իր աշնանային բնանկարով: Սահյանը պատկերել է աշնանային անտառի ճակատգիրը: «Անտառում» բանաստեղծությունը ամբողջությամբ Հայաստանի բնաշխարհն է՝ *ամպի ծվեններով ու կապույտ մշուշներ, պատված, որտեղ կարծես աշունը օրոր է ասում մեռնող անտա-*

ռին, վայրի նշենի մրսում է ցրտից, բացատում ականջն ամպրոպի ազդանշանին հանգստացող հողմը կրկին ծավալվելու վախ է ներշնչում դարավոր անտատին: Անտառի բնակիչները՝ մամուռ դունչին եղնիկի հորթ, թաց խոտեր, հետքեր որոնող որսկան, փայտահատը իր սղոցով, տապալված կաղնի, կանաչ եղևնին, սոճին տարված են իրենց մտորումներով, մի խոսքով՝ անտառն ամբողջությամբ խորին խորհուրդներով լեցուն է:

Կատարում ենք անդրադարձ և հանձնարարում տնային աշխատանք:

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ
(4 ժամ)

ԴԱՍ 2, 3

ԹԵՄԱՆ՝ «Քելե՛, լա՛ո» բանաստեղծության բովանդակությունը և գաղափարը:

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 90 րոպե:

ՆՊԱՏԱԿԸ՝ Ամրապնդել պատկերացումը տեքստում նկարագրված հայրենիքի, մարդկային ապրումի մասին:

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Կիմանա՝

- ❖ բանաստեղծության արտահայտած հիմնական գաղափարը,
- ❖ ներկայացնել բանաստեղծության բովանդակությունը,
- ❖ ո՞ր շարքում է զետեղված բանաստեղծությունը,
- ❖ իր տոհմի ծագումնաբանությունը և այն կապել բանաստեղծության հերոսի կենսագրությանը,
- ❖ գիտակցել իր ազգային պատկանելիության, հայրենիքի անփոխարինելիության, կարոտի ու արարման խորհուրդը:

Կկարողանա՝

- ❖ վերլուծել բանաստեղծությունը, ներկայացնել հիմնական գաղափարը,
- ❖ արժևորել բանաստեղծության մեջ արծարծված հույզերն ու ապրումները,
- ❖ կարդացած գրական ստեղծագործությունները կապել անձնական փորձի հետ,
- ❖ բանաստեղծությունը կապել իրականության հետ և սահմանել գլխավոր թեման,
- ❖ տալ քնարական հերոսի վարքագծի բարոյական գնահատում,

- գնահատել բնագրի բառապաշարը և հարստացնել սեփական բառապաշարը,
- բնագիրը վերարտադրել տարբեր ձևերով (համառոտ եւ ընդարձակ)՝ պատմելիս օգտագործելով հեղինակային բառապաշարը,
- անվանել բնագրի գեղագիտական արժեքները,
- գնահատել հեղինակի վարքագիծը և արտահայտել իր վերաբերմունքը:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ՝ «Նախնական կազմակերպիչ», «5-րոպեանոց շարադրանք», «3 բանալի և մեկ կողպեք», «Վենի դիագրամ», «Հարցերի քարտարան», «Ամփոփիչ հարցեր»:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ՝ դասագիրք, «Քելե՛, լաո» երգի ձայնասկավառակ, քարտեր, նկարներ, նշագրիչներ, A-1 չափսի թուղթ:

ԴԱՍԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: Նոր նյութի յուրացման դաս:

Այս դասի ընթացքում ուսուցիչը պետք է իրականացնի հետևյալ քայլերը՝

ա) հաշվի առնի մասնակիցների մտային ակտիվության ժամանակ ճանաչողության գործընթացի օրինաչափությունները,

բ) մատնանշի ուսուցանվող նյութի առավել կարևոր հատվածները,

գ) ձևավորի հիշելու և հիշողության մեջ մտապահելու կարողություն,

դ) զարգացնի մտապահման տեխնիկան:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ: Ստուգում են տնային առաջադրանքները՝ պարզելու տնային առաջադրանքի յուրացման աստիճանը, որոշելու ստացած գիտելիքների համընդհանուր թերությունները և դրանց պատճառները՝ հնարավորինս վերացնելու բացահայտված թերությունները, ապա անցում ենք կատարում նոր նյութի ուսուցմանը:

ԽԹԱՆՈՒՄ: Այս փուլում կիրառում ենք «Նախնական կազմակերպիչ» մեթոդական հնարքը: Այս մեթոդը շատ արդյունավետ է խթանման փուլում

սովորողների հետաքրքրությունը շարժելու համար: Մեթոդի էությունը հետևյալն է՝ սովորողների ուշադրությունը կենտրոնացնելու և հետաքրքրություն առաջացնելու նպատակով ուսուցիչը նախապես դուրս է գրում թեմայի հետ առնչվող մի քանի բառ կամ բառակապակցություն, գրատախտակին կամ ցուցապաստառին նախապես գրում է «Քելե՛, լա՛ո» բանաստեղծության հետ առնչվող հետևյալ բառերն ու բառակապակցությունները. ***մանգաղն ուսած, մախաղը մեջքին, համառ մի ուխտ ու հարցում, կա սահման ու կա վեճ հողի, հոգու միամիտ կանչ, խև խռովք, Սասնա տուն, երկիր ու երկինք, իմա՞լ չերթանք մըր էրգիր:***

Ապա առաջարկում է սովորողներին մտածել, թե ի՞նչ է կատարվելու այդ բառերի շրջանակում կամ ինչպես են իրար հետ կապվել այդ բառերը և դարձել բանաստեղծություն: Կարելի է հանձնարարել գրել փոքրիկ շարադրանք (5-րոպեանոց շարադրանք)՝ վերը նշված բառակապակցություններով:

Մի քանի աշակերտի կարդալ ենք տալիս, հետո առաջարկում ենք ընտրել վերնագիր (հետագայում համեմատելու բանաստեղծության վերնագրի հետ):

Անցնում ենք նոր նյութի ուսուցմանը: Ուսուցիչը արտահայտիչ կարդում է բանաստեղծությունը, ապա ունկնդրում ենք երգը:

Հարց ենք ուղղում դասարանին՝ ի՞նչ գույն ունի բանաստեղծությունը, միագո՞ույն է, թե բազմագույն, իսկ ե՞րգը, ի՞նչն է ընդհանուր երգի և բանաստեղծության մեջ: Ստորև՝ որպես ուղեցույց, տրված է վենի գծակարգը:

Բացատրում ենք, որ սովորողներն ապահովեն պատճառահետևանքային կապերը:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ: Դասի այս փուլում դասարանը բաժանում ենք խմբերի և կիրառում «3 բանալի և 1 կողպեք» մեթոդը: Այս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ ձևավորվում է ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողություն:

«Երեք բանալի և մեկ կողպեք» մեթոդն ենք կիրառում, բայց քանի որ բանաստեղծությունը կազմված է 7 տնից, դասարանը բաժանում ենք 3 խմբի՝ յուրաքանչյուր խմբին տալով 2 տուն, 7-րդ տունը մնում է ընդհանուր քննարկման համար:

Յուրաքանչյուր խմբի հանձնարարում ենք ամեն քառատողից դուրս գրել մեկ հենակետային բառ կամ բառակապակցություն բանալի բառ և գրել գրատախտակին կամ ցուցապաստառին նկարված բանալիների նկարի տակը կամ վրան:

Այս աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով: Մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում (ինչպես արձակ, այնպես էլ չափածո նյութերի ուսուցման ժամանակ), երբ թեմայում առկա են նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ: Այս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ ձևավորվում է ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, ինչպես նաև համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողություն:

Ավարտելուց հետո յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր գրած բանալի բառերը և ձևակերպում եզրակացությունը՝ կողպեքը:

Կողպեքը ձևավորում են բանաստեղծության արտահայտած գաղափարով, որը կարելի է ներկայացնել հետևյալ ձևով. ***«Հեղինակը հայ ժողովրդին ներշնչում է նոր խիզախումների, իսկ դրա համար պետք է անկոտրում պահել հայի ոգին, հաղթահարել բոլոր դժվարությունները:*** Բանալի

բառակապակցությունները ընտրելուց ու բանալիների վրա հենակետային բառակապակցությունները տեղադրելուց հետո ուսուցիչը հանձնարարում է կազմել կողպեքը: Երեխաները նկարում են կողպեքը, և յուրաքանչյուր խումբ, ըստ իր դուրս գրած բանալի բառերի և ըստ իր ընկալման, ձևակերպում է բանաստեղծության գաղափարը՝ հոգին ծվատող կարոտը կորուսյալ հայրենիքի հանդեպ, այդ հայրենիքը նորից գտնելու և շենացնելու՝ չհանդուրժելով «սահման ու վեճ» և հավատալով իր միամիտ հարցման հաստատական պատասխանին:

Աշխատանքներն ավարտելուց հետո խմբերը ներկայացնում են իրենց գրածները: Մյուս խումբ այլ կերպ է ձևակերպում:

Այն մոտավորապես այս տեսքը կունենա.

Ներկայացնելիս կատարվում է մտքերի փոխանակում և քննարկում. յուրաքանչյուրը պաշտպանում է իր տեսակետը, կատարվում են լրացումներ խմբերի կողմից: Ուսուցիչը ամփոփում է թեման՝ ասելով, որ մեր պատմության ու ժամանակների քառուղիներով անցած հայ ժողովրդին սթափեցնելու նպատակով Ս. Կապուտիկյանը ոչ միայն թարմացնում էր մեր ազգային հիշողությունը, այլև անցյալի մաքառումների տոկունությամբ ոգեպնդում է մեզ, որ միայն պարտություններով ու կորուստներով չի կարելի դաստիարակել ժողովրդին: Մեր ազգային հոգեբանությունը ամրապնդելու համար անհրաժեշտ է վերականգնել նաև նաիրյան հինավուրց ցեղի պատմական արժանապատվությունը:

Բանաստեղծության քնարական հերոսը ապրում է այլ երկրում, սակայն նրա հոգում մորմոքում է կորուսյալ հայրենիքի կարոտը և համառ ուխտը՝ անպայման գնալ ու տեր կանգնել այդ երկրին:

Այնուհետև մեջբերվում է գրականագետ Սուրեն Աղաբաբյանի միտքը. «Եթե Կապուտիկյանի ստեղծագործությունը բաժանենք օրագրային խոստովանությունների թեմաների, այս բանաստեղծությունը բաժին կընկնի «-Պատմության դասերի օրագիր» և «Կարոտի օրագիր» բաժինների միաժամանակ»:

Մեկ տունը մնացել է ընդհանուր քննարկման համար. սովորողները ներկայացնում են իրենց կարծիքը, լրացնում են միմյանց:

Ապա զույգերը ներկայացնում են բանաստեղծության բովանդակությունը, բացահայտում ծերունու կերպարը:

Ուսուցիչը կատարում է ինչպես ուսուցանող, այնպես էլ՝ միավորային գնահատում:

ԿՇՌԱԴԱՏՈՒՄ: Թեման ավելի լավ յուրացնելու նպատակով հանձնարարում ենք կատարել հետևյալ աշատանքը՝ կիրառելով «Կրկնակի գրառումների օրագիր» մեթոդը. մեկնաբանել քարտերի հարցերը.

Բանալի նախադասությունը	Մեկնաբանությունը
Ինչո՞ւ է նույն երգը ունկերում:	Վերհիշելու և չմոռանալու երկրին պատուհասած արհավիրքը:
Ինչո՞ւ է ծուխ ելնում. որտեղի՞ց է ելնում ծուխն ընդհանրապես:	Նրա հոգում ամբարված կարոտից է ելնում, բայց մենք գիտենք, որ ծուխը երդիկից է ելնում, կրակից:
Ո՞վ է դեռ քայլում «սարով, ձորով, աշխարհով» և ինչո՞ւ:	Խոսվում է ցեղասպանության, սփյուռքի, հայրենիքի մասին:
Ի՞նչն է ծերունու անմեկին զարմանքի պատճառը:	Հայի ճակատագրի հանդեպ անհասկանալի անարդարություն:
Իմա՞լ կեղնի, իմա՞լ չերթանք մըր Էրգիր:	Ինչո՞ւ է Էրգիրը գրվում մեծատառ և ինչո՞ւ նման ուղղագրությամբ:
Հնարավո՞ր է խեղդել «Խև խռովքը Սասնա տան», թաղել երազները գետնի տակ:	....

Հավատո՞ւմ ես ծերունու հաստատակամությանը, ի՞նչն է ուժ տալիս այս հավաքական կերպարին:	....
Դու ինչպե՞ս կավարտեիր բանաստեղծությունը:	....

Ավարտելուց հետո աշակերտները կարդում են իրենց գրառումները, գնահատում ենք, ապա հանձնարարում բանաստեղծությունից դուրս գրվել մակդիրները, հոմանիշ բառերը, ճարտասանական հարցում արտահայտող նախադասությունը, բացատրվում է բարբառային բառերի գործածության անհրաժեշտությունը: Ինչի՞ն է ծառայում կրկնությունը. ի՞նչ է կրկնությունը: Տրվում է 10 րոպե աշխատանքը կատարելու համար:

Դուրս են գրվում ***համառ ուխտ, համառ հարցում, խեղճ, անմեկին զարմանք, միամիտ կանաչ, խև խռովք, փառք ու կիրք*** բառակապակցությունները և մեկնաբանվում:

Այնուհետև սովորողները կարդում են իրենց գրածները, կատարվում են լրացումներ ու շտկումներ, եթե այդպիսիք կան, և մտքերի փոխանակության արդյունքում թեման ամբողջանում է, գիտելիքը՝ կայունանում:

ԱՆԴՐԱԴԱՐՁ: Այս փուլում ուսուցիչը հնարավորություն է ունենում պարզելու՝ ուսումնական գործընթացում յուրաքանչյուր սովորողի, խմբի ձեռքբերումները և բացթողումները, դժվարություններն ու խոչընդոտները և իրավիճակի վերլուծությունից հետո մշակում բացթողումներն ու թերությունները շտկելու գործողություն:

Գրատախտակին գրվում են հետևյալ հարցերը.

- Ո՞ր հարցն է եղել ամենաբարդը. ի՞նչ զգացումներ ես ունեցել այդ հարցի մասին գրելիս:
- Բացահայտեցի՛ր՝ արդյո՞ք քեզ համար անակնկալ տեսակետներ արտահայտվեցին: Ինչո՞ւ:
- Ի՞նչն ես լավ հասկացել. ի՞նչն ես վատ հասկացել:
- Ի՞նչ տվեց քեզ այս բանաստեղծությունը:

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ
(4 ժամ)

ԴԱՍ 2, 3

ԹԵՄԱՆ՝ «Հայաստան» բանաստեղծությունը:
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 90 րոպե:
ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ՝

- ծանոթացնել բանաստեղծության կառուցվածքին և բովանդակությանը,
- ծանոթացնել բանաստեղծության նոր հասկացություններին, եզրույթներին, նոր բառերին և արտահայտություններին,

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ՝

Կիմանա՝

- ներկայացնել բանաստեղծության բովանդակությունը արձակ շարադրանքով,
- մեկնաբանել բանաստեղծության արտահայտած հիմնական գաղափարը՝ բովանդակությունից ելնելով,
- ներկայացնել՝ որ շարքում է զետեղված բանաստեղծությունը,
- թվարկել հեղինակի բանաստեղծության ժողովածուները՝ նշելով տարեթվերը:

Կկարողանա՝

- ստեղծել Հայաստան աշխարհի պատկերը, ամբողջացնել հին ու նոր Հայաստանը,
- համեմատել և հակադրել հին ու նոր Հայաստանը, գտնել ընդհանրություններ և տարբերություններ,
- գնահատել բնագրի բառապաշարը՝ հարստացնելով սեփականը,
- օգտագործել հեղինակային բառապաշարը՝ բանաստեղծությունը վերլուծելիս,

- ❖ նշել պատմության հիմնական դրվագները՝ ելնելով հեղինակային բնութագրումներից,
- ❖ վերլուծել բանաստեղծություն՝ ելնելով սեփական ընկալումից:
- ❖ համեմատել նույն վերնագրով այլ հեղինակի բանաստեղծության հետ, համադրել և հակադրել,
- ❖ ապահովել որոշակի կապ իր կյանքի և ստեղծագործության միջև,
- ❖ անվանել տեքստի գեղագիտական արժեքները,
- ❖ գնահատել տեքստը ազգայինի, հայրենիքի անփոխարելիության, հայրենաճանաչության տեսանկյունից,
- ❖ ստեղծագործաբար վերաշարադրել «Հայաստան» բանաստեղծության բովանդակությունը՝ կիրառելով նոր սովորած բառերը և պատկերավոր արտահայտությունները:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ՝ «Մտագրոհ», «Խթանող հարցեր», «Վենի գծակարգ», « Մանրապատում»:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ՝ դասագիրք, քարտեր, բացիկներ, նշագրիչներ, A4 չափսի թուղթ:

ԴԱՍԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: Նոր նյութի յուրացման դաս:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ: Ստուգվում են տնային հանձնարարությունները, սովորողները կարդում են հուշեր Սևակի մասին, պատմում կենսագրությունը, գտնում են նրա տեղը հայ գրականության պատմության մեջ, նշում ժամանակակիցներին, ապա ուսուցիչը կարդում է այնպիսի հուշ, որը խթան է հանդիսանում նոր դասի համար:

ԽԹԱՆՈՒՄ: Կիրառվում է «Մանրապատում» մեթոդը. աշակերտներին առաջարկվում է իրենց կյանքից հիշել մի դեպք՝ կապված բանաստեղծության բովանդակության հետ՝ ապահովելով որոշակի կապ կյանքի և ստեղծագործության միջև:

Սովորողները ընթերցում են բանաստեղծությունը. առաջարկվում է պատասխանել ստորև բերված խթանող հարցերին՝ ըստ հաջորդականության.

- մեկ նախադասությամբ ներկայացնել բանաստեղծության բովանդակությունը:
- ընտրել բանաստեղծությունից մեկ հղում, որը բնութագրում է քնարական հերոսին. այն դուրս գրել բնագրից,
- բնագրից ընտրել մեկ բանալի բառ, որը բնութագրական է ողջ բանաստեղծության համար,
- նկարել էսքիզ կամ որևէ խորհրդանիշ, որն արտահայտում է բանաստեղծության գաղափարը,
- զուգորդել բանաստեղծությունը որևէ երաժշտության հետ:

Հարցերին պատասխանելուց հետո ամփոփում ենք և անցնում թեմայի ուսուցմանը:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ: Տուն առ տուն ընթերցում ենք՝ կատարելով բնագրի գեղարվեստական և բառային վերլուծություն:

Ուսուցիչը նախապես «Հայաստան» բանաստեղծությունից դուրս է գրում Հայաստանը խորհրդանշող մի քանի բառ և բառակապակցություն, որոնք գրում է գրատախտակին ***(կիսավեր ամրոց ու բերդ, մագաղաթյա մատյանի թերթ, Զվարթնոց՝ ավեր տաճար, Կոմիտասյան Ծիրանի ծառ, ջրաղաց, հորովել, գութանի արծաթ խոփի փայլ, հայրենի ծխանի ծուխ, անգիր վեպ, Սասնա ծուռ, նիզակ, նետ, կոպիտ մկունդ):***

Սովորողներին առաջարկվում է մտածել, թե ինչ է կատարվելու այս բառերի շրջանակում, եթե փորձենք իրար կապվել դրանք: Երեխաները բանավոր շարադրում են փոքրիկ պատմություն՝ գործածելով նշված բառերը:

Քանի որ բանաստեղծությունը գրված է հակադրության և համադրության սկզբունքով, կարող ենք օգտագործել «Վենի դիագրամը»:



Հների մեջ՝ դու ալեհեր,
Դու՝ խաղողի խչմարված վազ,
Վշտերդ ջուր, ինքդ ավազ,
Դու՝ կիսավեր ամրոց ու բերդ,
Մագաղաթյա մատյանի թերթ

Նորերի մեջ՝ նոր ու ջահել,
Դու՝ մրգերի շտեմարան,
Ոսկեվազյան գինու մառան,
Երևանի սյուն ու խոյակ:

Ուսուցիչը աշակերտների միջոցով բացատրում է յուրաքանչյուր արտահայտության իմաստը, կապը, եթե հին՝ գութան, նետ, մկունդ, անգիր վեպ, Սասնա ծուռ, եթե նոր՝ թավշե դեղձ, փրփուր հաց. Սևանի վառվող կոհակ, Երևանի սյուն ու խոյակ, կանչող փարոս, հայկական գերբ ու դրոշ, արդարության ահեղ ատյան, սրի պատյան, սիրո մատյան…

Բանաստեղծությունը գրված է՝ հակադրելով հինը նորին. այս դեպքում այն սկսվում է՝ իմ քաղցրանուն, իմ բարձրանուն, իմ տառապած, իմ փառապանծ, իսկ նորի դեպքում փոխվում են կրկնության տեղերը և բարձրանունն ու քաղցրանունը ներկայացնում են հառնած Հայաստանի կերպարը, հաղթած, հաղթանակած հայորդու սերը իր մի բուռ հայրենիքի նկատմամբ, ո-

րով երդվելիս բանաստեղծը ձեռքը դնում է իր «սրտի վրա՝ սեղմելու նման, որ… հանկարծակի չպայթի դողից», իսկ իրենով երդվելիս՝ «ափս դնում եմ քո մի ափ հողին, ինչպես իմ նախնիք՝ Սուրբ գրքին իրենց…»:

Ապա անդրադառնում ենք բանաստեղծության անթերի կառուցվածքին. բառային կրկնություններ, որոնցով ձևավորվում է բանաստեղծությունը (իմ, դու), հատուկ ընտրված են հարանունները՝ անակնկալ ու անսպասելի՝ քաղցրանուն-բարձրանուն, տառապած-փառապանծ, վազ-ավազ, սաղարթաշատ-փշատ, բերդ-թերթ, ծուխ-ծուռ, շտեմարան-մառան, կոհակ-խոյակ, ատյան-պատյան-մատյան:

Հակադրություններ՝ հների մեջ դու ալեհեր, նորերի մեջ նոր ու ջահել: Ամբողջ բանաստեղծությունը մակդրախաղ է ու միտք՝ խչմարված վազ, ծորուն հորովել, արծաթ խոփ, թավշե դեղձ, փրփուր հաց, սևաչ խաղող, վառվող կոհակ, վճիտ աչք, ցամքած լաց:

Բանաստեղծությունը կառուցված է համեմատությունների հիմքով:

Այս ամենը հիշեցնում է Զվարթնոց տաճարը՝ կառուցված ճարտարապետական վսեմ հանճարով: Նույնացել են բառն ու քարը, ինչյունն ու գիծը, և ստացվել է մի կատարյալ քանդակ:

ԿՇՌԱԴԱՏՈՒՄ: Ուսուցիչը խնդրում է աշակերտներին հիշել Հայաստանին նվիրված բանաստեղծություններ. այդ շարքը լրացվում է նաև ուսուցչի կողմից. «Ես իմ անուշ Հայաստանի», «Հայաստան», «Հայաստանը երգերի մեջ», «Իմ սուրբ հայրենիք», «Ախր ես ինչպես…»: Համեմատվում են նշյալ բանաստեղծությունները, գտնում նմանությունները, համարժեք համեմատություններն ու փոխաբերությունները:

Տնային հանձնարարություն՝ նկարել բանաստեղծությունը. Ցույց տալ Հայաստան երկրի կերպավորումը և ժողովրդի հոգեբանության դրսևորումը:

Կազմակերպվում է կինոդիտում՝ «Հայսատանի առեղծվածները» կամ «Հայաստանի տեսարժան վայրերը»:

Կատարվում է ինչպես փոխադարձ, այնպես էլ միավորային գնահատում:

Անդրադարձ՝ 2 րոպե:

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆ (6 ժամ)

ԴԱՍ 1

ԹԵՄԱՆ՝ Դ. Դեմիրճյանի կենսագրությունը, ստեղծագործության ընդհանուր բնութագիրը: (1 ժամ)

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 45 րոպե

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ՝

- ծանոթացնել հեղինակի կենսագրությանը և ապրած ժամանակաշրջանի ու դրա ազդեցությունը նրա ստեղծագործության վրա:

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Կիմանա՝

- Դ. Դեմիրճյանի կենսագրության հիմնական դրվագները՝ կյանքն ու ստեղծագործական ուղին, ստեղծագործության համառոտ բնութագիրը,
- Դ. Դեմիրճյանի ժողովածուների և ծրագրային ստեղծագործությունների վերնագրերը:

Կկարողանա՝

- ներկայացնել կենսագրության հիմնական դրվագները,
- պատմել գրողի կյանքի և գրական գործունեության մասին,
- նշել գրողի ժողովածուների և ստեղծագործություններից մի քանիսի վերնագրերը,
- կարդացած տեքստն ավելի լավ գիտակցելու նպատակով կատարել կարճ գրառումներ,
- խմբային աշխատանքի հմտություններ ձեռք բերել:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ՝ «Խթանող հարցեր», «Հարցուպատասխան», «Ներածական զրույց», «Փոխներգործուն գրառումների համակարգ արդյունավետ կարդալու և մտածելու համար (ՓԳՀԱԿՄՀ)»:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ՝ դասագիրք, քարտեր, նշագրիչներ, թուղթ:

ԴԱՍԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: Գիտելիքների, կարողությունների և հմտությունների կիրառման դաս:

Գիտելիքների, կարողությունների և հմտությունների կիրառման դասի ժամանակ ուսուցիչը պետք է հետաքրքիր կազմակերպի դասի սկիզբը, ներկայացնի դասի թեման և խնդիրները, աշակերտներին մղի կարողությունների ձևավորման համար անհրաժեշտ նոր գիտելիքների ուսումնասիրմանը, ամրապնդի և համանման ձևաչափով իրավիճակներում դրանք կիրառելու հնարավորություն ընձեռի, կատարել տա գիտելիքների և կարողությունների կիրառման վարժություններ, ստեղծագործաբար կիրառել տա ստացված գիտելիքներն ու կարողությունները, կատարի հմտությունների փորձարկման վարժանքներ, հանձնարարի տնային առաջադրանք, ամփոփի դասը, աշակերտների կատարած աշխատանքի գնահատում կատարի:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ: Տնային առաջադրանքների ստուգում ենք իրականացնում: Դասի այս փուլում, դրական արդյունքների հասնելու համար, պետք է կարողանանք ծավալել այնպիսի գործողություն, որը հնարավորություն կընձեռի բարձրացնելու դասի նպատակաուղղվածությունը և արդյունավետությունը: Համակարգված հնարքների կիրառման միջոցով հնարավորինս արագ ստուգելու դասարանի բոլոր աշակերտների տնային աշխատանքները: Սա ենթադրում է, որ ուսուցիչը հնարավորություն կստանա կարճ ժամանակահատվածում (5-7 րոպե) բացահայտել աշակերտների մեծամասնության գիտելիքների աստիճանը և ընդհանուր բացթողումները, տնային առաջադրանքի ստուգման ընթացքում հիմնական հասկացությունների արդիականացման և կարգավորման հնարավորությունը, կվերացնի բացահայտված թերությունների պատճառները:

Տնային աշխատանքները ստուգելուց և բացթողումները շտկելուց հետո որոշ աշակերտների գնահատում ենք և անցնում դասի հաջորդ փուլին:

Խթանող հարցերի միջոցով ամփոփում ենք նախորդ դասը, դարձյալ գնահատում ենք կատարում՝ պատճառաբանելով գնահատականը:

ԽԹԱՆՈՒՄ՝ Ապա կիրառում ենք **«Ներածական զրույցի»** կամ **«Կարճ զրույցի»** ուսուցման առավել տարածված արդյունավետ ավանդական մեթոդներից մեկը, որի դեպքում ուսուցիչը վարպետորեն մշակված հարցերի միջոցով աշակերտների մեջ ակտիվացնում է նրանց՝ արդեն ունեցած գիտելիքներն ու կարողությունները, խթանում նոր գիտելիքների ձեռքբերումը՝ ինքնուրույն վերլուծությունների, դատողությունների, եզրահանգումների միջոցով:

«Ներածական զրույցը» տեղի է ունենում դասի սկզբում՝ տվյալ նյութի ուսումնասիրությունից առաջ՝ աշակերտների համար պարզ դարձնելու առաջիկա աշխատանքի իմաստը, պատկերացում տալու, թե ինչը ինչպես պետք է կատարել: Զրույցի ժամանակ շատ կարևոր է ***հարց ու պատասխանի հնարքի*** կիրառումը: Դասարանին կամ խմբերին ուղղված յուրաքանչյուր հարցից հետո ուսուցիչը տվյալ թեմայի մասին մտածելու համար տալիս է ոչ մեծ դադար, որից հետո լսում աշակերտներից որևէ մեկի պատասխանը: Եթե աշակերտները չեն կարողանում պատասխանել հարցին, ուսուցիչը կարող է վերաձևակերպել, ավելի հստակեցնել հարցերը, դրանք մասնատել կամ նոր օժանդակող հարցեր տալ: Զրույցը պետք է ապահովի ակտիվ հաղորդակցություն դասարանում: Ուսուցիչը պետք է հետևի, որ բոլորը ակտիվորեն մասնակցեն զրույցին, ուշադիր լսեն հարցերը, մտածեն պատասխանելիս, քննարկեն իրենց ընկերների պատասխանները, փորձեն արտահայտել սեփական կարծիք: Ուսուցիչը հնարավորություն է ստեղծում, որպեսզի աշակերտները շտկեն իրենց պատասխանները, դիմեն ընկերների օգնությանը: Չեն խրախուսվում թեմայից շեղող, դրա հետ կապ չունեցող և ակտիվության պատրանք ստեղծող հարցադրումներ:

Այս աշխատանքն ավարտելուց հետո անցում ենք կատարում դասի հաջորդ փուլին:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ՝ Այս փուլում ուսուցումը կարելի է կազմակերպել «Փոխներգործուն գրառումների համակարգ արդյունավետ կարդալու և մտածելու համար» (ՓԳՀԱԿՄՀ) մեթոդի կիրառմամբ: Սա իմաստի ընկալման փուլի արդյունավետ մեթոդ է, որն օգնում է աշակերտին տեքստը կարդալու ընթացքում վերահսկել սեփական ընկալումը: Այս մեթոդի էությունն

այն է, որ նյութը կարդալիս արվում են փոխգործուն գրառումներ՝ հետևյալ նշաններով՝

V - գիտեմ

– - իմ իմացածին հակասում է

+ - նոր տեղեկություն է

? - անհասկանալի է, շփոթեցնող

! - հետաքրքիր է, կարելի է քննարկել

Սովորողներին հանձնարարել անհատապես կարդալ դասագրքի «Դ. Դեմիրճյանի կենսագրությունը, ստեղծագործության ընդհանուր բնութագիրը» նյութը: Կարդալու ընթացքում հարկավոր է մատիտով դասագրքի լուսանցքում նշել վերը բերված նշանները՝ ըստ նյութի իրենց իմացության և պատկերացման: Կարիք չկա բոլոր տողերում նշաններ անել: Ընդհանուր առմամբ՝ այս գրառումներն արտացոլում են տեքստի հետ սովորողի հարաբերությունները: Կարդալու ընթացքում արված նշումները ծառայում են որպես հարմար տեղեկատու՝ հաստատված կամ հերքված պատկերացումներն ի հայտ բերելու համար:

Ընթերցելուց հետո, ստացած տեղեկությունները դասակարգելու համար, աշակերտները կազմում են կատարած նշումների իրենց անհատական աղյուսակը հետևյալ ձևով.

V	-	+	?	!

Աշխատանքն ավարտելուց հետո, եթե կան «***անհասկանալի է, շփոթեցնող է, կամ հետաքրքիր է, կարելի է քննարկել***» նշումներ, ապա պետք է պարզաբանվի ու քննարկվի՝ թեմայի ընկալումը լիարժեք դարձնելու նպատակով:

Սովորողներն արդեն կարողանում են ներկայացնել իրենց գրածները:

Ինտերակտիվ ուսուցման գործընթացում աշակերտների արձագանքը հաճախ տարբերվում է մեր ակնկալիքներից: Նրանք տարբեր ձևով են հասկանում և ըմբռնում թեման: Այդ դեպքում հարկավոր է նկատի ունենալ, որ աշակերտները կարող են ունենալ յուրատեսակ արձագանքներ, որոնք անհրաժեշտ նյութ կարող են դառնալ հետագայում գործնական վարժութ-

յունների համար: Այդ իմաստով ուսուցչից կպահանջվեն լրացուցիչ ջանքեր՝ տարբեր մոտեցումներով լսարանը կառավարելու համար:

Այսպիսով՝ նյութի յուրացումն ավարտելուց հետո սովորողներից խմբեր ենք կազմում: Նրանք միավորում են նոր ստացած գիտելիքները և ներկայացնում են իրենց գրառումները:

Առաջին խումբը ներկայացնում է, որ Դերենիկ Դեմիրճյանը մեծ վաստակի տեր գրող է, իր ստեղծագործական երկարատև կյանքի ընթացքում նա գրել է բանաստեղծություններ, պատմվածքներ, վեպեր, վիպակներ, թատերգություններ, ակնարկներ և այլն: Նրանք նշում են, որ մեծ հետաքրքրություն են ներկայացնում նրա «Քաջ Նազար» կատակերգությունը, «Վարդանանք» պատմավեպը և մի շարք պատմվածքներ:

Ապա ներկայացնում են, որ Դ. Դեմիրճյանը (Դեմիրճօղլյան) ծնվել է 1877 թվականի փետրվարի 17-ին Ախալքալաքում: Նրա հայրը՝ Կարապետ աղան, եղել է սնանկացած վաճառական: Դերենիկը հաճախել է ծննդավայրի մեկդասյա դպրոցը:

Արվեստի հանդեպ նրա սերը բորբոքվել է քահանա հորեղբոր տանը, ուր հաճախակի կազմակերպվում էին գրական-երաժշտական-թատերական հանդեսներ:

Այնուհետև նրանց ընտանիքը տեղափոխվել է Արդահան, որտեղ և ապագա գրողը շարունակել է ուսումը: Արդահանի դպրոցի հոգաբարձուների միջնորդությամբ 1892-ին Դեմիրճյանն ընդունվում է Էջմիածնի Գևորգյան ճեմարան: 1894-ին կրթությունը շարունակում է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: Նրա գրական փորձերն առաջինը նկատում և խրախուսում է վիպասան Պերճ Պռոշյանը: Ներսիսյան դպրոցն ավարտելուց հետո Արդահանում աշխատել է որպես օդերևութաբանական կայանի դիտորդ, փոստակայանի վերակացու:

Ապա մյուս խումբն է ներկայացնում, որ Դեմիրճյանը գրական կապեր է հաստատել Հովհաննես Թումանյանի հետ և 1899-ին դարձել նրա նախաձեռնած «Վերնատուն» գրական խմբակցի հիմնադիր անդամներից մեկը: Դեմիրճյանը բնակություն է հաստատել Թիֆլիսում, որն այդ ժամանակ հայ գրական կյանքի կենտրոններից մեկն էր: Աշխատել է Հայոց բարեգործական ընկերությունում, այնուհետև Բաքվում՝ հայ մեծահարուստ Մանթաշյանի նավթահանքերում՝ որպես բանվորական ճաշարանի վարիչ:

1905-1908 թվականներին ուսանում է Ժնևի համալսարանում. ուսումնասիրում է բնագիտություն, այնուհետև՝ մանկավարժություն և գրականություն: Իսկ երաժշտանոցում ջութակի դասեր է առնում:

Այնուհետև մյուս խումբը շարունակում է ներկայացնել թեման՝ պատմելով, որ երբ Դեմիրճյանը վերադառնում է Թիֆլիս, նա Գայանյան (Հովնանյան) օրիորդաց դպրոցում դասավանդում է հայոց լեզու: Ապա աշխատում է Հայաստանի արվեստի վարչությունում: 1925-ից վերջնական բնակություն է հաստատում Երևանում և աշխատում որպես Հայ մշակույթի ինստիտուտի գիտական քարտուղար: 1927-1931 թվականներին Հայ աշխատավորական գրողների միության նախագահն էր: Դրանից հետո նա հիմնականում զբաղվել է ստեղծագործական աշխատանքով:

Վերջին խումբն ավարտում է թեմայի ներկայացումը՝ ասելով, որ գրողն իր առաջին բանաստեղծությունը՝ **«Ապագա»** վերնագրով, տպագրել է 1893-ին: Լույս է ընծայել բանաստեղծությունների ժողովածուներ: Գրել է նաև պոեմներ: Տպագրել է քառյակների ժողովածու՝ «Գարուն» վերնագրով: Սակայն պոեզիան Դեմիրճյանի ասպարեզը չէր, ուստի գրական ընդունակությունները փորձում է նաև արձակի ու թատերգության ասպարեզում: 1917-ին գրում է իր նշանավոր «Ավելորդը» պատմվածքը: Մյուս հայտնի պատմվածքներից են «Տերտերը», «Ստամոքսը»: Գրում է նաև «Վասակ», «Դատաստան», «Հովնան Մեծատուն» դրամաները:

1920-ականների սկզբից Դեմիրճյանի ստեղծագործության մեջ կատարվում են գաղափարական նոր տեղաշարժեր՝ կապված ասպարեզ մտած մարդկային նոր կերպարները պատկերելու անհրաժեշտության հետ: Այս տարիների նրա ստեղծագործության հիշարժան փաստը «Քաջ Նազար» (1923 թ.) կատակերգությունն է:

Հետագա տարիների լավագույն երկերից են «Գիրք ծաղկանց» պատմվածքն ու «Երկիր հայրենի» դրաման:

1943-1946 թվականներին նա գրեց իր կյանքի գլխավոր գիրքը՝ **«Վարդանանք»** պատմավեպը: Ապա հավելում են, որ Վարդան զորավարը, երբ սկսվեց Ավարայրի ճակատամարտը, արդեն 66 տարեկան էր, Դեմիրճյանը Ավարայրը ոգեկոչեց, այսինքն՝ Վարդանի ու Ավարայրի մասին սկսեց գրել, երբ ինքն էր արդեն 66 տարեկան:

1953-ին ընտրվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակա-

դեմիկոս:

Մահացել է 1956 թվականի դեկտեմբերի 6-ին Երևանում:

Թեման ամբողջապես ներկայացնելուց հետո կատարվում է քննարկում, մտքերի փոխանակում և արժևորում:

Գնահատման նպատակով ուսուցիչը նախապես կազմած հարցաշարով ստուգում է սովորողների յուրացման մակարդակը և միավորային գնահատում կատարում:

Հարցերի քարտերն այնպես է բաժանում խմբերին, որ իրենց ներկայացրած թեմայի մասը չլինի՝ ելնելով դասի յուրացման ամբողջականությունից:

Այդ հարցերը կարող են լինել.

- Ե՞րբ և որտե՞ղ է ծնվել Դերենիկ Դեմիրճյանը:
- Որտե՞ղ և ի՞նչ կրթություն է ստացել նա:
- Գրական ի՞նչ ժանրերով է Դեմիրճյանը ստեղծագործել:
- Բնութագրել Դեմիրճյանին՝ որպես գրող: Թվարկել նրա հիմնական գեղարվեստական երկերը:

Ավարտելուց հետո ուսուցիչն ամփոփում է թեման՝ լրացուցիչ տեղեկություններ հաղորդելով:

Տնային աշխատանք է հանձնարարում հետևյալը՝ «Դեմիրճյանին նվիրված հիշողությունների գրքից կամ այլ աղբյուրներից գտնել և առանձնացնել ասույթներ գրողի մասին»: Մանրամասնորեն բացատրվում են առաջադրանքի կատարման առանձնահատկությունները:

Կատարվում է ***անդրադարձ:***

ԴԱՍ 2

ԹԵՄԱՆ՝ Դ. Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքը (գաղափար պատմվածքի մասին), պատմվածքում ծավալվող դեպքերի և գործողությունների զարգացման ընթացքը՝ դիպաշարը (սյուժեն): (1 ժամ)

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 45 րոպե

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ՝

- ծանոթացնել պատմվածքի կառուցվածքին ու բովանդակությանը,
- նպաստել հասկանալու պատմվածքի գաղափարը և դաստիարակչական նպատակը:

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Կիմանա՝

- ❖ Դ. Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքի բովանդակությունը (ի՞նչ է պատմվածքը),
- ❖ «Ավելորդը» պատմվածքի կառուցվածքը և գաղափարական բովանդակությունը,
- ❖ մեկնաբանել հերոսների, պատմվածքի գործողությունների ժամանակաշրջանը և վայրը:

Կկարողանա՝

- ❖ ներկայացնել ստեղծագործության հիմնական բովանդակությունը,
- ❖ կարդացած տեքստն ավելի լավ ընկալելու նպատակով կատարել կարճ գրառումներ,
- ❖ ներկայացնել պատմվածքի գործողությունների զարգացման ընթացքը,
- ❖ պարզաբանել պատմվածքի դիպաշարի կառուցվածքային տարրերը,
- ❖ մեկնաբանել պատմվածքի գաղափարը սեփական գնահատմամբ,
- ❖ զարգացնել խմբային աշխատանքի հմտություններ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ՝ «Կարճ դասախոսության», «Մտագրոհ», «Կրկնակի գրառման օրագիր», «Ստուգիչ հարցեր», «Ընդհանրական հարցեր»:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ՝ դասագիրք, քարտեր, նշագրիչներ, թուղթ:

ԴԱՍԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: Նոր նյութի յուրացման դաս:

Ինչպես գիտենք, դասի կառուցվածքը ուսումնառության ընթացքում առաջացած և ուսումնական գործընթացի նպատակային առաջընթացն ապահովող տարրերի տարաբնույթ փոխազդեցությունների հանրագումարն է:

Նմանատիպ դասն ունի իր առանձնահատկությունը: Ուսուցիչը դասի ընթացքում պետք է իրականացնի ուսուցանվող նյութի նախնական ներկայացումը՝ հաշվի առնելով մասնակիցների բարձր մտային ակտիվության ժամանակ ճանաչողության գործընթացի օրինաչափությունները, մատնանշի ուսուցանվող նյութի առավել կարևոր հատվածները, որոնց վրա սովորողները պետք է ուշադրություն դարձնեն, կարողանա նրանց մեջ ձևավորել հիշելու և հիշողության մեջ երկարատև պահպանելու մոտիվացիան, զարգացնի մտապահման տեխնիկան (աշխատել հիշողությանն աջակցող նյութով, կատարել իմաստային խմբավորում և այլն):

ԽԹԱՆՈՒՄ: Նոր նյութի ուսուցումը սկսում ենք «**Կարճ դասախոսություն**» մեթոդով, որի էությունն այն է, որ ուսուցիչը տեղեկատվություն է տալիս, նոր գիտելիքը փոխանցում սովորողների խմբին, իսկ սովորողների խնդիրն է այն լսել, ընկալել ու մտապահել: Դասախոսության տևողությունը պետք է համապատասխանի ունկնդիրների ուշադրության կենտրոնացմանը (մոտավորապես՝ 10 րոպե): Քանի որ դասախոսությունն իր բնույթով ենթադրում է պասիվ ուսուցում, դասախոսության ընթացքում հարկ է կիրառել մի շարք այլ մեթոդական հնարներ՝ սովորողներին ուսուցման գործընթացի մեջ առավելագույնս ներգրավելու համար:

Կարճ դասախոսությամբ ուսուցիչը ներկայացնում է, թե ինչ է պատմվածքը՝ ասելով, որ պատմվածքը պատմողական (էպիկական) սեռի նմանատիպ ժանրաձև է: Պատմվածքում պատկերվում, նկարագրվում են հերոսի (հերոսների) կյանքից կարճ կամ ընդարձակ պատմություններ, հոգեվիճակներ, որոնցով էլ կերպավորման են ենթարկվում նրանք: Պատմվածքը պատմողական ժանրի առավել փոքր տեսակն է, փոքրիկ պատմություն, որի մեջ մեկ կամ մի քանի դրվագներով, հերոսի կյանքի մեկ-երկու պահով կատարվում է բնութագրական որևէ ընդհանրացում: Պետք է նշել նաև, որ պատմ-

վածքի ծավալը կարող է լինել մեկ-երկու էջից մինչև մի քանի տասնյակ էջ, ձգվել մինչև վիպակի սահմանները (այս դեպքում դժվար է զանազանել դրանք): Ապա ասում է, որ նմանատիպ բնութագիրչներ ունի Դ. Դեմիրճյանի «Ավելորդը» ստեղծագործությունը:

Ինտերակտիվ ուսուցման գործընթացում, հիմնվելով աշակերտների նախկին փորձառության և պատմվածքի մասին ունեցած նախնական գիտելիքների վրա, տվյալ թեմայի խորացված ուսուցումը հետաքրքիր ու արդյունավետ դարձնելու նպատակով, կիրառվում են փոխներգործուն մեթոդներ. դասի նախնական փուլում կիրառում ենք «**Մտագրոհ»** մեթոդը: Գրատախտակին գրում ենք պատմվածք բառը՝ կատարելով ***մտագրոհ:***



Քննարկվելիք հասկացության վերաբերյալ աշակերտներն արտահայտում են իրենց պատկերացումները, և ուսուցիչն անմիջապես նրանց բոլոր մտքերը գրանցում է գրատախտակին: Այնուհետև, երբ մտագրոհն ավարտում ենք, սովորողներին հանձնարարվում է մտագրոհի հետևանքով առաջացած **կապերով** (բառերով) և **«պատմվածք»** բառով ձևակերպել սահմանում իրենց իսկ ասած բառերով: Կարելի է սահմանումը ներկայացնել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր շարադրանքով: Ապա աշակերտները կամ խմբերից յուրաքանչյուրը ներկայացնում են պատմվածքի սահմանման իրենց տարբերակը: Այս մոտեցումը նպաստավոր պայմաններ է ստեղծում նոր մտքերի և տեսակետների ձևավորման համար, ինչպես նաև ընդհանուր ուժերով ձեռք բերված գիտելիքները հիշողության մեջ դրոշմելու ավելի մեծ հավանականություն ունի: Սրանից հետո, երբ դասարանն արդեն տրամադրված է նոր նյութի մեջ խորամուխ լինելուն, անցում ենք կատարում պատմվածքի ուսուցմանը:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ: Այս փուլում կիրառում ենք «**Կրկնակի գրառումներով օրագիր» մեթոդը:** Հիշյալ մեթոդի կիրառումը այստեղ նպատակային է ու արդյունավետ՝ ուսուցանվող նյութի բովանդակության խոր և արդյունավետ յուրացման տեսակետից: Այն հատկապես հարմար է կիրառել այնպիսի նյութերի ուսուցման դեպքում, որոնք հարուստ են հուզականությամբ: Մեթոդի կիրառումը հնարավոր է դարձնում կապել տեքստում նկարագրված իրադարձությունները սովորողի սեփական կյանքի, հետաքրքրությունների, կենսափորձի հետ: Երբ կարդացած, յուրացվող նյութը կապվում է սեփական կենսափորձի հետ, այն առավել անմիջական, մոտ ու հասկանալի է լինում, հետևաբար ավելի արդյունավետ է դառնում:

Դասի այս փուլում «Ավելորդը» պատմվածքը բաժանում ենք 4 մասի, և առաջին մասը դառնում է տվյալ դասաժամի ուսումնասիրվող նյութը:

Մեթոդի կիրառման ժամանակ ուսուցիչն աշակերտներին առաջարկում է սպիտակ թուղթը կամ տետրի մի էջը ուղղահայաց գծով երկու մասի բաժանել, ձախ կողմում գրել բնագրից (պատմվածք...) մի հատված կամ նախադասություն, որն ուժեղ ազդեցություն է թողել իրենց վրա՝ հավանաբար հիշեցնելով նրանց սեփական անցյալը, կամ զարմացրել է, ինչ-որ բան է հիշել և այլն, իսկ աջ կողմում՝ մեկնաբանություններ, բացատրություններ նշված հատվածի կամ կերպարի վերաբերյալ (ինչի՞ մասին է այդ հատվածը, ի՞նչը մտածելու տեղիք տվեց, ի՞նչ հիշեց, ի՞նչ հարցեր առաջացան հատվածի վերաբերյալ):

Դասարանը բաժանում ենք 5 խմբի: Աշակերտներն ընթերցում և միաժամանակ գրառումներ են կատարում: Ընթերցելուց և գրառումներ կատարելուց հետո ուսուցիչը հնարավորություն է տալիս աշակերտներին ներկայացնելու իրենց գրառումները: Աշակերտների մեկնաբանությունների ժամանակ ուսուցիչը պետք է *ստուգիչ հարցեր* տա՝ *ինչո՞ւ այդ հատվածը գրավեց քո ուշադրությունը, ինչի՞ մասին այն քեզ մտածել տվեց կամ հիշեցրեց* և այլն*:*

Ուսուցիչը պետք է պարզի նաև, թե քանի աշակերտ է նշել նույն հատվածը, ապա մատնանշի պատասխանների միջև նմանությունները կամ տարբերությունները:

Կրկնակի գրառումներով օրագիր

Ընտրել նախադասություն կամ հատված բնագրից:	Տալ տվյալ նախադասության, հատվածի մեկնաբանությունը, բացատրությունը, արտահայտել սեփական վերաբերմուն:

Աշխատանքներն ավարտելուց հետո սովորողները ներկայացնում են իրենց մտքերը, լրացումներ են արվում ու կատարվում քննարկում և մտքերի փոխանակում: Ուսուցիչն ամփոփում է թեման: Կատարվում է պատճառաբանված միավորային գնահատում:

ԿՇՌԱԴԱՏՈՒՄ: Շատ կարևոր են նաև ուսուցչի կողմից տրվող ***ընդհանրական հարցերը***, որոնք ստիպում են աշակերտին տեքստը որպես ամբողջություն ընկալել: Օրինակ՝ յուրաքանչյուր խմբի առաջարկում ենք մեկ հարցի պատասխանել.

Խումբ I

- Ի՞նչ հիշեցիր այս պատմության հետ կապված:

Խումբ II

- Ո՞րն է այս նյութի գլխավոր ասելիքը:

Խումբ III

- Ի՞նչ հարցեր մնացին անպատասխան:

Խումբ IV

- Ինչպիսի՞ն է պատմվածքը որպես գրական ստեղծագործություն:

Խումբ V

- Եթե հնարավորություն ունենայիր այս բնագիրը ինքդ գրել, ի՞նչը կփոխեիր նրանում (10 րոպե):

Խմբերը ներկայացնում են իրենց մեկնաբանությունները, երբ աշխատանքի համար տրված ժամանակը սպառվում է: Խմբերին թույլ է տրվում ևս արտահայտել իրենց կարծիքները մյուս խմբերի հարցերի վերաբերյալ:

Երբ ավարտվում է նյութի ներկայացումը, կատարվում է գնահատում, ապա մտքերի փոխանակում, և ուսուցիչն ի մի է բերում և ամբողջացնում թեման, նշում ձեռքբերումները, շտկում բացթողումներն ու թերությունները:

ԱՆԴՐԱԴԱՐՁ: Անդրադարձի ժամանակ հարցերի միջոցով ընդհանրացվում և վեր է հանվում դասի ընթացքում աշակերտների ձեռքբերումները, ինչպես նաև բացթողումները:

Այդ նպատակով ուսուցիչը հետևյալ հարցերով կազմում է քարտեր և առաջարկում պատասխանել դրանց.

- Ո՞ր առաջադրանքն էր բարդ:
- Ի՞նչը կարող էիք ավելի լավ անել, սակայն չկարողացաք:
- Արդյոք նյութը գիտակցորե՞ն յուրացրիք:
- Քննարկման ենթակա որևէ բան կա՞:
- Հետաքրքի՞ր աշխատանք էր, եթե այո՝ ինչո՞ւ, եթե ո՛չ՝ ինչո՞ւ:

Աշխատանքի համար տրվում է 3-5 րոպե ժամանակ: Այն կատարելուց հետո պարզ է դառնում, թե ինչը չի հասկացվել, և ուսուցիչը կատարում է շտկողական աշխատանք՝ բացթողումը շփվելու նպատակով:

Հանձնարարվում է տնային աշխատանք՝ հետևյալ առաջադրանքով.

«Կենսագրությունից ելնելով՝ գնահատի՛ր Դեմիրճյանի կյանքն ու ստեղծագործությունը նրա ապրած ժամանակաշրջանի համատեքստում»:

Դեմիրճյանի ապրած ժամանակաշրջանը և գործունեությունը	Ստեղծագործության ընդհանուր պատկերը՝ ըստ ժամանակագրության:

ԴԱՍ 3

ԹԵՄԱՆ՝ «Ավելորդը» պատմվածքը: Պատմվածք: Պատմվածքում ծավալվող դեպքերի ու գործողությունների զարգացման ընթացքը՝ դիպաշարը (սյուժեն):

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 45 րոպե:

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ՝

- զարգացնել պատմվածքի տեքստը հասկանալով ընթերցելու կարողություններ,
- նպաստել հմտանալու բովանդակությունը ըստ պլանի և ստեղծագործաբար վերարտադրելուն:

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Կիմանա՝

- ներկայացնել պատմվածքում ծավալվող դեպքերի և գործողությունների զարգացման ընթացքը՝ դիպաշարը (սյուժեն),
- պատմել «Ավելորդը» պատմվածքի բովանդակությունը,
- ցույց տալ պատմվածքի ժանրային առանձնահատկությունները,

Կկարողանա՝

- որոշել պատմվածքում ծավալվող դեպքերի և գործողությունների զարգացման ընթացքը՝ ելնելով դիպաշարից (սյուժեից),
- կարդալ ստեղծագործությունը, մտապահել ու սեփական բառերով վերարտադրել գործողությունների զարգացման ընթացքը,
- ինքնուրույն կամ ուսուցչի օգնությամբ պատմվածքից մի հատված կարդալ և պատմել,
- ընդհանրացնել և հակիրճ ձևակերպել ստեղծագործության հիմնական գաղափարը,
- համառոտ ներկայացնել «Ավելորդը» պատմվածքի դիպաշարը,
- սեփական անձի գնահատում կատարել և վստահություն ունենալ իր ուժերի հանդեպ,
- անել կարճ գրավոր մեկնաբանություն գեղարվեստական և իմաստային տեսակետից իրեն հետաքրքրող հատվածների մասին:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ՝ «Բազմանիստ», «Դասախոսություն», «5-րոպեանոց շարադրանք»:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ՝ դասագիրք, քարտեր, նշագրիչներ, թուղթ:

ԴԱՍԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ՝ Կարողությունների և հմտությունների ձևավորման դաս:

Արդեն գիտեք, որ ուսումնառության ընթացքում առաջացած և ուսումնական գործընթացի նպատակային առաջընթացն ապահովող տարրերի տարաբնույթ փոխազդեցությունների հանրագումարը կոչվում է **դասի կառուցվածք:**

Ըստ կառուցվածքի դասերը լինում են՝

1. Նոր նյութի յուրացման դաս:
2. Գիտելիքների, կարողությունների և հմտությունների ամրապնդման և զարգացման դաս:
3. Կարողությունների և հմտությունների ձևավորման դաս:
4. Գիտելիքների, կարողությունների և հմտությունների կիրառման դաս:
5. Կրկնողության դաս:
6. Կրկնողական-ընդհանրացնող դաս:
7. Ստուգողական կամ սխալների ուղղման դաս:
8. Համակցված դաս:

Կարողությունների և հմտությունների ձևավորման դասն ունի իր առանձնահատկությունները: Կարողությունների և հմտությունների ձևավորման դասի ժամանակ ուսուցիչը պետք է կարողանա իրականացնել հետևյալ քայլերը՝

- շեշտադրել դասի նպատակները,

- ամրապնդել ձևավորված հիմնարար կարողությունները և հմտությունները,
- կատարել ստուգողական վարժություններ,
- ծանոթացնել նոր կարողությունների հետ, ցուցադրել կարողությունների ձևավորման օրինակ,
- կատարել նոր կարողությունների յուրացմանը միտված վարժություններ,
- կատարել նոր կարողությունների ամրապնդմանը միտված տեքստային առաջադրանքներ,
- կատարել նմանատիպ իրավիճակների հաղթահարման վարժություններ,
- կատարել ստեղծարար բնույթի վարժանքներ,
- ամփոփել դասը,
- հանձնարարել տնային առաջադրանք:

ԽԹԱՆՈՒՄ: Այս փուլում կիրառում ենք «Բազմանիստ» վարժությունը՝ սովորողներին ակտիվացնելու և կենտրոնացնելու, ապա սահուն անցում կատարելու նոր նյութի ուսումնասիրմանը: Սա շատ ակտիվ մեթոդ է: Խրախուսում է սովորողներին ազատ ու անկաշկանդ մտածել տվյալ թեմայի շուրջ: Այն կիրառվում է բացառապես դասի սկզբնական՝ խթանման փուլում՝ ապահովելով սովորողների ակտիվությունն ու հետաքրքրությունը: Մեթոդի կիրառումն ապահովում է դասի հաջող մեկնարկը:

Մեթոդի կիրառումն անցնում է շատ արագ, աշխույժ: Մեթոդն արդյունավետ է այն ժամանակ, երբ պահանջվում են կարճ, համառոտ բառերի, հատկանիշների, ցուցանիշների թվարկումներ: Խմբային քննարկումների նման ձևով կազմակերպումն ապահովում է ակտիվություն, աշխուժություն, ֆիզիկական շարժունակություն, թարմություն, հետաքրքրություն:

Սովորողներին առաջարկում ենք «Ավելորդը» բառով բազմանիստ կառուցել: Բազմանիստը կարող է ունենալ հետևյալ տեսքը.



Վարժության վերջում սովորողներին առաջարկվում է սկզբնաբառով և վերջնաբառով կազմել մեկ նախադասություն՝ նրանց որոշակի ժամանակ տրամադրելով: Աշակերտները կներկայացնեն իրենց կազմած նախադասությունները: Շատ արդյունավետ կլինի, եթե դասի ավարտին ուսուցիչն անդրադառնա բազմանիստին՝ համեմատելու սովորողների տվյալ թեմայից ունեցած նախնական գիտելիքներն արդեն սովորած գիտելիքի հետ:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ: «Կարճ դասախոսության» մեթոդով ուսուցիչը ներկայացնում է, թե ինչ է դիպաշարը (սյուժե): Այս պատմվածքը **փոքր** ծավալի կատարյալ ստեղծագործություն է բոլոր մանրամասներով, և պատկերացում ենք տալիս **պատմվածք** և **դիպաշար** հասկացությունների մասին:

Պատմվածքն իր արմատներով կապվում է բանահյուսության հետ, որտեղից գալիս է նրա հիմնական առանձնահատկությունը՝ պատմելու, վիպելու գիծը: Հետագա զարգացման ընթացքում պատմվածքը թե՛

բովանդակության և թե՛ ձևի տեսակետից ենթարկվել է էական փոփոխություններին:

Վեպի համեմատությամբ պատմվածքն ընդգրկում է կյանքի ավելի նեղ շրջանակ, այստեղ քանակով ավելի քիչ են կերպարները, սահմանափակ՝ դեպքերն ու գործողությունները:

Ապա մանրամասնում ենք, որ գրականության մեջ գործողությունների զարգացումը, իրադարձությունների ընթացքը պատմական, դրամատիկ և քնարավիպերգական երկերում կոչվում է դիպաշար (սյուժե): Սյուժեն (գլխավոր և երկրորդական սյուժետային գծերի հետ մեկտեղ) երկի բովանդակությունը մարմնավորող հիմնական միջոցներից մեկն է, որն արտացոլում է տվյալ պատմական ժամանակաշրջանը, ազգային ու սոցիալական հանգամանքները, գրողի հուզական-գաղափարական վերաբերմունքը կյանքի բնութագրական կողմերի և իրականության նկատմամբ:

Ապա ավելացնում ենք, որ սյուժեի միջոցով է դրսևորվում կերպարների, նրանց բնավորության ու ներքին էության զարգացման պատմությունը: Իր ողջ անկրկնելիությամբ և ինքնատիպությամբ սյուժեն ստեղծագործության ձևի (դրա հետ էլ՝ բուն ոճի) հիմնական կողմն է: Սյուժեի զարգացման հիմքը կոնֆլիկտն է՝ հերոսների բախման միջոցով հասարակական հակադիր ուժերի պայքարի բացահայտումը: Օրինակ՝ *էպոսի պատմական զարգացման վաղ շրջանում նրա սյուժեն կառուցվել է դեպքերի համակցության ժամանակային, ժամանակագրական սկզբունքով: Հետագայում եվրոպական էպոսում ի հայտ են եկել համակենտրոն սյուժեները՝ հիմնված միասնական կոնֆլիկտի վրա, որը հատկանշվում է իր հանգույցի, գագաթնակետի և հանգուցալուծման որոշակիությամբ:*

Իսկ, օրինակ, կերպարվեստում սյուժեն ստեղծագործությունում պատկերված որոշակի դեպքն է, իրավիճակը, որը հաճախ երևում է գործի անվան մեջ: Այնուհետև ամփոփում ենք, որ, ի տարբերություն թեմայի, սյուժեն ստեղծագործության գաղափարի կոնկրետ, մանրամասն և կերպապատմողական բացահայտումն է:

Այնուհետև ներկայացնում ենք «Ավելորդը» պատմվածքի ստեղծման պատմությունը. այն է՝ Ավելորդը» Դ. Դեմիրճյանի հոգեբանական շատ նուրբ

ու խոր պատմվածքներից մեկն է: Պատմվածում պատկերված է Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակներին վերաբերող կյանքի մի դրվագ: 1914 թ. դեկտեմբերի 14-ին թուրքերն առաջ էին շարժվում Սարիղամիշի ուղղությամբ: Ռուսական բանակը թուրքերի հետ բախվում է հայկական սահմանին: Ռուսները նրանց առաջխաղացումը կասեցնում են, իսկ դեկտեմբերի 22-ին հասցնում ջախջախիչ հարված:

Պատմվածքի սեղմ ընդգրկման մեջ Դեմիրճյանն ստեղծել է պատերազմի գոտում հայտնված սահմանամերձ փոքրիկ քաղաքի, նրա բնակիչների և մասնավորապես Հաճի աղայի գերդաստանի ու հատկապես իր՝ Հաճի աղայի շատ տպավորիչ կերպարները:

Պատմվածքի հերոսներն են՝ Հաճի աղան, որը խանութպան է, 60-70 տարեկան, խանութպան են նաև նրա 40-ամյա որդին՝ Շմավոնը, մյուս որդին՝ Հակոբը, կաղ գործակատարը, հարևան Կորկոտենց Եղիշը, հյուսն Պողոսը, Հաճի աղայի աշակերտը, մեծ հարսը, փոքր հարսը՝ Եսթերը, Հաճի աղայի թոռները՝ Շողոն, Կարոն, Հաճի աղայի կինը՝ Հաճի մարը, Հաճի աղայի անդամալույծ քույրը՝ Սրբունը, հարևանի մի կին, զվարճաբան Գարանը, սահնակապանը, վանքի քահանան, խոստովանահայրը:

Հաճի աղան գործնական, հաշվենկատ և հպարտ մարդ է: Նա թեև ծեր է, բայց գերդաստանի ղեկը դեռևս նրա ձեռքին է:

Թշնամու առաջխաղացման լուրը լսելուն պես նա արագ մտածում է, որ առաջինը լինելու պահն արդեն ձեռքից բաց է թողել: Այդ հապաղումն է պատճառը, որ նրա որդիները կարողանում են ոչ թե ֆուրգոն՝ ձիակառք վարձել, այլ սահնակ: Նա կարգադրում է արագ հավաքել անհրաժեշտ իրերը:

Հաճի աղայի հետ էր ապրում նրա քույրը՝ Սրբունը, որն ամուսնու մահից հետո ծանր հիվանդացել էր և դարձել անդամալույծ: Հաճի աղան իր պատվի համար քրոջն անկյուն էր հատկացրել սեփական տանը: Սրբունը շատ բարի ու գթասիրտ կին էր և, որպեսզի տնեցիների համար հոգս չլիներ, կար ու կարկատանով օգնում էր նրանց:

Քաղաքը լքելու ու տնից հեռանալու պահին Հաճի աղայի հաշվենկատ միտքը այսպիսի վճիռ է կայացնում՝ ավելի լավ է իր խանութների ապրանք-

ների մի մասը փրկել՝ ընտանիքը հետագայում սովի չմատնելու համար, քան իրենց հետ տանել անդամալույծ քրոջը: Ընտանիքը դեմ էր այդ վճռին, հատկապես Հաճի աղայի կինը՝ Հաճի մարը: Բայց Հաճի աղայի խոսքն օրենք էր:

Անդամալույծ քույրը շատ երախտագետ էր և մտահոգված էր եղբոր ճակատագրով. հանկարծ նրան մի բան չպատահի՞: Հրաժեշտի պահին, երբ եղբայրը ձեռքը դնում է քրոջ ձեռքին, Սրբունը, արցունքն աչքերին, նրան է նվիրում լավորակ բրդից հյուսած ձեռնոցը:

Տագնապալի պահերն անցնում են: Հաճի աղայի ընտանիքը փրկվում է: Լուրեր են հասնում, որ Սրբունը անհայտ կորել է: Կարելի է ենթադրել, որ կա՛մ թուրքերն են նրան սպանել, կա՛մ ինքնասպանությամբ ինքն է վերջ տվել իր կյանքին:

Հաճի աղան դրանից հետո ծանր հոգեկան ապրումներ է ունենում: Նա խորապես զղջում է իր հաշվենկատ արարքի համար: Մի օր առավոտ վաղ արթնանում և գնում է եկեղեցի; Ոսկի է տալիս քահանային՝ աղքատներին բաժանելու համար:

Հաճի աղան հոգեպես կոտրվել էր: Նա անկողին է ընկնում, խոստովանահայր կանչում, կրկին գումար տալիս, ասելով՝ ավելորդի հոգու համար:

Ավելորդը Սրբունն էր՝ իր հարազատ քույրը՝ անդամալույծը, ում համար նա տեղ չգտավ սահնակի մեջ: Բայց վերջում Հաճի աղան գիտակցում է ոչ թե Սրբունի, այլ ի՜ր ավելորդ լինելը և այդ գիտակցությամբ էլ ավարտում է կյանքը:

«Ավելորդը» պատմվածքը գրված է արձակին բնորոշ պատկեր-գործողություններով, որոնք շատ արագ հաջորդում են իրար: Գործողությունները շատ խիտ են, անցումները՝ տրամաբանորեն և հոգեբանորեն հիմնավորված:

Գլխավոր հերոսը Հաճի աղան է: Սեղմ, բայց ցայտուն են կերպավորված նաև նրա կինը՝ Հաճի մարը, որդիները, Սրբունը և մյուսները:

Դեմիրճյանը հրաշալի է օգտագործել բարբառը, ինչն իր հերթին յուրովի կերպավորում է հերոսներին: Դա Կարինի բարբառի Ախալքալաքի խոսվածքն է:

Սրանից հետո ուսուցիչը հանձնարարում է կատարել կարճ գրավոր մեկնաբանություն՝ գեղարվեստական և իմաստային տեսակետից սովորողներին հետաքրքրող հատվածների մասին (5-րոպեանոց շարադրանք):

ԿՇՌԱԴԱՏՈՒՄ: Դասախոսությունն ավարտելուց հետո ուսուցիչը դասի այս փուլում դասարանը բաժանում է խմբերի և օրվա դասի համապատասխան հատվածը հանձնարարում է կարդալ, ապա յուրաքանչյուր խմբին տալիս է կատարելու հետևյալ առաջադրանքները.

I. Համառոտ վերարտադրել Դերենիկ Դեմիրճյանի կյանքն ու գործունեությունը:

II. Ի՞նչ է պատմվածքը՝ որպես գրական տեսակ:

III. Ինչպիսի՞ պատմական ժամանակաշրջան է ներկայացնում գրողը: Ի՞նչ է նշանակում «թուրքը գալիս է» արտահայտությունը:

IV. Ինչպե՞ս է սկսվում Դ. Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքը: Գրողը ինչպե՞ս է նկարագրում իր գլխավոր հերոսին՝ Հաճի աղային: Ի՞նչ հոգեվիճակում էր նա շուկայում:

V. Ավելորդը» Դ. Դեմիրճյանի հոգեբանական պատմվածքներից է: Ինչո՞վ է արտահայտված պատմվածքի հոգեբանական կողմը:

VI. Ի՞նչ իրադարձությունների մեջ ենք տեսնում հերոսներին, ինչպե՞ս է գրողը կերպավորում նրանց: Թվարկել անունները, բնութագրել նրանց և առանձնացնել գլխավոր և երկրորդական հերոսներին:

Հանձնարարությունն ավարտելուց հետո յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր դիտարկումները, կատարվում են քննարկում, մտքերի փոխանակում և միավորային գնահատում:

Ուսուցիչը անդրադարձի միջոցով ամփոփում է դասը՝ նշելով սովորողների ձեռքբերումները և մատնանշում բացթողումները՝ շտկում կատարելու նպատակայնությամբ:

Հանձնարարվում է տնային աշխատանք՝ մանրամասն բացատրելով:

ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԴԱՍ 2 , 3

«Կանաչ դաշտը» պատմվածքը

ԹԵՄԱ՝ «Կանաչ դաշտը» պատմվածքը:
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 90 րոպե:
ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԸ՝

- ծանոթացնել պատմվածքի կառուցվածքին ու բովանդակությանը,
- նպաստել հասկանալու պատմվածքի գաղափարական բովանդակությունը:

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Կիմանա՝

- ներկայացնել «Կանաչ դաշտը» պատմվածքի կառուցվածքն ու բովանդակությունը,
- բնագիրի դրվագները կապել միմյանց հետ և սահմանել գլխավոր թեման,
- որ ժողովածուում է զետեղված պատմվածքը,
- մեկնաբանել կենսագրության արձագանքները «Կանաչ դաշտը» պատմվածքում,
- գնահատել բնության շնչավորումը և կենդանիների մարդայնացման բացառիկ դրսևորումը Մաթևոսյանի պատմվածքում:

Կկարողանա՝

- վերարտադրել ընթերցած տեքստի բովանդակությունը ամբողջական կամ ընտրովի,
- ներկայացնել միջավայրը, ուր տեղի են ունենում պատմվածքի գործողությունները, ինքնուրույն վերարտադրել պատմվածքի բովանդակությունը, ներկայացնել հիմնական գաղափարը,
- ներկայացնել հերոսներին, վերլուծել գլխավոր հերոսի կերպարը,
- պատմվածքի գործողությունները կապել անձնական փորձի հետ,

- հերոսի վարքագծի բարոյական գնահատում կատարել,
- արտահայտել իր վերաբերմունքը գործող անձի և նրա գործողության նկատմամբ,
- ունենալ աշխատանքի պլանավորման, արդյունքների ստացման և գնահատման հարցում համագործակցելու և հաղորդակցվելու կարողություններ,
- պարզաբանել պատմվածքի ներքին տագնապների ու արտաքին հանդարտության հակադրումը,
- հեղինակի բառապաշարն արժևորել իբրև ճանաչողության միջոց,
- ճանաչել գեղարվեստական արտահայտչականության միջոցները և բացատրել նրանց գործառույթը:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ՝ «Ներածական զրույց», «Ուղղորդված ընթերցանություն», «Մանրապատում», «Երկու աստղ և մեկ ցանկություն», «5-րոպեանոց շարադրանք»:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ՝ դասագիրք, նշագրիչներ, թուղթ, քարտեր:

ԴԱՍԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: Նոր նյութի յուրացման դաս:

Սա ենթադրում է աշակերտների ստացած գիտելիքների, ինքնուրույն դատողությունների, իրենց հետ պատահած դեպքերի վերլուծություն, տարաբնույթ դատողությունների փոխազդեցությունների հանրագումար::

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ: Ստուգում ենք տնային առաջադրանքները, եթե հանձնարարված է, կատարում ենք ընդհանուր հարցում՝ ստացած գիտելիքները ստուգելու նպատակով, շտկումներ ենք կատարում, ապա գնահատում:

Նախապատրաստում ենք աշակերտներին դասարանական աշխատանքի, քանի որ աշխատանքը ծավալուն է, և տրամադրված է 2 ժամ, պետք է կիսել հանձնարարությունները:

ԽԹԱՆՈՒՄ: Անցկացնում ենք ներածական զրույց՝ աշակերտներին առաջարկելով, որ իրենց կյանքից հիշեն ինչ-որ դեպք՝ կապելով պատմվածքի բովանդակության հետ: Աշխատանքներն ավարտելուց հետո սովորողները բանավոր ներկայացնում են իրենց հետ կատարված նմանատիպ դեպքեր:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ: Ուղղորդված ընթերցանության մեթոդն ենք կիրառում: Դասարանը բաժանվում է 4 խմբի, պատմվածքը բաժանվում է չորս իմաստային դադարների, և յուրաքանչյուր խմբի տրվում է ուսումնասիրելու մեկ մաս:

Ընթերցանության համար տրվում է 10 րոպե: Երբ աշակերտներն արդեն ընթերցել են հատվածը, առաջարկվում է ըստ հերթականության գրել հետևյալ հարցերի պատասխանները.

- ❖ Մեկ նախադասությամբ գրել, թե ինչի մասին էր իրենց կարդացած հատվածը:
- ❖ Հատվածից ընտրել մեկ հղում, որը տեքստի հենակետային միտքն է, և դուրս գրել:
- ❖ Բնագրից ընտրել մեկ հենակետային բառ, որը բնութագրում է հատվածը:
- ❖ Նկարել որևէ խորհրդանիշ, որն արտահայտում է հատվածի միտքը:
- ❖ Ի՞նչ մեղեդի հիշեցիր հատվածն ընթերցելիս:
- ❖ Շարունակել հետևյալ միտքը. «Ամենահետաքրքիրն այս հատվածում այն է, որ …»:

« Ամենահուզիչը հատվածի այն մասն է, երբ… »:

Այս հարցերին պատասխանելու համար աշակերտներն ունեն 15 րոպե:

Աշխատանքն ավարտելուց հետո յուրաքանչյուր խումբ կարդում է իր ստացած տպավորությունը հատվածից, ապա ամբողջացվում է պատմված-

քը: Առաջին դասն ավարտվում է, իսկ երկրորդ դասաժամի համար աշակերտներն ստանում են հետևյալ հանձնարարությունը:

Տանը կարդալ պատմվածքը և գրել 2 նախադասություն, որոնք պատմվածքի հենակետային մտքերն են արտահայտում:

Հաջորդ դասն սկսում ենք խթանման փուլով՝ հանձնարարում ենք գրել շարադրանք, թե ինչպես կուզենային ավարտվեր պատմվածքը: Հանձնարարությանը տալիս ենք 3 րոպե, երբ ավարտում են, սովորողները կարդում են իրենց գրածները և գնահատվում:

Այս աշխատանքից դասարանն արդեն ակտիվանում է, և մենք երեխաներին տալիս ենք կարդալու օրվա դասի համար նախատեսված հատվածը և **«2 աստղ և մեկ ցանկություն»** մեթոդի կիրառմամբ կատարել ենք տալիս հանձնարարություն:

Այս մեթոդը՝ **«2 աստղ և մեկ ցանկություն»,** հնարավորություն է ընձեռում զարգացնելու մտածողությունը, ստացած գիտելիքները անկաշկանդ արտահայտելու ձգտումը:

Պետք է իմանալ, որ **ընթերցանությունը** հիմքն է գրագիտության, ինչը ժամանակակից լիարժեք անձնավորության ձևավորման պարտադիր պայման է: Այս մեթոդը ծառայում է նրան, որ աշակերտը տիրապետի նյութին և կիրառի կարդալու հիմնական մարտավարությունները, որպեսզի կարողանա ընտրած տեքստը քննադատաբար կարդալ, բացատրել և անհրաժեշտ հետևություններ անել: Աշակերտը պետք է կարողանա տեքստում ինքնուրույն գտնել ցանկալի տեղեկությունը, տարբեր ձևեր օգտագործել՝ տեքստը խորապես հասկանալու նպատակով, ստացած տեղեկությունը կապել անհատական փորձի հետ, տվյալները վերլուծել, անել եզրահանգումներ և այլն:

Այս նպատակով դասարանը բաժանում ենք զույգերի կամ խմբերի և հանձնարարում ենք տեքստից գտնել երկու կարևոր պարբերություն, որոնք պատմվածքի տվյալ հատվածի բանալի մասերն են, և գրել աստղերի դիմացի գծակարգում: Այնուհետև այդ երկու պարբերությունից բխող մեկ բանալի նախադասությամբ ներկայացնել ցանկություն՝ ելնելով պարբերությունների արտահայտած գաղափարից կամ մեկ նախադասությամբ արտահայտել ընտրած բանալի պարբերությունների գաղափարը:

«2 աստղ և մեկ ցանկություն»

Ամսաթիվը՝----------

Անունը, ազգանունը----------

Մեկ ցանկություն

Գծակարգը լրացնելուց հետո սովորողների խմբերը կարդում են ի-րենց գրածները, լրացումներ ու մտքերի փոխանակություն և ինքնագնահա-տում է կատարվում:

ԿՇՌԱԴԱՏՈՒՄ: Այս փուլում յուրաքանչյուր խմբի հանձնարարում ենք պատասխանել մեկական հարցի.

- ❖ Ներկայացնել գլխավոր հերոսներին և բնութագրել:
- ❖ Դուրս գրել պատմվածքի նկարագրական մասերը:
- ❖ Ցույց տալ բնության և մարդու ներքին մաքառումը:

- Դուրս գրել մակդիրները, համեմատություններն ու փոխաբերությունները:
- Դուրս գրել ժողովրդական մտածողության անբռնազբոս ոճը բնորոշող կապակցությունները:

Հատկացված ժամանակը լրանալուց հետո աշակերտները ներկայացնում են իրենց գրածները: Միավորային գնահատում ենք կատարում:

Հաջորդ դասին ստուգում ենք տնային հանձնարարությունները, գնահատում ենք, ապա շարունակում ենք աշխատել բնագրի վրա:

Հանձնարարում ենք սովորողներին, որ ներկայացնեն պատմվածքի գործողությունների և դեպքերի պատճառահետևանքային կապերը՝ շրջագայելով պատմվածքի էջերով: Այդ նպատակով նրանց ենք բաժանում կերպարի վերլուծության գծակարգեր՝ պատճառահետևանքային կապերը վեր հանելու նպատակով:


Անուն _____ Վերնագիր _____

Պատճառ	Հետևանք

Պարզել նպատակը: Պատմվածքի իրադարձությունների պատճառը և հետևանքը պարզելը օգնում է աշակերտներին տեսնելու կերպարի գործողությունների հետևանքները: Պարզելով պատճառները և թվարկելով դրանց հետևանքները՝ աշակերտները սովորում են այլընտրանքային մոտեցումներ ցուցաբերել, որը կօգնի նրանց որոշումներ կայացնել կյանքում:

Ինչպե՞ս օգտագործել գծակարգը: Աշակերտները պարզում և գրում են պատճառը ձախ կողմում և հետևանքը աջ կողմում: Որոշ դեպքերում աշակերտների համար ավելի հեշտ է սկզբից գրել հետևանքը և հետո պարզել պատճառը:

Հանձնարարությունը կատարելուց հետո սովորողները ներկայացնում են իրենց տեսակետները՝ արտահայտելով դիրքորոշում:

Գնահատում ենք, երբ ավարտում են աշխատանքը:

Աշակերտներն այն ժամանակ են լավ սովորում, երբ դառնում են ակտիվ ու գործնական ընթերցողներ: Ուսուցչի նպատակն է, որ աշակերտներն ուսումնառության ընթացքում հաղթահարեն կախվածությունը ուսուցչից և դառնան ավելի ինքնուրույն: Դասարանում կիրառվող այն հնարքները, որոնք օգնում են աշակերտներին գնահատելու սեփական ուսումնառությունը, գործի դնելու անձնական նպատակները, ընտրելու ամենաարդյունավետ գործողությունները և գնահատելու իրենց հաջողությունները, նպաստում են ավելի ինքնուրույն և ինքնավստահ անհատների ձևավորմանը, որոնք ընդունակ են սովորելու ողջ կյանքի ընթացքում: Քանի որ արդեն թեմայի ամփոփիչ դասն է, այստեղ կիրառում ենք «Հարցերի քարտարան» մեթոդը: Սովորողներին բաժանում ենք 6 խմբի և կազմել ենք տալիս հարցեր, որոնք բխում են պատմվածքից:

Ժամանակ ենք սահմանում հարցերի կազմման համար: Ժամանակը լրանալուց հետո խմբերն իրենց կազմած հարցերը խաչաձև փոխանցում են միմյանց, դարձյալ ժամանակ ենք սահմանում պատասխանները գրելու համար: Երբ աշխատանքին հատկացված ժամանակը սպառվում է, խմբերը հետ են վերադարձնում իրենց գրած պատասխաններն այն խմբերին, որոնցից ստացել էին: Հարցեր կազմող խմբերը կարդում են պատասխանները, գնահատում են՝ հիմնավորելով գնահատումը, աշխատանքները նորից վե-

ռադարձնում են պատասխանող խմբերին, որ տեսնեն իրենց սխալները, եթե կան: Աշխատանքը կարևոր է նրանով, որ սովորող պատասխանատվություն է զգում ստացած գիտելիքի համար և միաժամանակ արժևորվում ընկերների կողմից, կարողանում է գնահատել և գնահատվել, միաժամանակ նպաստում է բացահայտելու թեմայի յուրացման մակարդակը:

Ասածը գործնականորեն կիրառելու համար դասարանը բաժանում ենք 6 խմբի՝ առաջարկելով կատարել հետևյալ աշխատանքները.

Խումբ I

- Նկարագրել հովիտը խաղաղ ժամանակ:
- Մեկնաբանել ժայռի և կաղնու մտերմությունը: Կաղնու երախտագիտությունը:
- Վերլուծել ձիու մաքառումը քուռակին փրկելու համար:
- Գրել նոր վերջաբան պատմվածքի համար:
- Նկարագրել բլրի հեռավոր լանջը, որտեղ հովիվներն ու շներն էին:

Խումբ II

Արտահայտել սեփական վերաբերմունք.

- Գայլը կեր է հայթայթում սոված ձագերի համար. Պե՞տք է հաղթի:
- Ձին հսկում է քուռակին՝ նրա մեջ տեսնելով իր ու իր տոհմի պատկերը:
- Ձին մեռնում է, բայց փրկվում է հովտի ամենագեղեցիկ արարածը՝ աստղազարդ քուռակը:
- Թվարկել կերպարները (կանաչ դաշտ, ձի, քուռակ, գայլ, շներ, հովիվներ) և բնութագրել յուրաքանչյուրին:
- Ներկայացնել պատմողի կերպարը:

Խումբ III

- Նկարագրել դաշտի խաղաղությունն ու տագնապը:
- Նկարագրել ձիուն, ինչի՞ համար էր պարանը:

- Նկարագրել ձիու և քուռակի կապը:
- Ի՞նչ էր զգում մայրը կայծակի ճայթյունից առաջ, և ի՞նչ զգաց քուռակը ճայթյունից հետո:
- Ի՞նչ էր արտացոլվում քուռակի աչքերում:

Խումբ IV

- Ըստ մայր ձիու՝ ինչպե՞ս էր մեծանում քուռակը:
- Ի՞նչ վտանգ էր զգում ձին, եթե վտանգի հոտը ոչ մի տեղ չկար:
- Ինչպե՞ս հայտնվեց գայլը. ինչո՞ւ քուռակը չէր կարողանում մոտենալ մորը:
- Ի՞նչ էր կատարվում բլուրների մյուս երեսին:
- Նկարագրել ձիու և գայլի մենամարտը. ի՞նչ էր մտածում նրանցից յուրաքանչյուրը: Իրավացի՞ էին երկուսն էլ: Ինչո՞ւ:

Խումբ V

- Ի՞նչ հասկացան ձին ու գայլը հարձակվելու ժամանակ:
- Ե՞րբ և ի՞նչ տեսավ փոքրիկ հովիվը. ի՞նչ արեցին շները:
- Ի՞նչ խոհեր արթնացրեց շների հաչոցը ձիու և գայլի ուղեղում:
- Ներկայացնել շների և գայլի լուռ երկխոսությունը:
- Քուռակը սկսեց ծծել մեռնող մոր վերջին կաթը, և մայրը երջանի՞կ էր:

Խումբ VI

- Որտեղ՞ էր ընկած կարմիր պառավ ձիու մարմինը:
- Քուռակը ե՞րբ սկսեց հասկանալ կատարված ողբերգությունը:
- Ե՞րբ հովիտը վերադարձավ իր նախկին խաղաղ տեսքին:
- Ո՞վ և ո՞ւմ է պատմում այս պատմությունը:
- Փոքրիկ հովիվն ու քուռակը պատմվածքի վերջում ի՞նչ են անում:

Բուռն քննարկում է կատարվում: Խմբերը գնահատվում են փոխադարձ գնահատումով:

Դասարանում կարդացածի մասին ակտիվ քննարկումները հանգեցնում են նրան, որ աշակերտներն ավելի խորությամբ են փորձում ըմբռնել բնագրի իմաստը: Այն գործողությունները, որոնք հնարավորություն են տալիս աշակերտներին փոխազդելու միմյանց վրա, կարող են ավելացնել թե՛ սովորելու շարժառիթները, թե՛ գործընթացի մեջ նրանց ակտիվ ներգրավվածությունը:

Այնուհետև, դասն ավելի ընկալելի դարձնելու նպատակով, կատարում ենք մեկ աշխատանք ևս: Դարձյալ օգտվում ենք «Հարցերի քարտարան» մեթոդական հնարքից:

Կանխավ հարցեր ենք գրում քարտերի վրա և բաժանում խմբերին. քարտերի վրա գրված են հուշող բառեր և բառակապակցություններ.

ձի, կայծակ, պարան, հովիտ, անհոգ, թշնամի, անսպասելի, անհանգիստ խաղաղություն, քուռակ, ձագեր, չպարտվել, բլրի գագաթ, օգնություն, անորոշություն, որբ քուռակ, սև շրջանակ, դնչիկով մոր փորին խփել, 3 տարի, փոքրիկ հովիվ, հովիտ:

Այս բառերով կազմել ենք տալիս շարադրանք (5 րոպե) և բովանդակությունից ելնելով՝ վերնագրել: Ավարտելուց հետո կարդում են և գնահատվում:

Աշակերտներին տալիս ենք հարցերով քարտեր, և խմբերից յուրաքանչյուրն աշխատում է հնարավորինս ակտիվ պատասխանել հարցերին:

Այսպիսով՝ խմբերի միջև սկսվում է մրցույթ:

I – Հովիտը կերպա՞ր է, թե՞ ոչ:

II - Նկարագրի՛ր ձիուն, կերպավորի՛ր, համեմատի՛ր մարդու հետ:

III - Նկարագրի՛ր գայլին, նմա՞ն է մարդուն իր զգացմունքներով:

IV - Ինչո՛վ էին ընդհանուր ձին և գայլը:

Մրցույթն ամփոփելուց հետո գնահատում ենք կատարում:

Ուսուցիչն ամփոփում է ամբողջ պատմվածքը՝ ասելով, որ Մաթևոսյանը մարդայնացնում է կենդանուն ու բնությունը, ապրում նրանց տագնապը և նրանց հետ կիսում կյանքի չարն ու բարին:

Ընթերցողը գալարվում է ներքին ցավից, ուզում է օգնության հասնել վիրավոր ձիուն, փրկել միամսյա աստղազարդ քուռակին, որը չի հասկանում վտանգի ահագնությունը, որովհետև զգում է, որ պաշտպանված է: Հովիտը կյանքն է, չարի ու բարու հավերժական կռիվը, կյանքի հաղթանակը մահ-

վան նկատմամբ. Ձիու կմախքի արանքներից ծաղիկներ են ծաղկում, կանաչ է բուսնում, քուռակը հիմա հանգիստ վայելում է ծաղիկներն ու խոտը: Սև շրջանակը, որը խորհրդանշում է մահը, նորից կանաչում է, և հովիտը հիմա խաղաղ է, կանաչ, առանց տագնապի:

«Կաղնին վեհորեն կեցած է կանաչ հովտում, ժայռը նիրհելով ունկնդրում է ամպերի շրշյունը, մասրենին իր ծաղկաբաժակը պահել է արևի տակ, և կանաչ դաշտում արածում է աստղազարդ մի ձի՝ ճակատին սպիտակ աստղածաղիկ»: Ինչպես մանկության տարիներին, հիմա էլ նրա աչքերում արտացոլվում են ժայռը, կաղնին, ծաղկած մասրենին, կանաչ հովիտը և կապույտ երկնքի սպիտակ ամպերը:

Կյանքը հաղթել է, հովիտը նույնն է՝ ծաղկուն, կանաչ, և երբեք չի ընդհատվելու պայքարը կյանքի համար. հաղթանակը դառնալու է անհրաժեշտություն:

Եվ հնչեցնելու է Ծմակուտի քուրմն իր ծիրանափողը՝ հաստատելով հայրենի եզերքի անզուգական գեղեցկությունը և այդ գեղեցկության մեջ ապրող մարդու տագնապը:

Մաթևոսյանի հետ մեր հանդիպումը ավարտում ենք Կոմիտասի անվան պանթեոնում՝ մեծ բնապաշտի ու մարդասերի մահարձանի մոտ՝ երդվելով սիրել մաթևոսյանաբար, ճանաչել բնությունը նրա նման և սիրել մարդուն նրա նման:

Եթե չունեք հնարավորություն այցելելու Պանթեոն, դիտե՛ք Մաթևոսյանին նվիրված վավերագրական այլ էկրանավորումներ:

Կատարվում է **անդրադարձ:**

Տրվում է տնային աշխատանք:

ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՑ – 6 ժամ

ԴԱՍ 2, 3

«Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» վեպը (հատված)

ԹԵՄԱՆ՝ Վ. Թոթովենցի «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» ինքնակենսագրական վեպի (գաղափար ինքնակենսագրական վեպի մասին) հատվածի ծավալվող դեպքերի և գործողությունների զարգացման ընթացքը՝ դիպաշարը: (2 ժամ)

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 90 րոպե

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ՝

- ծանոթացնել «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» վեպի կառուցվածքին և բովանդակությանը,
- նպաստել հասկանալու ստեղծագործությունը գրելու շարժառիթը և դրդապատճառները,

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Կիմանա՝

- ինքնակենսագրական վեպի առանձնահատկությունները՝ համեմատելով վեպի հետ,
- վեպի հատվածի գաղափարական բովանդակությունը,
- մեկնաբանել կերպարների գործողությունների զարգացման ընթացքը,
- գործողություններին նոր ընթացք հաղորդել,
- ներմուծել նոր հերոս՝ փոխելով պատմվող դեպքերի հաջորդականությունը:

Կկարողանա՝

- ❖ նշել հատվածի առանձնահատկությունները՝ համեմատելով պատմվածքի հետ,
- ❖ ընդգծել տեքստի գլխավոր գաղափարն արտահայտող նախադասությունը/բանալի միտքը, մեկնաբանել,
- ❖ կարդացած տեքստերի համար ընտրել միանման հույզ, ապրում առաջացնող խորհրդանիշներ (երաժշտություն, գույն և այլն),
- ❖ պատմել տեքստի հիմնական դրվագները,
- ❖ պատմել հերոսների կյանքի և արարքների մասին,
- ❖ կարդացած տեքստն ավելի լավ ընկալելու նպատակով կատարել կարճ գրառումներ,
- ❖ դուրս գրել անծանոթ բառը/բառերը, իմաստը ճշտելով՝ ներկայացնել դասարանին,
- ❖ ընդգծել գեղարվեստական խոսքի պատկերավորման միջոցները,
- ❖ նոր սովորած բառերով կապակցված խոսք կազմել,
- ❖ զարգացնել խմբային աշխատանքի հմտություններ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ՝ «Կարճ դասախոսություն», «Մտագրոհ», «Կրկնակի գրառումների օրագիր», «Ստուգիչ հարցեր», «Ընդհանրական հարցեր»:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ՝ դասագիրք, քարտեր, նշագրիչներ, թուղթ:

ԴԱՍԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: Նոր նյութի յուրացման դաս:

Նոր նյութի յուրացման դասն ունի իր առանձնահատկությունը: Ուսուցիչը դասի ընթացքում պետք է իրականացնի ուսուցանվող նյութի նախնական ներկայացումը՝ հաշվի առնելով մասնակիցների բարձր մտային ակտիվության ժամանակ ճանաչողության գործընթացի օրինաչափությունները, մատնանշի ուսուցանվող նյութի առավել կարևոր հատվածները, որոնց վրա սովորողները պետք է ուշադրություն դարձնեն, կարողանա նրանց մեջ

ձևավորել հիշելու և գիտելիքը հիշողության մեջ երկարատև պահպանելու մոտիվացիան, զարգացնի մտապահման տեխնիկան:

ԽԹԱՆՈՒՄ: Նոր նյութի ուսուցումը սկսում ենք «**Կարճ դասախոսություն»** մեթոդով, որի էությունն այն է, որ ուսուցիչը տեղեկություն է հաղորդում, նոր գիտելիքը փոխանցում աշակերտներին, իսկ վերջիններիս խնդիրն է լսել, ընկալել ու մտապահել այն: Քանի որ դասախոսությունն իր բնույթով ենթադրում է պասիվ ուսուցում, դասախոսության ընթացքում հարկ է կիրառել մի շարք այլ ակտիվացնող մեթոդական հնարներ՝ սովորողներին ուսուցման գործընթացի մեջ առավելագույնս ներգրավելու համար:

Կարճ դասախոսությամբ ուսուցիչը ներկայացնում է, թե ինչ պետք է հասկանալ ինքնակենսագրական վեպ ասելով, որ այն պատմողական (էպիկական) սեռի նմանատիպ ժանրաձև է:

Ինտերակտիվ ուսուցման գործընթացում, հիմնվելով աշակերտների նախկին փորձառության և պատմվածքի մասին ունեցած նախնական գիտելիքների վրա, տվյալ թեմայի խորացված ուսուցումը հետաքրքիր ու արդյունավետ դարձնելու նպատակով կիրառում ենք փոխներգործուն մեթոդներ. դասի նախնական փուլում կիրառում ենք «**Մտագրոհ»** մեթոդը: Գրատախտակին գրում ենք ինքնակենսագրական վեպ արտահայտությունը՝ կատարելով ***մտագրոհ:***



Քննարկվելիք հասկացության վերաբերյալ աշակերտներն արտահայտում են իրենց պատկերացումները, և ուսուցիչն անմիջապես գրանցում է նրանց բոլոր մտքերը գրատախտակին: Այնուհետև, երբ մտագրոհն ավարտում ենք, սովորողներին հանձնարարվում է մտագրոհի հետևանքով առա-

ջացած **կապերով (**բառերով) և **«ինքնակենսագրական վեպ»** բառակապակցությամբ ձևակերպել սահմանում՝ իրենց իսկ ասած բառերով: Կարելի է սահմանումը ներկայացնել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր շարադրանքով: Ապա աշակերտները կամ խմբերից յուրաքանչյուրը ներկայացնում են սահմանման իրենց տարբերակները: Այս մոտեցումը նպաստավոր պայմաններ է ստեղծում նոր մտքերի և տեսակետների ձևավորման համար, ինչպես նաև ընդհանուր ուժերով ձեռք բերված գիտելիքները հիշողության մեջ դրոշմելու ավելի մեծ հավանականություն ունի: Սրանից հետո, երբ դասարանն արդեն տրամադրված է նոր նյութի մեջ խորամուխ լինելուն, անցնում ենք վեպի ուսուցմանը:

Ուսուցիչը հավելում է, որ ինքնակենսագրական վեպը՝ որպես գրական ժանր, մոտ է հուշագրությունը, նրանից տարբերվում է առավելապես անձնական կյանքի նկարագրությամբ: Նոր ժամանակների գրականության մեջ Ժ. Ժ. Ռուսոն և Ա. Գերցենը համարվում են գեղարվեստական ինքնակենսագրության վեպի ստեղծողներ: Ինքնակենսագրական երկեր են գրել Լ. Տոլստոյը, Մ. Գորկին, Գ. Մահարին, Ս. Զորյանը, Վ. Փափազյանը և ուրիշներ: Ինքնակենսագրություն է կոչվում նաև անձնական կյանքի տեղեկատու հակիրճ շարադրանքը:

Ինքնակենսագրական վեպին բնորոշ է հեղինակի կյանքի մասին տեղեկատվության բացահայտումը: Այս իմաստով, ստեղծագործության հեղինակը պատմում է իր կյանքի տարբեր պահերի մասին, հիմնականում պատմում է նրանց մասին, ովքեր իրենց հետքն են թողել իր կյանքի ընթացքի վրա, միաժամանակ նկարագրվում են իր և գործող հերոսների ձեռքբերումները, ձախողումները, հիվանդությունները, կորուստները, սիրային պատմությունները և այլն, դրանց մասին հեղինակը պատմում է՝ հասանելի դարձնելով հանրությանը:

Ինքնակենսագրական վեպին բնորոշ է գրական ստեղծագործություն լինելը, որը ծնունդ է առնում հեղինակի ներհայեցողությունից: Դրա օրինակներ են՝ «Խոստովանություններ» (Ավգուստին Հիպպոս, 397-398), «Ուղիղ պատմեք» (Գաբրիել Գարսիա Մարկես, 2002 թ.), «Երիտասարդ կնոջ հուշեր» (Վիրջինիա Վուլֆ, 1958) և այլն:

Մի խոսքով՝ ինքնակենսագրական են կոչվում այն վեպերը, որոնցում հեղինակն իր կյանքի ընթացքը, իրադարձությունները կիսում է ընթերցողի

հետ: Նա պատմում է իր կյանքի հետագծի մասին, կյանքի պատմությունը դարձնում է վեպի թեմա՝ մանրամասնելով այն իրադարձությունները, որոնք հետք են թողել մարդու վրա: Գրողը բացում է հասարակության առջև անձնական կյանքին վերաբերող իրադարձությունները՝ մտքերը կիսելով իր ամենամտերիմ աշխարհի հետ:

Սրանից հետո դասի հաջորդ փուլին ենք անցնում:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ: Այս փուլում կիրառում ենք «**Կրկնակի գրառումներով օրագիր**» մեթոդը: Հիշյալ մեթոդի կիրառումն այստեղ նպատակային է և արդյունավետ՝ ուսուցանվող նյութի բովանդակությունը խորը և արդյունավետ յուրացնելու տեսակետից: Մեթոդը հատկապես հարմար է կիրառել այնպիսի նյութերի ուսուցման դեպքում, որոնք հարուստ են հուզականությամբ: Մեթոդի կիրառումը հնարավոր է դարձնում կապել տեքստում նկարագրված իրադարձությունները սովորողի սեփական կյանքի, հետաքրքրությունների, կենսափորձի հետ: Երբ կարդացվող, յուրացվող նյութը կապվում է սեփական կենսափորձի հետ, այն առավել անմիջական, մոտ ու հասկանալի է դառնում, հետևաբար ավելի արդյունավետ է դարձնում յուրացումը:

Դասի այս փուլում «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» վեպի հատվածը բաժանում ենք 5 մասի, և առաջին մասը դառնում է տվյալ դասաժամի ուսումնասիրվող նյութը:

Մեթոդի կիրառման ժամանակ ուսուցիչն աշակերտներին առաջարկում է սպիտակ թուղթը կամ տետրի մի էջը ուղղահայաց գծով երկու մասի բաժանել, ձախ կողմում գրել բնագրից մի հատված կամ նախադասություն, որն ուժեղ ազդեցություն է թողել նրանց վրա՝ հավանաբար հիշեցնելով իրենց սեփական անցյալը, կամ զարմացել է, ինչ-որ բան է հիշել և այլն, իսկ աջ կողմում՝ մեկնաբանություններ, բացատրություններ նշված հատվածի կամ կերպարի վերաբերյալ (ի՞նչի մասին է այդ հատվածը, ի՞նչը մտածելու տեղիք տվեց, ի՞նչ հիշեց, ի՞նչ հարցեր առաջացան հատվածի վերաբերյալ):

Աշակերտներն ընթերցում և միաժամանակ գրառումներ են կատարում: Ընթերցելուց և գրառումներ կատարելուց հետո ուսուցիչը հնարավորություն է տալիս աշակերտներին ներկայացնելու իրենց գրառումները: Աշակերտների մեկնաբանությունների ժամանակ ուսուցիչը պետք է *սպուգիչ*

հարցեր տա՝ ***ինչո՞ւ այդ հատվածը գրավեց քո ուշադրությունը, ինչի՞ մասին այն քեզ մտածել տվեց կամ հիշեցրեց*** և այլն***:***

Ուսուցիչը պետք է պարզի նաև, թե քանի աշակերտ է նշել նույն հատվածը, ապա մատնանշի խմբերի պատասխանների միջև նմանությունները կամ տարբերությունները:

Կրկնակի գրառումներով օրագիր

Ընտրել նախադասություն կամ հատված բնագրից:	Տալ տվյալ նախադասության, հատվածի մեկնաբանությունը, բացատրությունը, արտահայտել սեփական վերաբերմունք:

Աշխատանքներն ավարտելուց հետո սովորողները ներկայացնում են իրենց մտքերը, լրացումներ են արվում, կատարվում քննարկում ու մտքերի փոխանակում: Ուսուցիչը ամփոփում է թեման: Կատարվում է պատճառաբանված միավորային գնահատում:

Ուսուցիչը հավելում է, որ «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» ինքնակենսագրական վեպը իրավամբ համարվում է Վահան Թոթովենցի գլուխգործոցը: Նուրբ քնարականությամբ ու ինքնատիպ պատումով, գրավիչ հուզականությամբ ու թախծի և տխրության շնչով է գրողը նկարագրում եղեռնով դաժանորեն սահմանագծվող իր մանկության ու պատանեկության օրերը հայրենի Մեզիրե քաղաքում՝ հուշերի «ոսկե մակույկից» փրկելով անհետացած ևս մեկ հայկական բնակավայր՝ իր կոլորիտային ու ինքնատիպ մարդկանցով…

ԿՇՌԱԴԱՏՈՒՄ: Շատ կարևոր են նաև ուսուցչի կողմից տրվող ***ընդհանրական հարցերը***, որոնք ստիպում են աշակերտին տեքստը որպես ամբողջություն ընկալել: Օրինակ՝ յուրաքանչյուր խմբի առաջարկում ենք մեկ հարցի պատասխանել.

I խումբ - Ի՞նչ հիշեցիր այս նյութի հետ կապված:

II խումբ - Ո՞րն է այս նյութի գլխավոր ասելիքը:

III խումբ - Ի՞նչ հարցեր մնացին անպատասխան:

IV խումբ - Ինչպիսի՞ն է վեպը՝ որպես գրական ստեղծագործություն:

V խումբ - Եթե հնարավորություն ունենայիր այս բնագիրը ինդ գրել, ի՞նչը կփոխեիր նրանում (10 րոպե):

Խմբերը ներկայացնում են իրենց մեկնաբանությունները, երբ աշխատանքի համար տրված ժամանակը սպառվում է: Թույլ է տրվում մյուս խմբերին ևս արտահայտել իրենց կարծիքը մյուս խմբերի հարցերի վերաբերյալ:

Երբ ավարտվում է նյութի ներկայացումը, կատարվում է գնահատում, ապա մտքերի փոխանակում, և ուսուցիչը ի մի է բերում և ամբողջացնում թեման, նշում ձեռքբերումները, շտկում բացթողումներն ու թերությունները, ապա հանձնարարվում է տնային աշխատանք՝ հստակեցնելով կատարման նպատակայնությունը:

ԱՆԴՐԱԴԱՐՁ: Անդրադարձի ժամանակ հարցերի միջոցով ընդհանրացվում և վեր են հանվում դասի ընթացքում աշակերտների ձեռքբերումները, ինչպես նաև մատնանշվում բացթողումները:

Այդ նպատակով ուսուցիչը կազմում է քարտեր՝ հետևյալ հարցերով, և առաջարկում պատասխանել դրանց.

1. Ո՞ր առաջադրանքն էր բարդ:
2. Ի՞նչը կարող էիր ավելի լավ անել, սակայն չկարողացաք:
3. Արդյոք նյութը գիտակցորե՞ն յուրացրի:
4. Քննարկման ենթակա որևէ բան կա՞:
5. Հետաքրքի՞ր աշխատանք էր, եթե այո՛, ինչո՞ւ, եթե ո՛չ՝ ինչո՞ւ:

Աշխատանքի համար տրվում է 3-5 րոպե ժամանակ: Այն կատարելուց հետո պարզ է դառնում, թե ինչը չի հասկացվել, և ուսուցիչը կատարում է շտկողական աշխատանք՝ բացթողումը լրացնելու նպատակով:

Գ. ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հարգելի՛ ուսուցիչներ, քանի որ նոր ՀՊՉ-ով փոխվել են գնահատման չափանիշները, հետևաբար՝ աշխատելիս այդ փաստաթուղթը միշտ ձեր աչքի առաջ պետք է լինի: Այդ նպատակով ստորև տրվում են գնահատման նոր չափանիշները՝ որպես ի գիտություն:

Նախարարը սահմանել է դպրոցներում սովորողների գնահատման չափանիշները

https://iravaban.net/418029.html

2023-03-2 (19 39)

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը փետրվարի 24-ին հրաման է ստորագրել, որով սահմանել է պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները՝ համաձայն հավելվածի:

Գնահատման չափանիշների ներդրումն իրականացվելու է հետևյալ ժամանակացույցով.

1) 2023-2024 ուսումնական տարի՝ Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների բոլոր դասարաններում,

2) 2023-2024 ուսումնական տարի՝ ՀՀ բոլոր հանրակրթական ուսումնական հաստատությունների 2, 5, 7, 10-րդ դասարաններում,

3) 2024-2025 ուսումնական տարի՝ ՀՀ բոլոր հանրակրթական ուսումնական հաստատությունների 3, 6, 8, 11-րդ դասարաններում,

4) 2025-2026 ուսումնական տարի՝ ՀՀ բոլոր հանրակրթական ուսումնական հաստատությունների 1, 4, 9, 12-րդ դասարաններում:

Հրամանն ուժի մեջ է մտել մարտի 1-ին:

ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն չափանիշներով սահմանվում են պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ Հաստատություն) սովորողների գնահատման (այսուհետ՝ Գնահատում) հետ կապված իրավահարաբերությունները:

2. Գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի կարողունակությունների զարգացման աստիճանը՝ ըստ ուսումնական առարկաների չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների ու արժեքների ձևավորման աստիճանի:

3. Գնահատումը միտված է յուրաքանչյուր սովորողի ուսումնական գործունեության խթանմանը, ուսուցման և ուսումնառության վերահսկմանը, բարելավմանը և շարունակական զարգացմանը:

4. Գնահատման գործընթացի հիմքում ընկած են հավաստիության, հուսալիության, օբյեկտիվության, մատչելիության, արդարության և թափանցիկության սկզբունքները:

5. Հաստատության կողմից գնահատման ընթացքում սովորողի ուսումնական առաջընթացի, դժվարությունների և բացառիկ ընդունակության վերաբերյալ հավաքագրված տեղեկատվությունը կարող է օգտագործվել սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման համար:

6. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների գնահատումն իրականացվում է նույն սկզբունքներով՝ ապահովելով սովորողի անհատական ուսուցման պլանով նախատեսված խելամիտ հարմարեցումները, մատչելի ձևաչափերը, անհատական օժանդակ սարքավորումներն ու միջոցները:

7. Ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողների գնահատման երեք տեսակ.

1) հայտորոշիչ գնահատում,

2) ձևավորող գնահատում,

3) ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող):

2. ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ԳՆԱՀԱՏՈՒՄ

8. Հայտորոշիչ գնահատման նպատակն է՝ բացահայտել սովորողի նախնական գիտելիքները, հմտությունները, վերաբերմունքն ու արժեքներն ուսումնական գործընթացի որևէ փուլի՝ ուսումնական տարվա, կիսամյակի, առարկայի, դասընթացի, նոր թեմայի ուսումնասիրման մեկնարկից առաջ: Փուլի ընտրությունը թողնվում է ուսուցչի հայեցողությանը:

9. Հայտորոշիչ գնահատումը հնարավորություն է տալիս պլանավորելու ուսուցման և ուսումնառության գործընթացը, ինչպես նաև ընտրելու ուսուցման կազմակերպման արդյունավետ ձևեր, միջոցներ և մեթոդներ:

10. Հայտորոշիչ գնահատումն իրականացվում է տարբեր ձևերով՝ կախված ուսումնասիրվող առարկայի, թեմայի և սովորողի կամ ուսումնական խմբի տարիքային առանձնահատկություններից:

11. Հայտորոշիչ գնահատման ձևն ընտրում է ուսուցիչը: Հայտորոշիչ գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը՝

1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.

2) բանավոր հարցում.

3) բաց հարցերով քննարկում.

4) այլ:

3. ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՈՒՄ

12. Ձևավորող գնահատումն ուսումնական գործընթացի բաղադրիչ է, որի նպատակն է՝ բացահայտել յուրաքանչյուր սովորողի կամ ամբողջ դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, բացթողումները՝ ուսուցման և ուսումնառության գործընթացի բարելավման համար:

13. Ձևավորող գնահատման խնդիրն է՝ ապահովել՝

1) ներառական, փոխներգործուն ու համագործակցային ուսուցման և ուսումնառության միջավայրի ստեղծումը,

2) սովորողի զարգացմանը նպաստող կառուցողական հետադարձ կապը,

3) սովորողի կողմից ինքնագնահատման և ինքնավերլուծության հմտությունների ձեռքբերումը:

14. Ձևավորող գնահատումը չի ենթադրում տարբեր սովորողների ուսումնական արդյունքների համեմատում:

15. Ձևավորող գնահատումն ապահովում է սովորողի՝ տվյալ պահի անհատական ուսումնական ձեռքբերումների համեմատությունը նրա նախկին ձեռքբերումների հետ:

16. Ձևավորող գնահատումն իրականացվում է 1-12-րդ դասարաններում:

17. Ձևավորող գնահատման ձևերն ու մեթոդներն ընտրում է ուսուցիչը, այն քննարկվում է առարկայական մեթոդական միավորման նիստում, հաստատվում տնօրենի հրամանով և կարող է լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում:

18. Ձևավորող գնահատման ձևերն ընտրելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի յուրաքանչյուր սովորողի առանձնահատկությունները, ուսուցանվող նյութի բովանդակությունը և սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:

19. Ձևավորող գնահատումն իրականացվում է ուսուցչի և սովորողի (ինքնագնահատում, փոխադարձ գնահատում) կողմից:

20. Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.

1) գրավոր կարճ հարցում (թեստ),

2) բանավոր հարցում,

3) գրավոր աշխատանք,

4) գործնական (լաբորատոր) աշխատանք,

5) տնային աշխատանք,

6) նախագծային աշխատանք,

7) քննարկում, բանավեճ,

8) այլ:

21. Ուսուցչի և սովորողների միջև ապահովվում է փոխադարձ հետադարձ կապ, բացահայտվում է, թե առաջադրանքի կատարման ընթացքում սովորողն ինչ դժվարություններ ունի, ինչի հիման վրա էլ որոշվում են ուսուցման և ուսումնառության կազմակերպման հարմարեցումներն ու փոփոխությունները՝ բարելավելու սովորողի ուսումնառության արդյունքները:

22. Ձևավորող գնահատում իրականացնելիս ուսուցչի կողմից օգտագործվում են սովորողի ուսումնական ձեռքբերումները և դժվարությունները նկարագրող վերլուծություններ, մեկնաբանություններ:

23. Ձևավորող գնահատում իրականացնելիս միավոր չի նշանակվում:

4. ԱՄՓՈՓԻՉ ԳՆԱՀԱՏՈՒՄ

24. Ամփոփիչ գնահատման նպատակն ուսումնական առարկաների չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան սովորողի ուսումնական ձեռքբերումների գնահատումն է՝ դասի, թեմայի, կիսամյակի, ուսումնական տարվա ավարտին, ինչպես նաև կրթական աստիճանի ավարտին՝ ամփոփիչ ատեստավորման միջոցով:

25. Ամփոփիչ գնահատումն իրականացվում է միավորային կամ բնութագրող գնահատման միջոցով:

26. Ամփոփիչ գնահատման արդյունքների հիման վրա ձևավորվում է կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատման արդյունքների հիման վրա՝ տարեկան ամփոփիչ գնահատականը:

27. Հաստատության 1-4-րդ դասարաններում և 5-րդ դասարանի առաջին կիսամյակում սովորողի կիսամյակային ամփոփիչ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով: Յուրաքանչյուր սովորողի համար կազմվում է ուսումնական առաջադիմության բնութագիր:

28. Հաստատության 5-րդ դասարանի 2-րդ կիսամյակից մինչև 12-րդ դասարանը ներառյալ ամփոփիչ գնահատումն իրականացվում է միավորային գնահատման միջոցով:

29. Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման ձևերը սահմանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, իսկ մեթոդներն ընտրում է ուսուցիչը, որոնք քննարկվում են առարկայական մեթոդական միավորման նիստում, հաստատվում տնօրենի հրամանով և կարող են լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում:

5. ՄԻԱՎՈՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

30. Միավորային գնահատման կիրառման դեպքում սովորողի ուսումնառության արդյունքների քանակական ցուցիչը գնահատականն է:

31. Գնահատականը գնահատման գործընթացի նիշային արտահայտությունն է՝ միավորներով:

32. Միավորային գնահատումը կիրառվում է 5-րդ դասարանի երկրորդ կիսամյակից սկսած:

33. Միավորային գնահատման դեպքում կիրառվում է սովորողների գնահատման 10-միավորային սանդղակ՝ 1 (մեկ), 2 (երկու), 3 (երեք), 4 (չորս), 5 (հինգ), 6 (վեց), 7 (յոթ), 8 (ութ), 9 (ինը), 10 (տասը), որտեղ որևէ նիշ անբավարար գնահատական չէ:

34. Միավորային գնահատման արդյունքները գրանցվում են էլեկտրոնային դասամատյանում:

35. Միավորային գնահատման անհնարինության դեպքում դասամատյանում դրվում են հետևյալ նշումները՝

1) սովորողի բացակայության դեպքում՝ «բ».

2) միավորային գնահատման հաստատված ձևերը չկատարելու դեպքում՝ «-»:

36. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի ուսումնառության արդյունքների գնահատումն իրականացվում է նույն սկզբունքներով՝ ապահովելով սովորողի անհատական ուսուցման պլանով նախատեսված խելամիտ հարմարեցումները, մատչելի ձևաչափերն ու անհատական օժանդակ սարքավորումներն ու միջոցները:

37. Միավորային գնահատումը կարող է իրականացվել գնահատման հետևյալ ձևերով՝

1) թեստ,

2) բանավոր հարցում,

3) գրավոր աշխատանք,

4) գործնական (լաբորատոր) աշխատանք,

5) նախագծային աշխատանք,

6) այլ:

38. Միավորային գնահատման ցանկացած ձևի կիրառմանը պետք է նախորդեն հայտորոշիչ և ձևավորող գնահատումներ:

39. Սովորողի կիսամյակային գնահատականը ձևավորվում է սույն կարգի 38-րդ կետում սահմանված և ուսուցչի կողմից ընտրված գնահատման ձևերից ստացած գնահատականների միջին թվաբանականով, ինքնաշխատ եղանակով:

40. Սովորողի տարեկան գնահատականը ձևավորվում է կիսամյակային գնահատականների միջին թվաբանականով, ինքնաշխատ եղանակով:

41. Սովորողների գնահատման համար ներկայացված 10 միավորային սանդղակի գնահատման միավորների բնութագրիչներն ընդհանրական են, որոնք հստակեցվում և տեղայնացվում են՝ ըստ առանձին ուսումնական առարկաների և գնահատման տարբեր ձևերի:

Միավորը	**Բնութագրիչները**
1	Ճանաչում է ուսումնական նյութի որոշ պարզ օբյեկտներ, երևույթներ և գործողություններ:
2	Ճանաչում և տարբերակում է ուսումնական նյութի պարզ օբյեկտներ, իրականացնում է պարզագույն գործնական գործողություններ՝ ըստ օրինակի:
3	Հիշողությամբ վերարտադրում է ուսումնական նյութի փոքր մասը, իրականացնում է մտավոր և գործնական պարզ գործողություններ՝ ըստ օրինակի:
4	Հիշողությամբ վերարտադրում է ուսումնական նյութի առնվազն կեսը, օրինակ՝ նկարագրում է ուսումնասիրվող օբյեկտները

	բանավոր կամ գրավոր ձևերով, թվարկում է ընդհանուր և տարբերակիչ հատկանիշներն առանց մեկնաբանության, իրականացնում է մտավոր և գործնական ոչ բարդ գործողություններ՝ ըստ օրինակի:
5	Հասկանալով վերարտադրում է ուսումնական նյութի հիմնական մասը, նկարագրում է ուսումնասիրվող օբյեկտները, թվարկում է ընդհանուր և տարբերակիչ էական հատկանիշներն առանց դրանց բացատրության, իրականացնում է գործնական և մտավոր գործողություններ՝ ըստ հայտնի կանոնների կամ օրինակի:
6	Հասկանալով վերարտադրում է ուսումնական նյութի ամբողջ ծավալի հիմնական մասը, նկարագրում է ուսումնասիրվող օբյեկտները՝ կառուցվածքային կապերն ու փոխհարաբերությունները բացահայտող բացատրական տարրերով, կիրառում է գիտելիքները ծանոթ իրավիճակում ըստ օրինակի՝ բանավոր, գրավոր կամ գործնական վարժությունների, խնդիրների, առաջադրանքների կատարման միջոցով:
7	Հասկանալով վերարտադրում է ուսումնական նյութն ամբողջ ծավալով, կիրառում է սովորածը ծանոթ իրավիճակում, նկարագրում և բացատրում է ուսումնասիրվող օբյեկտները, հայտնաբերում և հիմնավորում է առերևույթ կապերը, փորձառությունից օրինակներ է բերում, կատարում է վարժություններ, խնդիրներ և առաջադրանքներ ծանոթ իրավիճակում՝ ցուցումների հիման վրա:
8	Տիրապետում է ուսումնական նյութին և կիրառում ծանոթ իրավիճակում, մանրամասն նկարագրում է ուսումնասիրության օբյեկտները, բացահայտում է էությունը, հիմնավորում և ապացուցում փաստերով, եզրակացություններ է անում, ինքնուրույն կատարում է առաջադրանքները:
9	Լիարժեք տիրապետում է ուսումնական նյութին, կիրառում է մասամբ փոփոխված իրավիճակում: Առաջադրում է վարկածներ, ուսումնական խնդիրների լուծման նոր ճանապարհներ և ապացույցներ, ցուցաբերում է քննադատական և ստեղծագործական մոտեցումներ:
10	Լիարժեք կիրառում է ուսումնական նյութն անծանոթ իրավիճակներում: Բացահայտում է տարբեր երևույթների ներքին և արտաքին կապերը, օրինաչափությունները, առաջարկում է խնդիրների լուծման ռացիոնալ ուղիներ, կառուցում ալգորիթմներ,

	ցուցաբերում է ստացած արդյունքները վերլուծելու, գնահատելու հմտություններ, ցուցաբերում է քննադատական և ստեղծագործական հմտություններ:

6. ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ԳՆԱՀԱՏՈՒՄ

42. Սովորողի ուսումնական առաջադիմության բնութագիրը կազմվում է սովորողի ուսումնական ձեռքբերումները նկարագրելու, ուսումնառության որևէ փուլի արդյունքներն ամրագրելու նպատակով:

43. Դրական է գնահատվում սովորողի յուրաքանչյուր հաջող քայլ, ինքնուրույն հարցի պատասխանը գտնելու յուրաքանչյուր (նույնիսկ անհաջող) փորձ: Խրախուսվում են նախաձեռնողականության դրսևորումը, հարցին պատասխանելը, խմբով աշխատելու ցանկությունը և ուսումնական գործընթացին ակտիվ մասնակցության այլ դրսևորումները:

44. Սովորողի ուսումնական ձեռքբերումների գնահատման առանձնահատկություններն են՝

1) գնահատվում է ոչ միայն արդյունքը, այլև սովորողի գործունեությունը,

2) գնահատվում են սովորողի անհատական ձեռքբերումները, ոչ թե այն, ինչը սովորողը չի արել, չի սովորել, չի հիշել,

3) հաշվի առնելով ուսումնական նյութի առանձնահատկությունները՝ տարբեր առարկաների գնահատման ձևերը կարող են տարբերվել:

45. Բնութագրող գնահատման ընթացքում ուսուցիչո արձանագրում է՝

1) սովորողի կողմից կրթական տեղեկատվության ընկալման և մշակման արագությունը,

2) առարկայական գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների յուրացումը,

3) տեղեկատվության մտապահումը,

4) աշխատանքի ճշգրիտ և մանրակրկիտ կատարումը,

5) սովորողի ուսումնառության մոտիվացիան,

6) սովորողի ինքնուրույնությունը,

7) սովորողի ինքնագնահատման ունակությունը:

46. Սովորողի ուսումնական առաջադիմության բնութագիրը ներառում է նրա ուսումնական գործունեության արդյունքները տվյալ դասարանի առարկայացանկում ընդգրկված ուսումնական բոլոր առարկաներից:

47. Բնութագրող գնահատումն իրականացվում է՝

1) 1-4-րդ դասարանների կիսամյակների և 5-րդ դասարանի առաջին կիսամյակի ավարտին.

2) տարրական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ) կրթական ծրագրի ավարտին:

48. Տարրական դպրոցի յուրաքանչյուր սովորողի ուսումնառության կիսամյակային արդյունքների ամփոփման նպատակով կազմվում է ուսումնական առաջադիմության բնութագիր բոլոր առարկաներից:

49. Սովորողի ուսումնական ձեռքբերումներն արձանագրելու համար հիմք են ուսումնական առարկաների չափորոշիչներով սահմանված վերջնարդյունքները:

50. Բնութագրող գնահատման չափանիշները հստակեցվում և տեղայնացվում են ըստ առանձին ուսումնական առարկաների:

51. Ամփոփիչ գնահատման ձևերից սովորողների ուսումնառության արդյունքները գրանցվում են Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում և կցվում են սովորողի անձնական գործին:

Ձեր բարեկամ՝
Թամարա Թովմասյան

Օգտագործած գրականություն

1. Դավիթ Գասպարյան, Ողբերգական Չարենցը, Ե., 1990: Սուրեն Աղբալյան, Եղիշե Չարենց, գիրք 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1973:
2. Թամարա Թովմասյան, Գրականություն 7, Մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար, Եր., «Մարի», 2019:
3. Թամարա Թովմասյան, Հայ գրականություն, Մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար, Եր., «Էդիթ Պրինտ», 2023:
4. Գայանե Մկրտչյան, Թամարա Թովմասյան, Հայոց լեզու 7, Մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար, Եր., «Աստղիկ գրատուն», 2015:
5. Գայանե Մկրտչյան, Թամարա Թովմասյան, Հայոց լեզու 8, Մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար, Եր., «Կռունկ տպագրատուն», 2016:
6. Գայանե Մկրտչյան, Թամարա Թովմասյան, Հայոց լեզու 9, Մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար, Եր., «Էդիթ Բրինտ», 2022:
7. Թամարա Թովմասյան, Հայոց լեզու 10, Մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար, Եր., «Էդիթ պրինտ», 2022:
8. Սուրեն Աղբալյան, Եղիշե Չարենց, գիրք 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1973:
9. Հարություն Սուրխաթյան, Գրականության հարցեր, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, 1970:
10. Հարություն Սուրխաթյան, «Գրական գոհարներ» քրեստոմատիա, Երևան, 1922:
11. «Ով ով է: Հայեր» հանրագիտարան, հատոր երկրորդ , գլխ. խմբ.- Հովհանես Այվազյան, «Հայկական հանրագիտարան» հրատարակչություն, Երևան, 2007:
12. Ջրբաշյան Էդուարդ., Ե. Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում» բանաստեղծությունը, Ե., 2003:
13. Հարություն Սուրխաթյան, Գրականության հարցեր, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, 1970:
14. Հարություն Սուրխաթյան, «Գրական գոհարներ» քրեստոմատիա, Երևան, 1922:

15. «Ով ով է: Հայեր» հանրագիտարան, հատոր երկրորդ , գլխ. խմբ.- Հովհանես Այվազյան, Հայկական հանրագիտարան», Երևան, 2007:
16. Ջրբաշյան Էդուրդ., Ե. Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում» բանաստեղծությունը, Ե., 2003:

Թամարա Թովմասյան

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

7

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Հրատարակչության խմբագիր՝
Գալյա Հովհաննիսյան

ԹԱՄԱՐԱ ԹՈՎՄԱՍՅԱՆ

7 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մեթոդական ուղեցույց